ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Շիրինյան Լևոն
Սուքիասյան Հայկ
Օրդուխանյան Էմիլ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԼԻՄՈՒՇ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018

INSTITUTE OF PHILOSOPHY, SOCIOLOGY AND LAW OF
NAS RA

Shirinyan Levon
Sukiasyan Hayk
Ordukhanyan Emil

SOUTH CAUCASUS IN THE CONTEXT OF CONSOCIATIONAL DEMOCRACY

YEREVAN 2018

ИНСТИТУТ ФИЛОСОФИИ, СОЦИОЛОГИИ Н ПРАВА НАН РА

Ширинян Левон
Сукиасян Айк
Ордуханян Эмиль

ЮЖНЫЙ КАВКАЗ В КОНТЕКСТЕ КОНСОЦИАТИВНОЙ ДЕМОКРАТИИ

ЕРЕВАН 2018

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66
Շ 646

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ
Երաշխավորված է տպագրության ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Գրախոսներ՝
Աշոտ Ենգոյան (քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)
Աշոտ Ալեքսանյան (քաղ. գիտ. դոկտոր, դոցենտ)

Գլխավոր խմբագիր՝
Տիգրան Քոչարյան (քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

Շիրինյան Լ., Սուքիասյան Հ., Օրդուխանյան Է.
Շ 646 Հարավային Կովկասը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում/
Լ. Շիրինյան, Հ. Սուքիասյան, Է. Օրդուխանյան .- Եր.: Լիմուշ, 2018.- 136 էջ:

ԽՍՀՄ լուծարումից հետո Հարավային Կովկասում ներդրված ժողովրդավարության մոդելի անհաջողությունները և հասարակությունների ճգնաժամային զարգացումները, ինչն ամենուր ծնում էր ավտոկրատիաներ և էթնոկրատիաներ, հետազոտական խմբին հարկադրեց որոնել և գտնել ժողովրդավարության այլընտրանքային հայեցակարգեր՝ արդիականացման և անվտանգության հարացույցների շրջանակներում կիրարկման տեսական և գործնական հեռանկարով: Նշված խնդիրների պարտադրանքն էլ հանգեցրեց կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ընտրությանը, քանզի այն միտված է տարածաշրջանում առաջացնել ներդաշնակ համակեցություն պետությունների և ժողովուրդների միջև, որոնք ունեն մշակութային և էթնիկ ինքնություն:

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը Հարավային Կովկասի բազմական հասարակությունների (Վրաստան, Ադրբեջան) բոլոր գլխավոր սեգմենտներին (հատված) հնարավորություն է տալիս ներկայացուցչականության հիմքով համատեղ մասնակցել պետության կառավարմանը՝ պահպանելով իրենց մշակութային, էթնիկ, ազգային, լեզվական, կրոնական և այլ ինքնատիպությունը:

Միաժամանակ ազգային միատարր հասարակությունները (Հայաստան) ևս ընդլայնված ներկայացուցչականության խնդիր ունեն, ուստի կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելը հասարակության հիմնական ստրատաներին (շերտ) հնարավորություն է տալիս իրացնել իրենց շահերն ու ներուժը: Դա պարտադրում է հաղթահարել պլուտոկրատիայի և լութոկրատիայի բացարձակ տիրապետությունը: Կոնսոցիատիվ ժողովրդավարության գրավչությունը և կիրառական նշանակությունը որևէ սեգմենտի կամ ստրատայի գերիշխանության հաղթահարման հեռանկարի մեջ է:

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66

ISBN 978-9939-64-303-8

© ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ
ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 5
Ընկերակցային ժողովրդավարության այսրկովկասյան թրենդը 15

ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶՄԱԿԱՆ (PLURAL) ԵՎ ՄԻԱՏԱՐՐ (UNITARY) ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 31
Կոնսոցիատիվ ժողովրդավարություն..... 40
Մարտահրավեր ժողովրդավարության հոռետեսներին 53
Բազմական հասարակություն 54
Կոնսոցիատիվ ժողովրդավարության թերությունները 55
Կոնսոցիատիվ մեթոդը և ունիտար հասարակությունները 69

ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱԶՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ 82
Քաղաքական մշակույթի ազդեցությունը քաղաքական կայունության վրա..... 84
էթնոկրատիան որպես ժողովրդավարության խոչընդոտ.....100
Մշակութային ռելյատիվիզմը որպես էթնոկրատիայի հաղթահարման միջոց 110
Կոնսոցիատիվ մոդելը որպես այլընտրանքային ժողովրդավարություն բազմական հասարակություններում 115

ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

ԽՍՀՄ լուծարումը (Բելովեժյան համաձայնություն, 8 դեկտեմբերի 1991թ.) և սոցիալիզմի համաշխարհային համակարգի քայքայումը (արձակումը) ազատություն և անկախություն ստացած երկրների համար հիմնախնդիր դարձրին զարգացման ուղու ընտրությունը, որն, ի վերջո, հանգեց ժողովրդավարության առկա պրակտիկաներին (մոդելներին)՝ կապված տվյալ երկրների ու այնտեղ բնակվող ժողովուրդների առաջընթացի կենսական պահանջմունքների բավարարման հետ:

Հիմնախնդիրը սրվում է հատկապես մեր օրերում, երբ նկատի ենք առնում, մասնավորապես, հետխորհրդային քաղաքական տարածքի երկրների ժողովրդավարությունների գրեթե անլուծելի հակասությունների դրսեվորումները և տարբեր սաստկության հակամարտությունների առկայությունը՝ տվյալ պարագայում Այսրկովկասում (Հարավային Կովկաս, Անդրկովկաս): Ընդսմին, հիմնախնդիրն ունի անխուսափելիորեն անվտանգության բաղադրիչ, ինչպես ներպետական, այնպես էլ տարածաշրջանային առումներով: Ակնհայտ է, որ հետխորհրդային անկումի տարիներին Այսրկովկասի երկու պետություններում՝ Ադրբեջանում և Վրաստանում, անտեսելով ժողովրդավարության տարրական պահանջները (իրավահավասարություն բազմական՝ պլյուրալ հասարակության բոլոր հատվածների՝ սեգմենտների համար), ըստ էության, դրվեց *էթնոկրատ*[*] պետությունների ձևավորման հիմքը: Տվյալ երկրների «տիտղոսակիր ազգերը» իրենց բազմա-

[*] Էթնոկրատիա - իշխանության և պետական կառավարման մարմիններում որևէ էթնիկական խմբի էլիտաների գերակայությունը կամ անբաժան գերիշխումը, որն իր գործունեությունն իրականացնում է և առաջնորդվում տիտղոսակիր կամ արտոնյալ էթնիկական միավորի շահերի բավարարումով: Հանգամանորեն տե՛ս Тощенко Ж.Т. Этнократия: История и современность. М. 2003.

կան հասարակություններում, ԽՍՀՄ լուծարման հետևանքով, լայնորեն օգտվելով «իրավահավասարության և ազգերի ինքնորոշման իրավունքից», ընթացս նույն իրավունքը մերժեցին Ադրբեջանի և Վրաստանի ոչ «տիտղոսակիր» ազգերին: Գործընթացը արտառոց էր (և է՛) հատկապես Ադրբեջանի պարագայում եկվոր «թյուրք տիտղոսակիր» տարրը ինքնորոշման հիշյալ իրավունքը ի սկզբանե մերժել ու մերժում (ժխտում) է բնիկ (ավտոխտոն՝ անդրենածին) ժողովուրդների՝ թալիշ, լեզգի և ուրիշների համար:

Ադրբեջանի թյուրքական պետականությունը հրահրելով էթնիկական ջարդեր, օսմանյան կառավարիչների անպատիժ մնացած և, ըստ էության, խրախուսված փորձի օրինակով, հազարավոր տարիներով իրենց հայրենիքներում ապրող ժողովուրդներին պարտադրում է ուծացում և նրանց դրդում արտամղման:

Ճշգրիտ է արտահայտվում Վլ. Վոլկովը, գրելով, որ մինչ կցրվեին ԽՍՀՄ քայքայման հետևանքով առաջացած ամպի քուլաները, պարզվեց, որ հետամբողջատիրական շատ տարածքներում գերակշռում էին «ամենևին էլ ոչ ազատական-ժողովրդավարական, այլ ազգայնական գաղափարներն ու արժեքները»[1]:

Համաձայն նույն հեղինակի, այդ մուտանտը՝ էթնոկրատիան, տևական ժամանակով հասունացել էր ավտորիտար-բյուրոկրատական համակարգի «ինկուբատորում», այդ սոցիալ-քաղաքական հրեշի հատկանիշները ձևավորվել էին տվյալ համակարգի հետ կապված բազմաթիվ հանգամանքների ազդեցության տակ: Խորհրդային «ինստիտուցիոնալ» համակեցության տարիներին, նկատում է Վլ. Վոլկովը, «ազգային մտակաղապարները, արքայիկ էթնիկական նախապաշարումները չէին հաղթահարվել, այլ միայն ձեռք էին բերել նուրբ և թաքուն ձևեր: Այդպես պատրաստվեց ներկա էթնոկրատիայի համար «հոգևոր» հող»:[2]

---

[1] Волков В. Этнократия - непредвиденный феномен посттоталитарного мира - «Полис», 1993, № 2, с. 40.

[2] Նույն տեղում, էջ 43:

«Էթնոկրատիայի» տիպական օրինակ է բոլշևիկ առաջնորդների կողմից ժողովուրդների ազգային զգացմունքների հանդեպ դրսևորած արհամարհանքն ու ծայրահեղ անպատկառությունը՝ հանուն արտաքին քաղաքական նպատակների և այլ այսրոպեական շահերի: Այդ շրջագծում է, որ նա ցույց է տալիս բոլշևիզմի հանցագործ էությունը, երբ վերջինս քեմալականների հետ հարաբերություն հաստատելու համար մանրադրամ դարձրեց «հայկական հողերը», որոնց «մի մասից (ռուսական կայսրության կազմի մեջ մտնող Կարսի և Արդահանի շրջանները) լենինյան կառավարությունը հրաժարվեց Թուրքիայի օգտին, մյուս դեպքում համաձայնեց դրանք ընդգրկել Ադրբեջանի կազմ: Այդպես ծնվեց Լեռնային Ղարաբաղի խնդիրը»:[3]

Այլ ընթացք ունեցավ քաղաքական զարգացումը հետխորհրդային Հայաստանում՝ մշակութային, կրոնական և այլ հատվածների (սեգմենտների) միատարրության և ազգային էլիտայի չկազմակերպվածության պայմաններում: Ժողովրդավարության կառուցակարգերի թույլ զարգացվածությունն ու խորհրդային ավանդույթների գերակայությունը ծնեցին *պլուտոկրատիա* և պլուտոկրատական հասարակություն:* * Սա, թերևս, հանդես է գալիս որպես հետխորհրդային փոխակերպման (տրանսֆորմացիա) բացասական օրինակ (դրսևորում), օլիգարխիայի (հասարակության կազմակերպման ձև) մասնավոր դեպք, նրա այլակերպում: Հայտնի է, որ այս պարագայում հասարակության բոլոր անդամների շահերը առանձին-առանձին և հավաքականորեն ենթարկվում են պլուտոկրատական կապիտալի շահերին, որի հաղթահարման գործում էական դերակատարություն է

---

[3] Նույն տեղում, էջ 42:

* * Տե՛ս Гевелинг Л. К. политической истории плутократии (основы и параллельные формы организации власти в Западной Африке). - «Вестник московского университета. Серия 13. 1998, N3, с. 21-37. Гевелинг Л. Клептократия. Социально-политическое измерение коррупции и негативной экономики. Борьба Африканского государства с деструктивными формами организации власти. М., 2001. Քսենոֆոն. Սոկրատյան երկեր. Թարգմ. հին հուն., Եր., 2001: Крухмалев А. Плутократия как феномен трансформирующейся России. Политическая социология. М., 2010.

վերապահված, հատկապես ժողովրդավարությանը: Քանզի, ըստ Ի. Կորոտեցի, ժողովրդավարությունն «ունի մի շարք ընթացակարգեր՝ ուղղված գերհարուստների իշխանության սահմանափակմանը»:[4]

Ժողովրդավարության այն տարբերակը, նրա այն կառուցակարգերը, որոնք կյանքի են կոչվել բազմական (պլյուրալ) և բազմամշակույթ այնպիսի հասարակությունների (պետությունների) քաղաքական պրակտիկաներում, ինչպիսիք են՝ Ավստրիան, Բելգիան, Իսրայելը, Նիդերլանդները և այլ երկրներ, այսօր էլ կարող են օրինակ ծառայել Այսրկովկասի երեք պետությունների համար և նրանց բազմական հասարակություններին, այնպես ինչպես 20-րդ դարի 1970-80 ական թվականներին Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդներին, որոնք ձգտում էին ստեղծել կայուն ժողովրդավարական վարչակարգեր:

Ինչևէ, այդ մոդելը (ժողովրդավարության տարբերակը) հոլանդական ծագումով ամերիկացի քաղաքագետ Արենդ Լեյփհարթի *Consociational Democracy*-ն է*** կամ *Power-Sharing*-ի (համատեղ իշխանություն, մասնակցություն իշխանության իրականացմանը՝ соучастие в отправлении власти) տեսությունը, որի հիմնական խնդիրը հասարակության տարբեր հատվածների (սեգմենտների) «կուլտուր-պլյուրալիստական անջրպետի» հաղթահարման համար

---

[4] Коротец И. Плутократия.- Политология. Краткий энциклопедический словарь – справочник. Ростов на Дону, 1997, с. 361.

*** Ա. Լեյփհարթը հայտնում է, որ *consociational* հասկացությունը կազմված է *consociatio* բառից, որը վերցված է Յոհաննես Ալթուզիուսի «Politica methodice digesta et exemplis sacris et profanis illustrata (1603). Camb. 1932 (Политика, изложенная методически и проиллюстрирован примерами Божественного и человеческого, *Քաղաքականություն*՝ շարադրված մեթոդապես և լուսաբանված է Աստվածայինի և մարդկայինի օրինակներով, 1603)» աշխատանքից: Նկատենք, որ, մասնավորապես, ռուսական քաղաքագիտական գրականության խոսույթում հասկացությունը փոխադրվում է որպես «սոցիալական համաձայնության ժողովրդավարություն» (տե՛ս Баталов Э. Проблема демократии в американской политической мысли XX века, М., 2010, 205): Է. Բատալովը Ա. Լեյփհարթի առաջադրած մոդելը անվանում է «գործակցության ժողովրդավարություն» («демократия участия») (նույն տեղում, էջ 205):

«որոշակի պայմանների» ուսումնասիրությունն է (տե՛ս Ա. Լեյփ-հարթի հիմնական «Democracy in Plural Societies: a comparative exploration, 1977» աշխատանքը): Խնդիրը ցույց տալն է, ըստ Ա. Լեյփհարթի, որ «Ժողովրդավարական կառավարման, բազմական հասարակությունների պայմաններում, հասնելը և պահելը թեկուզև *դժվար է*, սակայն ամենևին էլ *անհնար չէ*:[5]

Տվյալ պարագայում գլխավոր դժվարությունը հետևյալի մեջ է. «Ինչպես համատեղել ժողովրդավարությունը հասարակության ներքին խորը տարբերությունների հետ»[6], որը դարձել է, ըստ Ա. Լեյփ-հարթի, ժամանակակից աշխարհում «գլխավոր մարտահրավեր»:

Իսկ ո՞րն է «կոնսոցիատիվ ժողովրդավարությունը», ինչպե՞ս այն բնութագրել: Հարցադրմանը Արենդ Լեյփհարթը չի պատասխանում: Ավելին: Նա ուղղակիորեն հայտարարում է. «Ժողովրդավարությունը մի հասկացություն է, որը բացարձակապես (решительно) չի ենթարկվում սահմանման»:[7] Թվում է տարօրինակ է, սակայն քաղաքագետ-փիլիսոփա Է. Բատալովը փորձում է ի մի բերել և ձևակերպել ժողովրդավարության, այդ թվում ընկերակցային (consociational) ժողովրդավարության, լեյփհարթյան ըմբռնումը զուտ բովանդակային առումով. «*դա կայուն, լեգիտիմ սահմանադրական (խորհրդարանական կամ նախագահական) կարգ է, որի դեպքում իշխանության ընտրովի մարմինների առկայությունը չի խանգարում էլիտաներին հասարակական կյանքում խաղալ իշխող դեր* (ընդգծումը Է.Բատալովինն է)»:[8]

Եվ ահա ժողովրդավարության վերոշարադրյալ ըմբռնման (հասկացողության) համատեքստում էլ, ապավինելով Ռոբերտ Դահլի

---

[5] Лейпхарт А. Демократия в многосоставных обществах. Сравнительное исследование. Пер. с англ., М., 1997, с. 36

[6] Նույն տեղում, էջ 26:

[7] Նույն տեղում, էջ 38:

[8] Баталов Э. Проблема демократии в американской политической мысли XX века. М., 2010, с. 38.

«պոլիարխիա»յի[9] հատկանիշներին, Ա. Լեյփհարթը փորձում է թափանցել plural society (բազմական հասարակության) սեգմենտար (հատվածական) կառուցվածքի ներքին շերտերը, որոնելով այնտեղ տարբեր հատվածների հավասարակշիռ համակեցություն և նրանց շահերի ներդաշնակություն: Ընդսմին, հատվածական տարբերությունները կարող են ունենալ *կրոնական, գաղափարախոսական, լեզվական, տարածաշրջանային, մշակութային, ցեղային* (расовую) կամ *էթնիկական* (ընդգծումներն իմն են.- Լ.Շ.) բնույթ», որտեղ «քաղաքական կուսակցությունները, շահերի խմբերը, հաղորդակցության միջոցները, դպրոցները, կամավորական միությունները միտում ունեն կազմակերպվել այն գծերով, որոնք կրկնում են հասարակության ներսում գոյություն ունեցող *ուրվագծերի սահմանները* (ընդգծումն իմն է – Լ.Շ.): Բնակչության այն խմբերը, որոնք առանձնանում են նշված տարբերություններով, կանվանվեն բազմական հասարակության հատվածներ (*սեգմենտներ*)» (Հարի Էկստայն):[10]

Արտահայտվելով ժողովրդավարության մասին առհասարակ, ընկերակցային ժողովրդավարության մոդելում, մասնավորապես Ա. Լեյփհարթը շեշտադրում է նրա կառուցակարգում երկու հիմնական պահ, հատկապես՝ «հատվածական (սեգմենտար) տարբերությունները», այսինքն՝ բազմական հասարակության բնակչության խմբերի տարբերությունները և նրա հիմնական խմբերը (սեգմենտները) ներկայացնող էլիտաների քաղաքական համագործակցությունը:

Ասվածի համատեքստում, համաձայն Բատալովի, ամերիկացի քաղաքագետի առաջարկած ժողովրդավարության մոդելներից մեկի՝ ընկերակցայինի տեսության էությունը հանգում է հետևյալին. բազմական (պլյուրալ) հասարակության մեջ, որտեղ «հատվածների» դիրքերը բավականին ուժեղ են և կայուն, կայուն ժողովրդավարության պայմանը ոչ թե մեծամասնության կառավարումն է, որին հակադրված է ուժեղ ընդդիմությունը, այլ *քաղաքական իշխանու-*

[9] Dahl R. Polyarchy: Participation and Opposition: New Haven, 1971, p. 1-9, 231-249.
[10] Лейпхарт А. Демократия в многосоставных обществах, с. 38.

թյունը՝ այդ հատվածների ներկայացուցիչների կարգավորվող, հավասարակշռվող, ինստիտուցիոնալ կերպով ձևակերպված լեգիտիմ մասնակցության համակարգը:

Բնութագրելով ընկերակցային ժողովրդավարությունը, ըստ էության, Ա. Լեյփհարթը ցույց է տալիս չորս հատկանիշներ երկու խմբում, որոնք տվյալ մոդելը վերածում են համակարգի:

I. Գլխավոր հատկանիշներ

մեծ կոալիցիա

հատվածների (սեգմենտ) ինքնավարություն

II. Օժանդակ հատկանիշներ

համամասնականություն

արգելքի (վետո) իրավունք

Թվում է, թե առաջադրված մոդելը ամբողջական է և սպառիչ: Մետատեսության մակարդակում թերևս դա այդպես էլ է: Սակայն, խնդրի մանրակրկիտ և համակողմանի քննությունը ցույց է տալիս, որ այն հանգում է *համակարգաստեղծ* տարրի, տվյալ պարագայում հատկանիշներից մեկի՝ «հատվածների (սեգմենտների) ինքնավարության» հատկանշմանը: Ընդսմին, նկատենք, որ ժողովրդավարության մոդելներից մեկի հեղինակը, նույն Ա. Լեյփհարթը, XX դարի 70-ական թվականներին կանխատեսել էր «էթնիկական և մյուս հա-

կասությունների բացառապես կարևոր դերը՝ որպես հասարակության հակամարտությունների աղբյուր», որոնք 70-ական թվականներից ստվերվեցին (затенялись) սառը պատերազմի դարաշրջանի գլոբալ հակասությամբ: Իսկ վերջինիս ավարտով «էթնիկական և այլ հակասությունները դարձան աշխարհում հակամարտությունների հիմնական աղբյուրները»: Այս փոփոխությունները, արձանագրում է Ա. Լեյփհարթը, «համընկան ժողովրդավարացման հզոր միտումի հետ»[11], Սեմյուել Հանթինգթոնի ձևակերպմամբ, ծնեցին «ժողովրդավարացման երրորդ ալիքը»:[12] Տվյալ իրականությունն է, որ թելադրում է, եզրակացնում է Ա. Լեյփհարթը, «ժողովրդավարական ինստիտուտների ստեղծումը, որոնք կարող էին դարձնել նման հակամարտությունները կառավարելի»: Եվ գլխավոր մարտահրավերն էլ այն է, թե ինչպես կարողանալ «*միավորել ժողովրդավարությանը հասարակության խորքային տարբերությունների հետ*»:[13] Քանզի, ակնհայտ է, որ ժողովրդավարության ընկերակցային տարբերակը կարող է կյանքի կոչել հասարակության նշմարելի *հատվածների* (էթնիկական, մշակութային, կրոնական և այլն) *իրավահավասարությունն ու ներդաշնակ համակեցությունը:* Ուստի, ինչպես մյուս երեք հատկանիշները, այնպես էլ չորսի ստորաբաժանումը գլխավորի և օժանդակի, ծառայում են հենց հիմնական խնդրի լուծմանը՝ հատվածների *համարժեքությանն ու ներդաշնակ համակեցությանը:*

Ահա այս պարագան է, որ թույլ է տալիս ընկերակցային ժողովրդավարությունը դիտել որպես *մասնակցային* ժողովրդավարություն՝ демократия соучастия:[14] Բնականաբար, խոսքը հատված-

---

[11] Лейпхарт А. Демократия в многосоставных обществах, с. 26.

[12] Ժողովրդավարացման երրորդ ալիքն իր ակունքում ունիՕլվին Թոֆլերի «Երրորդ ալիք» (1980) երկը: Սեմյուել Հանթինգթոնն իր հայեցակարգը առաջադրել է «Ժողովրդավարական երրորդ ալիքը» հոդվածում՝ 1991թ. գարնանը «Ժողովրդավարական ամսագրում» և «Երրորդ ալիք. ժողովրդավարացումը XX հարյուրամյակի վերջին» (1991) ուսումնասիրության մեջ:

[13] Лейпхард А. ..., с. 26.

[14] Տես, Баталов Э. Проблема демократии в американской политической мысли, с. 25.

ների մասնակցությամբ գործառնվող գործընթացի մասին է, որն էլ ժողովրդավարության մոդելին կարող է հաղորդել *կայունություն* (համակարգի պահպանություն, քաղաքացիական կարգ, լեգիտիմություն և արդյունավետություն):[15]

Ընկերակցային ժողովրդավարությունը ամրագրում է ուժերի հաշվեկշռի բազմաչափությունը, պետության հարաբերականորեն փոքր չափերը,* *** վերհատվածական կողմնորոշումները, հատվածների մեկուսացվածությունը, նրանց էլիտաների կողմից հակամարտությունների կարգավորման պատմական ավանդույթների արժեքականությունը և, իհարկե, հասարակության խաչաձևվող սոցիալական դերերի ավելի նվազ նշանակությունը:[16]

Այս համալիրի շրջանակներում Ա. Լեյփհարթն առանձնացնում է որոշ գործոնների դերակատարությունը. ուժերի հաշվեկշիռը՝ մի քանի խմբերի (սեգմենտների) ուժերի մոտավոր հավասարությունը, հատվածական կուսակցությունների առկայությունը, որը մեծ կոալիցիաներին մասնակից լիդերների առաջադրման հուսալի մեխանիզմ է,[17] սեգմենտար մեկուսացվածությունը՝ բազմական (պլյուրալ) հասարակության ինստիտուտները բյուրեղանում են հատվածական բեկման գծերում (սահմաններում), չափավորության (умеренность) և փոխզիջման պատմական ավանդույթի առկայությունը և տարաձայնությունների կարգավորումը էլիտաների մակարդակում:[18]

Թերևս, կարելի է քննել և վերլուծել ընկերակցային ժողովրդավարության տեսության թերություններն ու վրիպումները ևս, ինչպես նաև մատնացույց անել դժվարությունները: Սակայն, քանի որ այդ աշխատանքը կատարված է համապատասխան գրականության մեջ

---

[15] Лейпхард А. Демократия в многосоставных обществах, с. 39.

**** Ընկերակցային ժողովրդավարության պետության օպտիմալ չափերին Ա. Լեյփհարթը չի անդրադառնում, սակայն նշում է, որ իր տեսության էքսպերիմենտալ ատաղձը կազմել են «փոքր պետությունները»՝ Ավստրիա, Բելգիա և այլն:

[16] Лейпхарт А. ..., с. 90.

[17] Лейпхарт А. ..., с. 98.

[18] Նույն տեղում, էջ 136-137:

բավարար չափով, դա ինձ թույլ է տալիս շրջանցել հարցը*****՝ կենտրոնանալով այն խնդիրների վրա, որոնք կանխորոշում են համաշխարհային քաղաքակրթության զարգացումը, եթե այդ քաղաքակրթությունը շարժվում է դեպի ժողովուրդների արդար համակեցություն և ներդաշնակ զարգացում՝ նշանակում է ժողովրդավարական առաջընթաց: Քանզի, ինչպես իրավացիորեն եզրակացնում է Լ. Սմորգունովը, ժողովրդավարության համաձայնողական (կոնսենսուսային) մոդելը բնորոշվում է «*ներառվածությամբ, վեճերով և փոխզիջումներով*» (ընդգծումն իմն է – Լ.Շ.):[19]

***** Տես օրինակ՝ Баталов Э. Проблема демократии в американской политической мысли XX века, с. 209-212, Ормонбеков Ж. Теория консоционализма Аренда Лейпхарта- «Казанский федералист», 2007, №1-2 (21-22), Սուքիասյան Հ. Արենդ Լեյփհարթի «կոնսոցիատիվ ժողովրդավորությունը», Պատմություն և Հասարակագիտություն, Տարեգիրք N1, Հայկարլիկ տպարան, Երևան, 2015, էջ 268-285, Нджоку Р. Что такое консоционализм? / Р. Нджоку [Электронный ресурс]. – http://poli.vub.ac.be/publi/orderbooks/federal_r/12njoku.pdf

[19] Сморгунов Л. Сравнительная политология, М., 2012, с. 159.

Ընկերակցային ժողովրդավարության այսրկովկասյան թրենդը

[պետք է] «յուրաքանչյուր ժողովրդի հնարավորություն տրվի ազատ ինքնորոշվելու, ինչպես նաև իրավունք՝ հետևելու իր ընտրած զարգացման ուղուն առանց արգելքների և առանց սպառնալիքի, թույլերին նույնպես, ինչպես և ուժեղներին».

. . . «ոչ մեկը իրավունք չունի ժողովուրդներին հանձնելու մի պետությունից մյուսին, կարծես թե նրանք իրեր լինեն»:

Վուդրո Թ. Վիլսոն

1967 թվականից քաղաքագիտության տեսաբանների առջև դրվեց անկյունաքարային հարց՝ հասարակության իրական առաջընթացի վերաբերյալ: Հիմնախնդիրը ձևակերպվեց ծագումով ամերիկյան քաղաքագետ Արենդ Լեյփհարթի կողմից. «ինչպե՞ս համատեղել ժողովրդավարությունը հասարակության ներքին տարբերությունների հետ»: Սա նշանակում էր կասկած ժողովրդավարության *վեստֆալյան* մաժորիտար մոդելի հանդեպ, և վստահություն, մասնավորապես, բազմական (plural) հասարակության խորքային ու իրական վերափոխումների հանդեպ: Այս հարցադրումից էր, որ ծնվեց ընկերակցային (կոնսոցիատիվ) ժողովրդավարության տեսությանն ու կիրառված փորձի ընդհանրացումը՝ տվյալ տեսության շրջանակներում:

Ըստ էության Ա. Լեյփհարթը սահմանեց ժողովրդավարության գլոբալ առաջադրանքը. ա) Ինչպե՞ս առաջացնել ներդաշնակ (հարմոնիկ) հասարակություն որևէ երկրի (պետության) շրջանակներում, բ) ինչպե՞ս կարողանալ համադրել ժողովուրդների ու պետությունների հավասարակշիռ փոխհարաբերությունները:

Ենթադրվում էր, բազմամշակույթ հիմքի վրա գոյություն ունեցող հասարակություններում հակամարտության լուծման կարելի է հասնել ունիվերսալ (համապարփակ) ռազմավարության՝ ժողովրդավարության ընկերակցային (կոնսոցիատիվ) մոդելի կիրառմամբ:

Ա. Լեյփհարթը գտնում էր, որ բազմական հասարակությունն-

ռում ժողովրդավարության կառավարումը «թեկուզև *դժվար է*, բայց ամենևին էլ *անհնար չէ*»[20]: Ուստի «ընկերակցային ժողովրդավարությունը մնում է բազմակազմ հասարակությունների համար ժողովրդավարության ամենահեռանկարային ձևը և ժողովրդավարության միակ հնարավոր ձևը այն հասարակությունների համար, որոնք տարբերվում են բազմականության բարձր աստիճանով»[21]:

Ակնհայտ է, որ Ա. Լեյփհարթը մտահոգված է էթնիկական հակամարտությունների կարգավորմամբ, երբ ցույց է տալիս ժողովուրդների էթնիկական և այլ տարբերությունների բացառիկ դերը որպես հակամարտությունների աղբյուրի[22]: Անվիճելի է, որ որպես նմուշ-երկրներ հանդես են գալիս ինչպես մերօրյա Ադրբեջանը,այնպես էլ Վրաստանը, իսկ ստրատաների (շերտերի) կիրառության տեսանկյունից պայմանականորեն դիտված կարող է հանդես գալ Հայաստանի Հանրապետությունը, որտեղ, դժբախտաբար, ձևավորվել է *պլուրոկրատական* հասարակություն *լութոկրատիայի* բացարձակ տիրապետությամբ: [Թավշյա հեղափոխությունը (2018, ապրիլ-մայիս) ցույց է տալիս կնճռոտ հիմնախնդրի լուծման ուղիները]: Ա. Լեյփհարթը գտնում է, որ բազմական հասարակությունները (plural society) նրանք են, որոնք բաժանված են «սեգմենտար (հատվածական) տարբերություններով»: Այդ տարբերությունները «կարող են լինել կրոնական, գաղափարախոսական, լեզվական, տարածաշրջանային, մշակութային, ռասայական կամ էթնիկական բնույթի»[23]: Իսկ ընկերակցային ժողովրդավարությունը «սեգմենտար (հատվածային) պլյուրալիզմն է, որ իր մեջ է ընդգրկում բազմակազմ հասարակության բոլոր հնարավոր բաժանման գծերը՝ գումարած *համաձայնության* (ընդգծումն իմն է՝ Լ.Շ.) ժողովրդավարությունը»[24]:

---

[20] Лейпхарт А. Демократия в многосоставных обществах. Сравнительное исследование, М. 1997, с. 36.

[21] Лейпхарт А. Демократия в многосоставных обществах, с. 34.

[22] Նույն տեղում, էջ 24:

[23] Նույն տեղում էջ 38:

[24] Նույն տեղում էջ 40:

Ա. Լեյփհարթը ցույց է տալիս նոր ընկերակցային ժողովրդավարության իրացման գաղափարն ու մեխանիզմը: Նա գրում է. «քաղաքական կուսակցությունները, շահերի խմբերը, հաղորդակցության միջոցները, դպրոցները, կամավորական միավորումները միտում ունեն կազմակերպվելու այն գծերով, որոնք կրկնում են հասարակության ներսում գոյություն ունեցող ուրվագծերը»[25]: Այստեղից էլ սեգմենտների (հատվածների)՝ Ա. Լեյփհարթի առաջադրած հայեցակարգի հանգուցային հասկացություններից մեկի, սահմանումը՝ որպես «մարդկանց խմբեր, որոնք առանձնանում են նշված հատկանիշների հիման վրա»[26]:

Հետերկբևեռ աշխարհում գլոբալ իմաստով շատ բան փոխվեց երկիր մոլորակի վրա: Փոխվեց միջազգային անվտանգության համակարգը, խոշոր տերությունների դերակատարությունը աշխարհակառույցում, միջազգային կազմակերպությունների գործունեության տրամաբանությունը այնտեղ և այլն: Պարզ դարձավ մի բան. մինչև ատամները զինված միջուկային գերտերությունները փոխադարձ ոչնչացման սպառնալիքի տակ հակվեցին կոնսենսուսի որոնման, և ենթադրելի է՝ գալիքում այդ քաղաքականությունը դառնա, գուցե, ավելի ճկուն և տարողունակ: Այդ իմաստով միջազգային անվտանգությունը, այդուհանդերձ, զգալիորեն հուսալի է և ապահով՝ աշխարհի խաղաղությունը: Դեռևս 1980 թվականին Մայքլ Մանդելբաումը, բնութագրելով գերտերությունների միջև առաջացած «միջուկային պատը», գրում էր. «Տարբերությունը անցյալի պատերազմների և, մյուս կողմից, գլոբալ միջուկային կոնֆլիկտների միջև տարբերություն է ավերումի և չքացումի միջև, դարաշրջանի ավարտի և մարդկային մշակույթի վերջի միջև»[27]:

Սակայն, հետսառըպատերազմյան զարգացումները ցույց տվեցին նաև, որ նույն խոշոր տերությունների միջև առկա և առաջա-

---

[25] Նույն տեղում էջ 38:

[26] Նույն տեղում:

[27] Mandelbaum M. The Bomb, Dread, and Eternity.- «International Security», Cambridge (Mass.), (Fall 1980), Vol.5. № 2, p.3:

ցող հակասությունները «իջեցվեցին» առանձին և հակամարտություններով ավանդաբար հայտնի տարածաշրջաններ: Աշխարհի ռազմավարական քարտեզի վրա ֆիքսվեցին հակամարտությունների «թափառող» առկայծումներ, երբեմն ուժգին բռնկումներով (Բալկաններ, Միջագետք, Աֆղանստան և այլն): Այս պրակտիկան դարձավ, թերևս, նոր աշխարհակարգի հաստատման «բնորոշ առանձնահատկությունը»: Ներկայացնելով արդի աշխարհի ընդհանուր պատկերը աշխարհակառույցի տեսակետից՝ Ս.Լավրովը նշում է. հետերկբևեռ աշխարհից հետո տերությունների փոխհարաբերությունը «անկասկած ավելի կոշտ է (mecre) այժմ: Այն ժամանակ գոյություն ունեին երկու կայսրություններ՝ Արևմտյանն ու Խորհրդայինը, որոնցից յուրաքանչյուրը մրցակցի հետ հակամարտությունը տաքացնում էր երրորդ երկրների տարածքներում: Բայց երբեք իր սահմաններում և երբեք ուղղակիորեն: Նույնիսկ հրապարակային հռետորաբանությունն էր մեղմ: Այն ժամանակ երկու ճամբարներն էլ չէին ացնում թույլատրելի սահմանները: Այժմ ոչ մի կանոն այլևս չկա» [28]: Այսպիսով, եթե նույնիսկ աշխարհի անվտանգությունը միջազգային իմաստով շահեց, ապա տարածաշրջանային իմաստով դարձավ ավելի հեղհեղուկ: Այստեղ անվտանգության ներքին շեմը էապես իջավ, բումերանգի էֆեկտով, սակայն, հարվածելով նույն միջազգային անվտանգությանը:

Հիմնախնդիրն իր առանձնահատուկ դրսևորումը գտավ չքացած ԽՍՀՄ ազդեցության գոտում և նրա նախկին տարածքներում, որ հիմնականում նախկին Ռուսական կայսրության տարածման վիթխարի շրջանն է: Տվյալ առանձնահատկությունը պայմանավորվեց մեծ չափով Արևմուտքի կողմնակալ և «տարօրինակ» վարքագծով: Արևմուտքն իր դավանած արժեհամակարգից ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կիրառելի (հետևապես՝ լեգիտիմ) համարելով նախկին միութենական հանրապետությունների (և ո՛չ ժողովուրդների), այդ թվում ազգային պետությունների քողի տակ էթնոկրատիա

[28] «Новое Время»,(газета), 2017г. 18.V.

ստեղծող գաճաճ կայսրությունների (Ադրբեջան, Վրաստան և այլն) հանդեպ, մերժեց, բառիս բուն իմաստով, գոյապայքար մղող ավտոխտոն (անդրենածին) ժողովուրդներին (հայությանը Արցախում, լեզգիներին, թալիշներին, թաթերին, աբխազներին, օսերին և ուրիշների), ինչը վկայությունն էր ու արտահայտությունը «հին ու բարի ժամանակների» ավանդույթների:

Բնական էր հիշյալ և այլ ժողովուրդների ահռելի հիասթափությունը, կոնկրետ, Արևմուտքից և թերևս նրա գովազդած արժեքներից: Քանզի նույն Արևմուտքը կամա-ակամա «կլլեց» իր կողմից արհամարհված և տասնամյակներով անարդար դիտված «չարիքի կայսրության» մտահղացումների խայծը: Արևելքից սպասելիքներ չկային: ՈՒստի՛ զարմանալի չէ, որ նախկին կայսրությունից ժառանգություն մնացին «թեժ կետեր» *իբրև թե* ամբողջական տարածաշրջաններ: Դրանցից մեկը (ցցունը) *Այսրկովկասն է* (դիտված Երևանից, Թեհրանից), Անդրկովկասը (դիտված Մոսկվայից), Հարավային Կովկասը (դիտված Փարիզից, Պեկինից):

Վերահաստատվեց այն իրողությունը, թե «աշխարհի անվտանգությունը» պետությունների, նրանց և տարածաշրջանային միավորումների միջև հակամարտության ուժգնության բնութագիր է: Ընդսմին չփոխվեց ոչ միայն պատկերացումը, այլև առաջարկվող լուծումների ձևաչափը՝ ավանդականը, նույնն է թե կայսերականը: Քանզի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին աշխարհի տերերի շաղակրատանքները շարունակվում էին (և են) բազմազգ երկրների տիտղոսակիր ազգերի պետությունների տարածքային ամբողջականության մասին պնդումներով, դրանով իսկ դուռ բաց թողնելով տվյալ պետությունների ներքին գործերին միջամտելու և անհրաժեշտության դեպքում՝ հակամարտությունների կառավարման համար:

Մինչդեռ, զանգվածային ոչնչացման զենքով գերհագեցած և էթնիկական հակամարտություններով պայթյունավտանգ աշխարհի իրական անվտանգությունը պահանջում է այլ մոտեցումներ. տարբեր ժողովուրդների (երկրների) ազգային շահերի ներդաշնակ հա-

մադրում, նույնն է թե, տվյալ պարագայում հրաժարում կայսերապաշ-տությունից: Ու նաև՝ պատմական անարդարությունների սրբագրում, որ նշանակում է գալիքում համանման անարդարությունների հանդեպ գայթակղության բացառում:

Որպես մոդել (մանրակերտ) կարելի է դիտարկել Այսրկովկասը (այսուհետև՝ Հարավային Կովկաս), որը, ըստ գերիշխող տեսակետի, Հյուսիսային Կովկասի հետ կազմում է մի ամբողջություն: Այս պնդումը, միակողմանի, չի արտացոլում ռազմավարական իրողությունների խոր-քը: Քանզի տարածաշրջանն ամբողջություն է իր բաղադրիչներով՝ Հյուսիսային և Հարավային Կովկասներ, քրդա(թրքա)բնակ Կենտրո-նական Հայաստան՝ ժամանակակից Թուրքիայի տարածքում, Հյուսի-սային Իրան (Իրանական Ատրպատական): Այստեղ Հարավային Կով-կասն ունի *կապող/բաժանող* գործառույթ: Հետևապես, իրադրության ճիշտ ախտորոշումը Հարավային Կովկասում, կայունության երկարա-ժամկետ ապահովումն այստեղ, ենթադրում են նրա կառուցվածքի մեջ մտնող պետությունների ու ժողովուրդների կենսական շահերի ներ-դաշնակ *համադրում*, առկա մշակույթների (քաղաքակրթությունների տարրերի) զարգացում, որոնցով մեծապես պայմանավորված է ինչպես Հյուսիսային Կովկասի (ռուսական խազարական եռանկյունու), այնպես էլ նրան հարող Իրանի ու Թուրքիայի տարածքների կայունությունը:

Ուստի, կայուն և անվտանգ Հարավային Կովկասի համար անհրաժեշտ է.

ա) Ընդունել տարածաշրջանի «երկրաքաղաքական (գեոպոլի-տիկ) իրականությունը», այսինքն՝ ճանաչել գաճաճ կայսրություններից պոկված «ինքնահոչակ» պետությունների անկախությունը (կարծես թե կա պետությունների ծննդի այլ ճանապարհ, քան ինքնահոչակ լինելն է, ինչևէ), պետություններ, որոնք օժտված են պետական ինքնիշխա-նության բոլոր հատկանիշներով:

Այսպես, Ռուսաստանից անկախության ճանաչման խնդրագրում Աբխազիայի ժողովրդական ժողովի որոշման մեջ (2006թ., հոկտեմբե-րի 18) ասվում է. «Աբխազիան օժտված է ինքնիշխան պետության՝ հա-

մաշխարհային հանրության կողմից ընդունված, բոլոր անհրաժեշտ և անկապտելի հատկանիշներով: Նրա կազմակերպումն ու գործունեությունը համապատասխանում են ներկայացուցչական ժողովրդավարության և իշխանությունների տարաբաժանման հիմքի վրա՝ ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության բոլոր չափանիշներին»: Ընդսմին, եթե ցիտված տեքստում «Աբխազիան» փոխարինվի «Հարավային Օսիայով», «Արցախը՝ Լեռնային Ղարաբաղ» անվանումներով, ապա նույն տեքստն իր խորքով ամբողջությամբ կարտացոլի քաղաքական իրողությունները «ինքնահռչակ» պետական երիտասարդ կազմավորումներում՝ առավել, քան գաճաճ կայսրություններում: Փաստերն այնքա~ն ակնառու են… Այս պարագայում նույնիսկ կարևոր էլ չէ (պետականության կայացման տեսանկյունից), թե ինչպիսի վճռական դեր խաղաց ՌԴ «հումանիտար ինտերվենցիան» օս ժողովրդին Վրաստանի կազմակերպած «հումանիտար աղետից»՝ ցեղասպանությունից փրկելու գործում, և որպես հումանիտար ինտերվենցիայի անմիջական արդյունք՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունների ճանաչումը ՌԴ կողմից:

բ) Իմաստավորել տարասեռ Հարավային Կովկասի անկայունության պատմական տեսանկյունը: Անդրկովկասի ազգային-պետական հիմնախնդիրներին քաջածանոթ Արկադի Վոլսկին գրում է, որ ԽՍՀՄ լուծարումից հետո Անդրկովկասի երկրաքաղաքական իրականությունը «ըստ էության մնաց նույնը, ինչ էր XIX դարում»[29]: Սակայն, եթե Վոլսկին լիներ ավելի հետևողական, կխոստովաներ, որ ԽՍՀՄ քայքայման պահին տարածաշրջանը հայտնվեց «սառեցված» հակամարտությունների այն թնջուկի դիմաց, որոնք ծնունդ էին առել ինքնահրոչակ *քեմալական* և *ինքնահռչակ բոլշևիկյան արևմտամերժ իշխանությունների* փոխըմբռնման ու լայն համագործակցության հետևանքով:

Ռիբենտրոպ-Մոլոտով համաձայնության նախատիպը հանդիսացող այս աննախադեպ գործարքը գլուխ բերվեց Մուստաֆա Քեմալի՝

[29] Вольский А. Геополитическая реальность в Закавказье.- Московские новости, 1992, 4 октября.

Վլադիմիր Ուլյանով-Լենինին ուղղված 1920 թվականի ապրիլի 26-ի «գործնական» («businesslike») նամակով, Ալեքսանդրապոլի դաշնագրի շուրջ բոլշևիկների հետ Կարաբեքիրի նախնական պայմանավորվածության շրջանակներում[30]: Երիտթուրքերի շրջանում «եվրոպականացած» համարվող սույն գործիչը մասնավորապես գրում է. «Եթե խորհրդային ուժերը նախատեսում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով, իրենց ազդեցության շնորհիվ, հարկադրել Վրաստանին մտնել դաշինքի մեջ և ձեռնարկել Կովկասի տարածքից անգլիացիների վտարումը, ապա թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում ռազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ և պարտավորվում է հարկադրել Ադրբեջանական հանրապետությանը՝ մտնելու խորհրդային պետությունների կազմի մեջ»[31]: Այս դավադրությունը վերջնականորեն ձևակերպվեց 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագրով, իսկ իր ռազմավարական կերպարն ու վերջնական տեսքը ստացավ 1921 թվականի վերջերին, իր լիցքը պահպանեց անփոփոխ, ընդհուպ ԽՍՀՄ լուծարումը ու այնուհետև:

1915 թվականի եղերական Ապրիլի 24-ից հետո, այս անգամ արդեն գործարքը կատարվեց Արևելյան Հայաստանի անդամահատման և Հարավային Կովկասի ավտոխտոն (անդրենածին) այլ ժողովուրդների տարածքների ու մշակույթների, նրանց քաղաքակրթական մասունքների աճուրդի հաշվին՝ հօգուտ Ադրբեջանի թուրքերի (թուրք-թաթարների) և վրաց ժողովրդի:

Բնական էր, որ ԽՍՀՄ կազմալուծումը դետոնատորի դեր խաղաց, Դմիտրի Սախարովի գնահատականով՝ «փոքր կայսրությունների» կրնկի տակ հայտնված ժողովուրդների՝ արցախահայերի, լեզգիների, թալիշների, թաթերի, աբխազների, օսերի և ուրիշների ազա-

---

[30] Տե՛ս Mango A. Atatürk, London, 1999, p. 357.

[31] АВП СССР, ф. 132 - референтура по Турции, п.3, оп. 2, д.I, лл. II, տե՛ս նաև Mango A. Atatürk, London 1999, p. 278.

տագրական շարժումների համար: Օգտվելով ինքնորոշման իրենց բնական իրավունքից և խստորեն կիրառելով ԽՍՀՄ համապատասխան օրենսդրության տառն ու ոգին, հետևելով նախկին միութենական հանրապետությունների օրինակին, ոգևորված արևմտյան ժողովրդավարության արժեքներից՝ նրանք հռչակեցին իրենց ինքնիշխանությունը սեփական ազգային տարածքներում (մեծամասամբ կրճատված խորհրդային տարիներին): Եվ գլխավորը. մարտի դաշտում, տիտղոսակիր ազգերի դեմ անհավասար ու ծանր կռիվներում նրանք պաշտպանեցին իրենց սրբազան իրավունքները: Սակայն, ի զարմանս իրենց, իրենք նույնիսկ ոչ հասուն և ոչ էլ «երիտասարդ» ժողովրդավարությունների կողմից համակրանք չտեսան և նշմարելի օժանդակություն չստացան:

գ) Իմաստավորել ու գնահատել տարածաշրջանի մշակութային-քաղաքակրթական եզակիությունը (уникальность) և ապահովել նրանց անվտանգ զարգացումը՝ իրավահավասար պայմաններում: Տվյալ պարագայում անհրաժեշտ է արժևորել «ինքնահռչակ» պետությունների՝ արցախահայության, աբխազների, օսերի ինքնատիպությունն ու մշակութային ինքնությունը, ազգային-ազատագրական պայքարի և պետականության պատմական ավանդույթները, առկա ու երբեմնի գերազանցությունը «սեփական» տիտղոսակիրների հանդեպ, ազատագրական պայքարի տարիներին հանդես բերած կամքն ու ազգային բարձր ինքնագիտակցությունը և այլն:

Ասվածի ենթատեքստում քիչ նշանակություն չունի երկու հանգամանքի գիտակցումը.

ա) Չճանաչված, «մասամբ» ճանաչված «ինքնահռչակ» պետությունների էթնոմշակութային, էթնոհոգեբանական ակնհայտ անհամատեղելիությունը գաճաճ կայսրությունների պետականակիր ազգերի հետ: Իր ինքնությունը ցայսօր որոնող ալթայան ժողովուրդ շիամահմեդական եկվոր թյուրքեր և Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու հետևորդ քրիստոնյա անդրենածին հնդեվրոպական ժողովուրդ (արցախա) հայեր, Ուղղափառ կովկասյան ժողովուրդ վրացիներ և

լեզվով ու ծագումով հյուսիսկովկասյան ադիգեյան խմբին մերձ, զարգացած էթնոհոգեբանությամբ ու էթնոմշակույթով, այլ՝ տարբեր քաղաքական մշակույթ ունեցող աբխազներ, հնդեվրոպական ժողովուրդների իրանական խմբին պատկանող, այսպես կոչված կոբանյան (кобанский) մշակույթի կրող, հռչակավոր ալանների ժառանգորդ օսեր՝ զարգացած էթնոմշակույթով:

բ) Իրենց ինքնության պահպանման և ինքնիշխանության համար հարյուրավոր տարիների, մասնավորապես, խորհրդային կարգերի առաջին տասնամյակների, պայքարի փորձը:

1921 թվականի մարտի 31-ին հռչակվեց *անկախ* Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն Աբխազիան, որն իր այդ կարգավիճակը պահպանեց ընդհուպ մինչև 1930 թվականի դեկտեմբեր, երբ Աբխազական ԽՍՀ-ն *պայմանագրային* հիմունքներով մտցվեց Վրաստանի ԽՍՀ կազմի մեջ: Այս շրջանից սկսած մինչև 50-ական թվականների սկզբներ տեղի էր ունենում Աբխազիայի և նրա բնիկ ժողովրդի վրացականացում (քարթվելականացում): Սակայն, պատմական հանգամանքների թելադրանքը երբեք էլ չհամակերպեց աբխազ ժողովրդին իր գաղութային կարգավիճակի հետ: Իր հայրենիքից վերջնականապես արտամղվելու վտանգի գիտակցումով (փորձագետը գրում է. երկու հազար տարվա գրավոր պատմություն ունեցող աբխազ ժողովուրդը, նույն պատմության կողմից իջեցվեց հանրապետության ազգաբնակչության 17%-ին) աբխազ «ինտելեկտուալներն ու կուսակցական ղեկավարները» 1931, 1957, 1965, 1978 և 1989 թվականներին դիմեցին Կենտրոն, Վրաստանից առանձնանալու և Ռուսաստանին միանալու խնդրանքով: Իսկ «պերեստրոյկայի» և «գլասնոստի» տարիներին, Վրաստանից ամբողջովին անկախանալու նպատակով, որպես առաջին քայլ, փորձեցին վերադառնալ մինչև 1931թ. գոյություն ունեցած կարգավիճակին՝ Վրաստանի հետ *պայմանագրային* հարաբերությունների: Արդյունքում՝ վրաց նացիոնալիստների կողմից սանձազերծվեց մի պատերազմ, որի տրամաբանական և պատ-

մական ավարտը քաջ հայտնի է[32]:

Վրաց-օսական հակամարտությունը արմատներով «ձգվում» է 1917-1921 թվականներ, երբ Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետության մենշևիկյան կառավարությունը փորձում էր «անգթորեն» («беспощадно») խեղդել օսական ապստամբական շարժումը, և դա օս ժողովրդի պատմական հիշողության մեջ մնացել է որպես ցեղասպանության կիրառման չհաջողված փորձ: (Հարավային) Օսերի 3-4 տարվա ռազմական կատաղի հակամարտությունը Վրաստանի հետ շարունակվեց ընդհուպ մինչև 1921 թվական, երբ այն 1922 թվականի ապրիլի 20-ին ընդգրկվեց խորհրդայնացած Վրաստանի կազմ որպես Հարավային Օսիայի ինքնավար մարզ (ՀՕԻՄ): Գորբաչովյան բարեփոխումները ոգևորեցին նաև (հարավային) օսերին, որոնք 1989թ. նոյեմբերի 10-ին փորձեցին ստեղծել Խորհրդային Վրաստանի կազմում ինքնավար հանրապետություն, թերևս, իրենց հյուսիսի հայրենակիցների օրինակով, սակայն, ի զարմանս իրենց, մերժվեցին անմիջապես: Զվիադ Գամսախուրդիայի խորհրդարանը 1990 թվականի դեկտեմբերի 11-ին լուծարեց Հարավային Օսիայի ինքնավար մարզը: Այսպիսով, տիտղոսակիր ազգն ինքը օգտվելով «պերեստրոյկայի» բարիքներից, նույնն անընդունելի համարեց դարերով իր կողքին ապրող այլ ավտոխտոն ժողովուրդների համար: Վրաստանը Հարավային Օսիայի հարցում վերադարձավ մենշևիկյան Վրաստանի քաղաքականությանը՝ *Դվալեթիայում* հռչակելով Շիդա Քարթլի / Սամաչաբլո տարածաշրջանի «վերականգնումը»[33]:

2008 թվականի օգոստոսի 8-ի վրացական «բլիցկրիգը» օս ժողովրդին Հարավային Օսիայում կանգնեցրեց իսպառ ոչնչացման վտանգի առաջ: Ռուսական «մարդասիրական ներխուժումը» և Ռուսաստանի կողմից Հարավային Օսիայի անկախության ճանաչումը

---

[32] Տե՛ս Մարկ Ֆեյգինի ուշագրավ հոդվածը. Фейгин М. Закавказский узел.- Новый мир, 1998, No9, с. 134-155:

[33] Շարադրանքն ըստ Зверев А. Этнические конфликты на Кавказье, 1988-1994.- Спорные границы на Кавказье. Под ред. Б. Коппи¬терса, М.,1996, с. 41-43:

ցույց տվեցին կայսրությունների, թեկուզև գաճաճ, հավակնություններ-ի ծայրահեղ վտանգավորությունը և արկածախնդրականությունը:

Արցախի խնդիրը, որպես իբրև թե «վիճահարույց» հարց, ծագեց, «կովկասի թաթարների», «անդրկովկասի թուրքերի»՝ 1918 թվականի սկզբներին արդեն «ադրբեջանցիների» *«արևելա-կովկասյան թյուրքական» պետության* առաջացման օսմանա-թուրքական նպատակադրման հետ, սրվեց Բաթումի դաշնագրի (1918թ. հունիսի 4) ստորագրումից հետո, երբ կոնկրետ իրողությունների հարկադրանքով Արցախը հայկական Բաքվի հետ միասին իր վրա վերցրեց դեպի նավթաշխարհ արշավող օսմանյան հորդաների հարվածի ծանրությունը[34]:

Ինչևէ. Արցախի՝ հայոց ազգային հեղափոխության արծվաբույնի, խորհրդային բանակի առաջնակարգ մարշալների ու գեներալների մատակարարի տասնամյակների պայքարն ու կռիվը տվեց այն արդյունքը, ինչը այսօր առկա է:

Իրենց եվրոպական արժեքների մոլեռանդ հետևորդներ հռչակած գաճաճ կայսրությունների «ընտրախավերի» անհանդուրժողականության, մեծապետական շովինիզմի և կայսերական հավակնություններ-ի հետևանքով այսօր տարածաշրջանը տարանջատված է և ապահամարկված («дезинтегрированным»), դարձել է անկայունության աղբյուր, որի թունավոր սլաքներն ուղղված են բոլոր ազիմուտներով:

Եթե խորհրդային կայսրության ընդերքում ձևավորված միտումները պահպանվեն անփոփոխ և «ինքնահռչակ» պետությունները վերադարձվեն գաղութարարների «գիրկ», ապա.

1. Գաճաճ կայսրությունները կփորձեն էթնիկական զտում անցկացնել և վերացնել ազատագրվող ժողովուրդների ինքնիշխանության ամեն հետք, որը կհանգեցնի, ի վերջո, ցեղասպանության, կամ «մարդասիրական աղետի՝ կանխման համար անհրաժեշտ կլինի կիրառել «մարդասիրական ներխուժում» (օրինակ, 2008 թվականի վրացական

[34] Տե՛ս Кабисов Аль. Конфликты в Южной Осетии и ценность опыта Аландской автономии для разрешения конфликтов в Закавказье (с. 154-158) .-Этнополитические конфликты в Закавказье: их истоки и пути решения. Мериленд, 1997, с. 156:

բլիցկրիգն ու ռուսական «գործողությունները»):

2. Դա կհանգեցնի, ի վերջո, Թուրքիայի դերի մեծացման Հարավային Կովկասում և Ռուսաստանի վերջնական արտամղման տարածաշրջանից կամ նրանց միջև հերթական գործարքի. արևմտյան քաղաքակրթությունը կստանա ջախջախիչ և անուղղելի հարված՝ եվրոպական հարավ-արևելքում: Ռուսաստանի հերթական վերադարձ, թեկուզև իրեն ապավինած ժողովուրդների հաշվին, 1920-1921 թվականների օրինակով, այլևս չի լինի: Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) պայթյունի, ձուլման և ցեղասպաության թուրքական պրակտիկան կգրանցի աննախադեպ հաջողություններ:

Ուստի անհրաժեշտ է.

1. Համակերպվել և ընդունել Հարավային Կովկասում ստեղծված նոր, սակայն բնական երկրաքաղաքական իրողությունները:

2. Ճանաչել «ինքնահռչակ», սակայն փաստացիորեն (դե ֆակտո) գոյություն ունեցող պետությունների՝ Արցախի, Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունները. նույն կարգավիճակը նախատեսել Աջարիայի համար:

3. Վերականգնել Նախիջևանի խնամակալության ինքնիշխանությունը. հինավուրց հայկական այս Բիբլիական նահանգը, ռուսական կայսրության «Հայկական մարզի» այս գավառը խորհրդային առաջին տարիներին վերածվեց օսմանյան և ադրբեջանական թուրքերին իրար կամրջող համաթուրանական օղակի, որի նկատմամբ ծնվող Ադրբեջանի թյուրքական պետության հավակնությունը առաջին անգամ հնչեց Բաթումի կոնֆերանսում, 1918 թվականի մայիսի 20-ին, երբ Մահմեդական ազգային խորհրդի անդամ Ուսսուբեկովը պահանջեց Նախիջևանը հանձնել Ադրբեջանին «Թուրքիայի հետ մշտական անմիջական կապ հաստատելու համար»[35]: Այնուհետև, թուրքական

[35] Ինչպես հանրապետության շրջանում, այնպես էլ խորհրդային տարիներին արցախահայության պայքարի մասին շատ է գրվել և անաչառ հետազոտողին ու ընթերցողին ամեն ինչ հայտնի է: Հայտնի է նաև նավթի գործոնի ու ռուսական պետության գերեզմանափոր բոլշևիկների խաղացած չարաղետ դերի մասին Արցախի

ռազմա-քաղաքական ավանդույթին բնորոշ հետևողականությամբ (Ալեքսանդրապոլի դաշնագիր, հոդված 2, Մոսկվայի դաշնագիր, հոդված 3, Կարսի դաշնագիր, հոդված 5) Հայաստանի Հանրապետության անկապտելի մասը կազմող Նախիջևանի շրջանը վերածվեց թյուրքական Ադրբեջանի *խնամակալության (պրոտեկտորատ)* Ռուսաստանի բոլշևիկների գործուն օժանդակությամբ: [Տե՛ս Մոսկվայի 1921 թվականի մարտի 16-ի Դաշնագիրը, հոդված 3. - «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ... Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության», Կարսի 1921 թվականի հոկտեմբերի 13-ի Դաշնագիրը, հոդված 5.- «Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունները համաձայն են, որ... Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»]: Խորհրդային տարիները *անդրենածին ժողովրդից մաքրագործված խնամակալությունը դարձրին* Ադրբեջանի ԽՍՀ մաս՝ խախտելով Մոսկվայի և Կարսի տխրահռչակ պայմանագրերի հրամայական (իմպերատիվ) պահանջը:

Ադրբեջանն իրեն հռչակելով *ունիտար* (միատարր) պետություն՝ լուծված է դիտում իր տնօրինությանը հանձնված խնամակալության կարգավիճակի հարցը: Անհրաժեշտ է ուղիներ որոնել և Ադրբեջանին պարտադրել միջազգային իրավունքի պահանջների կատարումը:

4. Գաճաճ կայսրություններում իրենց ազգային տարածքներում հավաք (компакт) ապրող հայերի, լեզգիների, թալիշների, թաթերի և ուրիշների արտամղումը կամ մշակութային ձուլումը կանխելու, տարածաշրջանի մշակութային բազմազանությունը պահպանելու հրամայա-

---

հարցում ևս. այս ուղղությամբ հրատարակված գրականության օվկիանոսից, սակայն, կառանձնացնեինք Ալեքսեյ Զվերևի Этнические конфликты на Кавказе, 1988-1994 հոդվածի 10-40 էջերը.- Տե՛ս Спорные границы на Кавказе. Под ред. Бруно Коппитерса, М.1996: Տե՛ս նաև Շիրինյան Լ. Ղ. 1918. Բոցկլտացող Հայաստանը և աշխարհամարտը վերջնափուլում (հայ զինական ուժը իր կերպի մեջ).Երկրորդ՝ ուղղվ. և լրամշ. հրատ.: Եր., 2018:

կանով անհրաժեշտ է նրանց տրամադրել *մշակութային ինքնավարություն*: Այստեղ օգտակար կարող է լինել ժամանակին ավստրոմարքսիստ Օտտո Բաուերի կողմից առաջարկված մշակութային զարգացման «*անտարածական* սկզբունքի (нетерриториальный принцип)» կիրառումը, երբ կյանքի են կոչվում այնպիսի կառուցվածքներ, «որոնք կարող են երաշխավորել տարբեր ազգային մշակույթների ինքնավարությունն առանց նոր տարածքային սահմանների ստեղծման»: [Ի դեպ, մշակութային ինքնավարության գաղափարով ժամանակին վարակվել էին վրաց ինտելեկտուալները, հատկապես մենշևիկները]:

Այսպիսով, կբացվի ճանապարհը դեպի անվտանգություն, կայունություն, իրական համարկում (ինտեգրացիա) և տարածաշրջանի բարգավաճում՝ Այսրկովկասում:

Այսպիսով, Հարավային Կովկասի *«միացյալ նահանգները»* կդառնան *Եվրոպայի «միացյալ նահանգների»* վերարտադրությունը, *«Հարավ կովկասյան միությունը»՝ «Եվրոպական միության»* երկվորյակը:

Այս պարագայում է, որ պատմության աղբանոց կնետվեն խորհրդային իրականության ծնունդ գաճաճ կայսրությունները ևս, թյուրքականության ռազմաքաղաքական մարդակեր մշակույթի ավանդույթները: Չէ՞ որ այսօր որևէ մեկը չի մտածում արտամղել, ձուլել, կլանել «փոքրիկ» Լիխտենշտայնի իշխանապետությունը, Մոնակոյի իշխանապետությունը և, վերջապես, Սան-Մարինոյի Հանրապետությունը:

Այս դեպքում է, որ Հարավային Կովկասը կկարողանա որդեգրել Եվրոպական կառուցվածքներն ու Եվրոպական արժեքները:

THE IMPLEMENTATION OF CONSOCIATIONAL STRATEGY IN SOUTH CAUCASUS

LEVON SHIRINYAN

Abstract

The study explores the comprehensive picture of consociational democracy with its regional security component. In post-Soviet South Caucasus, especially in Azerbaijan, Armenia and Georgia under the influence of various factors uncontrolled and hegemonic ethnocratic (Azerbaijan, Georgia) or plutocratic (Armenia) societies emerged instead of genuine democracy. In the course of time it has become apparent that in these societies some theoretical requirements pointed out by Arend Lijphart,*viz.* the autonomy of segments (in Azerbaijan and Georgia) or specific interests (in Armenia), are ignored. Meanwhile, each of these countries needs coexistence and harmonious development, which are ensured through the implementation of the consociational democracy model.

ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶՄԱԿԱՆ (PLURAL) ԵՎ ՄԻԱՏԱՐՐ (UNITARY) ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ժողովրդավարության վերաբերյալ ներկայիս հայացքները տարբերվում են նախկին դասական հայեցակարգերից: Ժամանակակից հասարակությունների և պետությունների բազմականությունը, սոցիալական բարդ ստրատիֆիկացիան, հասարակության հարստության անհավասար բաշխումը, նոր դասերի, նոր ստրատաների և սեգմենտների առաջացումը էականորեն փոխում են ժողովրդավարության վերաբերյալ ժամանակակից հայացքները և պատկերացումները:

Այսօր արդեն ներքին քաղաքական գործընթացից ժողովրդավարությունը վերածվում է նաև միջազգային-քաղաքական գործընթացի ու դառնում է ներքին և միջազգային անվտանգության ապահովման կարևորագույն պայմաններից մեկը: Ժողովրդավարության ներքին չափումը պայմանավորված է ոչ միայն դրա ինստիտուտների ինստիտուցիոնալ ամրագրմամբ և գործառնությամբ, այլև հասարակության տարբեր շերտերի ներդաշնակ կենսագործունեությամբ և փոխգործակցությամբ: Ժողովրդավարության միջազգային չափումը առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային անվտանգության գլխավոր սպառնալիք են հանդիսանում նաև պետության թուլությունը, դեմոկրատական կառույցների թուլությունը, կոռուպցիայի առկայությունը, կրոնական և էթնիկ կոնֆլիկտներն ու ագրեսիվ էթնոկրատիան: Այդ իսկ պատճառով՝ ժողովրդավարությունը պետք է դիտարկել ոչ միայն պետության կառավարման ձև, այլև խաղաղություն հաստատելու և անվտանգության ապահովման միջոց:

Հենց այս շրջանակներում էլ իր ֆունկցիոնալությամբ շահեկանորեն առանձնանում է ժողովրդավարության կոնսոցիատիվ մոդելը:

Ժողովրդավարական վարչակարգի վերաբերյալ գոյություն ունեն

բազմաթիվ հայեցակարգեր՝ ազատական (լիբերալ) ժողովրդավարություն, մասնակցային ժողովրդավարություն, վեստմինստերյան ժողովրդավարություն, էլիտար ժողովրդավարություն, պոլիարխիա, լեգալ ժողովրդավարություն, դելիբերալ ժողովրդավարություն և այլն, ինչպես նաև դեմոկրատիայի՝ իր մեթոդաբանությամբ սկզբունքորեն տարբերվող մոդել՝ **կոնսոցիատիվ*** ժողովրդավարություն**:** Ընդ որում՝ դրանք բոլորն էլ հետաքրքիր են ինչպես տեսական, այնպես էլ՝ կիրառական մակարդակներում:

Ինչպես նշում է գերմանացի մասնագետ Բ. Գուգգենբերգերը՝ ժողովրդավարության ունիվերսալ տեսություն գոյություն չունի[36]: Յուրաքանչյուր տեսության մեջ շեշտադրվում է այս կամ այն ասպեկտը, ինչն էլ այդ հայեցակարգերը խոցելի են դարձնում այլ հայեցակարգերի տեսանկյունից:

Ժողովրդավարական վարչակարգերի այս բազմազանությունը, ըստ մեթոդաբանական գործառնության, կարելի է դասակարգել երկու հիմնական խմբերում՝ մեծամասնական կամ վեստմինստերյան ժողովրդավարություն (Westminster Democracy) և կոնսոցիատիվ ժողովրդավարություն (Consociational Democracy):

Դիտարկենք ժողովրդավարության առաջին խումբ (վեստիմնստերյան) հայեցակարգերը:

Ժողովրդավարության վեստմինստերյան մոդելները աշխատում են հակադրությունների սկզբունքով: Խոսքը այս պարագայում ոչ թե իշխանությունների տարանջատման և դրանց ճյուղերի հակակշռման սկզբունքի մասին է, ինչը դեմոկրատիայի կարևորագույն և հիմնական տարբերակիչ առանձնահատկությունն է այլ վարչակարգերից,

---

* Կոնսոցիատիվ (հայերեն թարգմանությունը կարող է լինել հետևյալը - ընկերակցային կամ համահասարակական): Կոնսոցիատիվ կամ կոնսոցիոնալ (անգլ. Consociational) եզրույթը ձևավորվել է *consociatio* բառից (Յոհաննես Ալթուզիուս - «Politica methodice digesta et exemplis sacris et profanis illustrata (1603)).

[36] Гуггенбергер Б., Теория демократии. // Полис. 1991. № 4, http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publikacii_Polisa/G/1991-4-12-Guggenberger_Teoriya_demokratii.pdf

այլ մեծամասնության իշխանության հակադրումը կառավարող փոքրամասնությանը կամ հակառակը:

Դիտարկենք այս սկզբունքը:

Ժողովրդավարության զարգացումը կամ, ընդհանրապես, հասարակության պրոգրեսը հակադրությունների մեջ որոնելը ճիշտ ճանապարհ չէ, հատկապես՝ անցումային երկրների պարագայում: Ընդ որում՝ խոսքը հակասությունների մասին չէ, ինչը բնական երևույթ է: Այս պարագայում խոսքը հակադրությունների մասին է, իսկ հակադրությունները հաճախ կարող են լինել նաև արհեստական (անբնական): Հակադրումը՝ մեծամասնության իշխանությունը փոքրամասնությանը, կամ հակառակը, կարող է հանգեցնել կողմերից մեկի հաղթանակի, ընդ որում՝ դա կարող է լինել ոչ լավագույնը, երբեմն կամ հաճախ, կողմերից մեկի ջախջախման կամ ոչնչացման, հավասարակշռության խախտման:

Ըստ Գուգգենբերգերի՝ ժողովրդավարությունը չպետք է իրեն սահմանափակի երկվության սկզվբունքով (ազատություն, թե՞ հավասարություն, իրավական, թե՞ սոցիալական պետություն, փոքրամասնությունների պաշտպանություն, թե՞ մեծասնության իշխանություն կամ դրանցից որևէ մեկը), այլ հակառակը՝ այն պետք է կոմբինացնի դրանց համալիրը:[37]

Մարքսի տեսանկյունից՝ պատմական զարգացման գլխավոր օրենքը հակադրությունների, դասերի միջև կոնֆլիկտների մեջ է, որը պատմական զարգացման կամ առաջընթացի շարժիչ ուժն է: Իսկ ֆրանսիացի-շվեյցարացի տնտեսագետ Մարի Էսպրի Լեոն Վալռասը առաջ է քաշում հավասարակշռության սկզբունքը[38]: Վալռասը հիմնավորում էր, որ տնտեսական համակարգի ոչ մի հակադրություն էլ չկա, և ցանկացած համակարգ ձգտում է հավասարակշռության:

---

[37] Гуггенбергер Б., Теория демократии. // Полис. 1991. № 4, http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publikacii_Polisa/G/1991-4-12-Guggenberger_Teoriya_demokratii.pdf

[38] Walras L., Elements d'economie politique pure, ou Theorie de la richesse sociale. Lausanne, 1874, 407 p. http://gallica.bnf.fr/ark:/12148/bpt6k111752b/f4.image 27.06.2018

Հետևապես, հարցի լուծումը պետք է որոնել ոչ թե հակադրությունների մեջ, այլ հավասարակշռության: Սա է բնական օրենքը: Ժողովրդավարական զարգացման հիմքը պետք է լինի հավասարակշռության վերականգնումը: Այդ իսկ պատճառով՝ մենք պետք է որոնենք այն մոդելը, որը ապահովում է այդ հավասարակշռությունը:

Ժողովրդավարության մեկ այլ կարևոր սկզբունքը հավասարության սկզբունքն է: Սակայն այստեղ ևս կարող են առաջանալ խնդիրներ: Հավասարության սկզբունքի կիրառումը, որքան էլ պարադոքսալ հնչի, կարող է հանգեցնել անհավասարության: Ի՞նչպես է դա տեղի ունենում: Հավասար պայմաններում կամ հավասար մրցակցային պայմաններում նրանք, ովքեր չեն բավարարում այդ մրցակցության պայմաններին, անմիջապես հայտնվում են լուսանցքից դուրս: Եթե սա քաղաքական մրցակցության առումով արդարացված է և ճիշտ, ապա սոցիալական տեսանկյունից վտանգավոր է: Այն մարդիկ, ովքեր մրցակցությունից դուրս են մնում, անմիջապես հայտնվում են փողոցում, աղբանոցներում կամ կամուրջների տակ: Այսինքն՝ այս դեպքում օրինական հավասարությունը ծնում է օրինական անհավասարություն: Իսկ այս պարագայում էլ արդեն մեծանում է պետության սոցիալական պատասխանատվության հարցը: Այս տեսանկյունից՝ լիբերալ ժողովրդավարությունը դառնում է խոցելի: Արդյո՞ք այսպիսի հավասարությունը արդար է:

Արդարությունը, ըստ Դահլի, համարժեք չէ հավասարության սկզբունքին: Հավասարության սկզբունքի կիրառումը, հատկապես՝ բազմական հասարակություններում, բերում է ամենամեծ սեգմենտի անհավասարության մյուս սեգմենտների նկատմամբ և, հետևապես, անարդարության: Այս իսկ պատճառով՝ գլխավորը ոչ թե հավասարությունն է, այլ հավասարակշռությունը: Ժողովրդավարության հիմքը շահերի հավասարակշռված ձևակերպումն է և անհատի իրավունքների պաշտպանությունը:

Ներքին խաղաղության, ներդաշնակության և սուվերենիտետի հաստատումով ձևավորվում է պետությունը որպես պետություն: Սա-

կայն սա դեռևս ոչինչ չի ասում իշխանության որակի մասին: Պետությունը դառնում է սահմանադրական, ինստիտուցիոնալ միայն երկրորդ փուլում, երբ այդ Լևիաթանը (Հոբս) ստեղծում է կենսագործունեության և ներդաշնակության պայմաններ, իրականացնում է իշխանության տարանջատումը և երաշխավորում է մարդկանց անօտարելի իրավունքները: Եվ միայն զարգացման երրորդ աստիճանում՝ ժողովրդի իշխանության (սուվերենիտետ) սկզբունքի հաստատումով և համընդհանուր ընտրությունների իրավունքի հաստատումով, պետությունը դառնում է սահմանադարական պետություն, որը վերջում արդեն լրացվում է այլ բաղադրիչներով՝ սոցիալական պետության, ընդհանուր բարեկացության պետության և այլն[39]:

Վեստմինստերյան կամ մեծամասնական ժողովրդավարության թերությունները ակնհայտ են: Ժողովրդավարության այս մոդելները հռչակագրային տեսանկյունից (մարդու իրավունքներ, քաղաքական և գաղափարախոսական պլյուրալիզմ, հավասարություն և այն) իդեալական են, սակայն մեթոդաբանական տեսանկյունից, մեծ հաշվով, ոչ միշտ են ծառայում այդ սկզբունքների իրացմանը: Հակառակը, վեստմինստերյան դեմոկրատիայի մեթոդը հանգեցնում է որևէ խմբի՝ էթնիկ, ազգային, կրոնական, քաղաքական, պլուտոկրատական, օլիգարխիկ, դիկտատուրային:

Եվ այստեղ հարկ է նշել, որ դեմոկրատական ճանապարհով իշխանության եկած դիկտատուրան դեմոկրատական չէ բնավ, և կարող է ամեն ինչ փոխել հակառակ ուղղությամբ[40]:

Բազմական հասարակությունում (plural society) տարանջատված հատվածների առկայությունը սահմանափակում է մեծամասնական ժողովրդավարության ընթացակարգերի և ինստիտուտների կիրա-

---

[39] Гуггенбергер Б., Теория демократии. // Полис. 1991. № 4,
http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publikacii_Polisa/G/1991-4-12-Guggenberger_Teoriya_demokratii.pdf

[40] Цивилизациум. Диктаторская цивилизация.
https://sites.google.com/site/civilizacium/home/civilizacium/demokraticeskie-civilizacii
20/05/2017

ռումը: Մեծամասնական կամ վեստմինստերյան ժողովրդավարությունը հիմնվում է քաղաքական էլիտաների միջև մրցակցության, «մեկ մարդ-մեկ ձայն» սկզբունքի վրա, դավանում է, այսպես ասած, «հաղթողը ստանում է ամենը» սկզբունքը (իհարկե, մինչև հաջորդ ընտրությունները) և գործում է «իշխող կուսակցություն-քաղաքական ընդդիմություն» մրցակցային մոդելով: Այդ սկզբունքների կիրառումը, հատկապես՝ բազմական հասարակություններում, անխուսափելիորեն կհանգեցնի հասարակության ամենամեծ հատվածի (սեգմենտի) քաղաքական գերիշխանությանը (դեռևս անտիկ դարաշրջանը հակադրվում էր մեծամասնության դիկտատուրային) մյուս բոլոր հատվածների նկատմամբ, հետևապես՝ կծնի քաղաքական ճգնաժամ և կոնֆլիկտներ[41]:

Բազմական հասարակություններում սեգմենտները ի սկզբանե անտագոնիստական չեն, սակայն, ըստ Վեբերի, կարող են այդպիսին դառնալ: Կոնֆլիկտը դասակարգերի կամ հասարակության սեգմենտների միջև անհրաժեշտ պայման չէ, սակայն, այնուամենայնիվ, գերիշխանության և պայքարի գործընթացը նրանց միջև կա, օրինակ՝ մշակութային կապիտալի նկատմամբ գերիշխանությունը, որը, ըստ Բուրդիոյի[42], գլխավորն է ցանկացած հասարակությունում: Դոմինանտ դասերը կամ սեգմենտները ամեն կերպ փորձում են թելադրել իրենց կենսաձևը մյուսներին: Սա իրականացնելու համար նրանք օգտագործում են լեգիտիմության արտադրողական ինստիտուտները, ինչպիսիք են՝ դպրոցը և պետությունը:

Այս պարագայում դեմոկրատիայի բազմաթիվ սկզբունքներ՝ ինքնորոշում, ինքնիրավչություն կամ ինքնավարություն՝ անհատի, հասարակության, հետևապես հասարակության մաս կազմող սեգմենտների և պետության մակարդակում դառնում են դատարկ հռչակա-

---

[41] Рагозин Н., Очерки современной демократии. Украинские проблемы в контексте международного опыта. Донецк, издательство "Донбасс", 2003, с. 88.

[42] Бурдье П., Формы капитала. Экономическая социология. Том 3, № 5, ноябрь 2002, Перевод М.С. Добряковой Научное редактирование – В.В. Радаев, с. 60-74.

գրեր: Այլապես դեմոկրատիան ինչո՞վ է տարբերվում ավտոկրատիաներից, բռնապետական ռեժիմներից և դիկտատուրայի այլ ձևերից:

Ժամանակակից հասարակությունների մեծ մասը բազմական հասարակություններ են, որոնց բնութագրական են «հատվածական տարբերություններ»: Բազմական հասարակություններում այդ տարբերությունները կարող են ունենալ կրոնական, գաղափարական, լեզվական, տարածաշրջանային, ռասայական կամ էթնիկական ծագում[43], իսկ միատարր հասարակություններում «հատվածական տարբերություններ»-ը կարող են ունենալ շերտային, այսինքն՝ սոցիալական ծագում: Բնակչության խմբերը, որոնք առանձնացվում են այդ տարբերությունների հիման վրա, համարվում են հասարակության հատվածներ: Նման հասարակությունների համար հատկանշական խնդիր է քաղաքական կայունության և հասարակության տարբեր հատվածների միջև հավասարակշռության ապահովումը: Հավասարակշռության խախտումը որևէ խմբի օգտին անխուսափելիորեն հանգեցնում է մեծամասնության դիկտատուրայի[44]: Եթե դա բազմական հասարակություն է, ապա այդ մեծամասնության դիկտատուրան դրսևորվում է էթնոկրատիայի ձևով (մի էթնիկ խմբի գերիշխանություն այլ էթնիկ խմբերի նկատմամբ), իսկ եթե դա միատարր հասարակություն է, ապա այդ մեծամասնությունը դրսևորվում է արդեն սոցիալական որևէ խմբի գերիշխանությամբ մյուս խմբերի նկատմամբ:

Ինչպես նշում է Յու. Հաբերմասը՝ ժողովրդավարությունը պետք է ազատ լինի որևէ հեգեմոնիայից և որևէ խմբի խոսույթի (դիսկուրս) պարտադրանքից, որտեղ բաց կերպով պետք է արտահայտվի բոլոր կողմերի շահերը: Հաբերմասի այս մոտեցումը հիմնվում է ոչ թե մեկի գերիշխանության գաղափարի, այլ բոլորի շահերի կոնսենսուսային ձևակերպման վրա, որտեղ որոշումների ընդունման գործընթացում

---

[43] Սուքիասյան Հ., Արենդ Լեյփհարթի «կոնսոցիատիվ ժողովրդավորությունը»: Պատմություն և Հասարակագիտություն, Տարեգիրք N1, Հայկարլիկ տպարան, Երևան, 2015, էջ 268-285:

[44] Նույն տեղում:

կողմերից ոչ մեկը չի մնում փոքրամասնություն, ոչ մեկ իրեն չի զգում ենթակայի դերում և չի կարծում, որ իր ճակատագիրը որոշում են ուրիշները:

Այս բոլոր հարցերը անարդյունավետ են դարձնում վեստմինստերյան ժողովրդավարության հնարավորությունները:

Այդ պատճառով՝ պետք է որոնել այլ մոդելներ, որտեղ կլուծվեն այս խնդիրները: Եվ այդ մոդելը, հավանաբար, հենց Արենդ Լեյփհարթի կոնսոցիատիվ ժողովրդավարությունն է:

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը եկավ փոխարինելու լիբերալ ժողովրդավարությանը Աֆրիկայի և Ասիայի նոր հետգաղութային պետություններում: Անգլո-սաքսոնական մեծամասնական ժողովրդավարությունը, որը ներդրվել էր այդ պետություններում, փլուզվեց անմիջապես այդ պետությունների անկախացումից հետո: Ա. Լեյփհարթը լիբերալ ժողովրդավարությունից հրաժարումը բացատրեց բաժանված, բազմական հասարակություններում վերջինիս անարդյունավետությամբ և տվյալ հասարակություններին անհամապատասխանությամբ[45]:

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունն այս համատեքստում դիտվում է որպես տարբեր հանրույթների շահերի և պահանջմունքների հաշտեցման միջոց՝ պահպանելով քաղաքական կայունությունը ժողովրդավարության շրջանակներում:

Բազմական հասարակություններում ավելի արդյունավետ են այն ռազմավարությունները, որոնք ապահովում են էթնիկ խմբերի քաղաքական իշխանության հավասարակշռությունը և կանխում են դրանցից որևէ մեկի միակողմանի տիրապետությունը[46]:

Դե իսկ կոնսոցիատիվության իմաստը կոնֆլիկտների լուծումն է

---

[45] Smooha S., The model of ethnic democracy. European Centre for Minority Issues, ECMI Working Paper # 13, 2001, p. 14-15.

[46] Осипов А., Сообщественная демократия как фактор консолидации политической власти. Гуманитарные и социальные науки 2010. № 4, с. 249. http://hses-online.ru/ 2010/ 04/ 230002/28.pdf /15.05.22/.

և իսկական ժողովրդավարության որոնումը[47]:

Բաժանված հասարակություններում ժողովրդավարական կառավարման կայացման հաջողությունը պահանջում է հետևյալ հիմնական տարրերը՝ իշխանության բաժանում և խմբային ինքնավարություն: Առաջնայինը համատեղ կառավարումն է, այսինքն՝ բոլոր կարևոր համայնքային խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում, հատկապես՝ գործադիր իշխանության մակարդակում, իսկ խմբային ինքնավարությունը նշանակում է, որ այդ խմբերն իրավունք ունեն ղեկավարելու իրենց ներքին գործերը, հատկապես՝ կրթության և մշակույթի ոլորտներում: Այս երկու հատկանիշներն են ժողովրդավարական համակարգի հիմնական չափորոշիչները, որոնք հաճախ կոչվում են իշխանության բաժանման ժողովրդավարություն կամ քաղաքագիտական եզրույթի համաձայն՝«կոնսոցիատիվ» ժողովրդավարություն[48]:

Հենց այս համատեքստում էլ անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել ծագումով հոլանդացի, ամերիկացի քաղաքագետ Արենդ Լեյփհարթի կողմից առաջ քաշած կոնսոցիատիվ ժողովրդավարության[49] մոդելը, որը այս կամ այն ձևով կիրառվել է Ավստրիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Շվեյցարիայում, Կանադայում, Հնդկաստանում և այլն:

---

[47] Noble Ellen L., A Field Study of Consociationalism in the Northern Ireland Assembly: A Moderating Influence or Threat to Democracy? 2011, Independent Study Project Collection. Paper 1219, 40 p.http://digitalcollections.sit.edu/isp_collection/1219 /11.05.2015/.

[48] Lijphart A., Constitutional Design for Divided Societies. Journal of Democracy, Vol 15, issue 2, 2014, p. 96-109.

[49] Տե՛ս Lijphart A., Democracy in Plural Societies: A Comparative Exploration. Yale University Press, 1977, 268 p.

Կոնսոցիատիվ ժողովրդավարություն

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը ենթադրում է հասարակության տարբեր հատվածների քաղաքական էլիտաների համագործակցություն բազմական (այսինքն՝ բազմամշակութային, բազմազգ) հասարակություններում: Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը հիմնված է չորս հիմնական սկզբունքների վրա: Առաջին և կարևորագույն տարրերից մեկը բազմական հասարակության բոլոր հիմնական հատվածների քաղաքական առաջնորդների «***Մեծ կոալիցիայի***» միջոցով իշխանության իրականացումն է: Երկրորդը ***փոխադարձ վետոյի*** իրավունքն է: Երրորդը ***համամասնությունն*** է, որպես քաղաքական ներկայացուցչության գլխավոր սկզբունք: Եվ չորրորդը յուրաքանչյուր սեգմենտի բարձր աստիճանի ***ինքնավարությունն*** է իր ներքին գործերի կառավարման առումով[50]:

Դիտարկենք այս չորս տարրերն առանձին:

Մեծ կոալիցիա

Կոնսոցիատիվ ժողովրդավարության առաջնային բնորոշ հատկանիշն այն է, որ բազմական հասարակության բոլոր հիմնական հատվածների քաղաքական առաջնորդները երկիրը կառավարելու գործում համագործակցում են մեծ կոալիցիայի շրջանակներում:

Նույնիսկ այն երկրներում, որոնք բազմական չեն, կարող են ձևավորվել մեծ կոալիցիաներ որպես ժամանակավոր միջոցներ հաղթահարելու ներքին կամ արտաքին լուրջ ճգնաժամերը:

Մեծ կոալիցիայի կարևորագույն առանձնահատկությունը ոչ թե վերջինիս հատուկ ինստիտուցիոնալ կառուցվածքն է, այլ բոլոր հիմնական հատվածների մասնակցությունը բազմական հասարակու-

---

[50] Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/ files/ File/ Leiphart1992-3.pdf /15.04.2014/.

թյան կառավարմանը[51]: Մեծ կոալիցիան բազմական հասարակությունում նշանակալի ազդեցություն ունեցող սեգմենտների քաղաքական էլիտաների համագործակցությունն է պետության կառավարման հարցերում: Այս կոալիցիան ոչ թե ի սկզբանե կոնսոցիատիվ գործընթացների արդյունք է, այլ սեգմենտների քաղաքական էլիտաների համագործակցության ձգտման արդյունք, ինչն էլ իր հերթին հիմք է ստեղծում քաղաքականության կոնսոցիատիվ կառուցվածքի ձևավորման համար[52]:

Մեծ կոալիցիայում մասնակցությունը հասարակության հատվածներին տալիս է անվտանգության կարևոր քաղաքական երաշխիք:

Անվտանգության ապահովումը և հասարակության ներդաշնակ զարգացումը քաղաքագիտության առաջնային պրոբլեմներից մեկն է և յուրաքանչյուր պետության առաջնակարգ խնդիրը: Սակայն տարբեր պետություններ (ունիտար, բազմական, դեմոկրատական, բռնապետական) ունեն այս խնդիրների վերաբերյալ սեփական պատկերացումները և հասարակության մեջ առկա խնդիրների լուծման սեփական մեթոդները՝ դեմոկրատական, էթնոկրատական և այլ ճանապարհներով:

Պետք է ընդունել, որ հատվածների առկայութունը բազմական հասարակություններում և դրանց միջև տարբերությունների խորությունը, սովորաբար, փոխվում է ժամանակի ընթացքում: Երկրում խորը տարբերությունները կարող են հանգեցնել զանգվածային բռնությունների կամ սպառնալ երկրի գոյությանը: Այստեղ վտանգը հատկապես ինքնավարության ձգտումն է կամ, առավել հաճախ, անկախության ձգտումը, հատկապես, եթե մշակութային տարբերու-

---

[51] Նույն տեղում:

[52] Ормонбеков Ж., Теория консоционализма Аренда Лейпхарта. / Журнал «Казанский федералист» / 2007 / Номер 1-2 (21-22), зима-весна, 2007 / II. Теоретические вопросы в исследованиях мультикультурных сообществ.
http://www.kazanfed.ru/publications/kazanfederalist/n21-22/9/ /15.05.2015/.

թյունները համընկնում են աշխարհագրական տեղակայության տարբերության հետ[53]:

Սակայն խորքային տարբերություններ կարող են առաջանալ հիմնականում բազմական կամ «ճաքած երկրներում», որտեղ մեծ խմբերը պատկանում են տարբեր քաղաքակրթությունների: Նման տարբերությունները և դրանց ուղեկցող լարվածությունը հաճախ հանգեցնում են այն բանի, որ հիմնական խումբը, որը պատկանում է տվյալ քաղաքակրթությանը, փորձում է երկիրը դիտարկել որպես սեփական քաղաքական գործիք և իր լեզուն, կրոնը և խորհրդանիշները փորձում է դարձնել պետական[54] և պարտադրել հասարակության մյուս խմբերին:

Մեծամասնության իշխանությունից հրաժարվելը հանգեցնում է սեգմենտների ինքնավարության: Սա մեծ կոալիցիայի սկզբունքի տրամաբանական արդյունքն է: Ընդհանուր նշանակություն ունեցող հարցերը պետք է ընդունվեն բոլոր սեգմենտների հետ միասին՝ ազդեցության համամասնական սկզբունքով: Իսկ մյուս բոլոր հարցերում (ոչ ընդհանուր նշանակություն ունեցող - Հ. Սուքիասյան)՝ որոշումների ընդունումը և իրականացումը կարող է թողնվել սեգմենտներին[55]:

Պետության սոսնձող գործառույթը բազմական, բաժանված հասարակություններում պետք է լինի համայնքի մաս կազմող խմբերի փոխադարձ հարաբերությունների ներդաշնակեցումը[56]:

Ինչո՞ւ է այդքան կարևոր մեծ կոալիցիայի առկայությունը կոնսոցիատիվ ժողովրդավարության պայմաններում: Բազմական հասարակության այս կամ այն ինքնավար սեգմենտների քաղաքական էլի-

---

[53] Huntington S., The Clash of Civilizations and the Remaking of World Order. N.Y., Simon & Schuster, 1996, p. 137.

[54] Նույն տեղում, էջ 137:

[55] Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru /files/ File/ Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

[56] Dernbinska M., Aménagements politiques dans les sociétés multiculturelles. Développements en Europe centrale et de l'est. Thèse de Ph.D. en science politique, Université de Montréal, 2007, p. 6.

տաները սեգմենտների գաղափարների կամ պահանջների հիմնական կրողներն ու դրանք ներկայացնողներն են: Եթե էլիտաների դերը նշանակալի չլիներ, իսկ հիմնական պահանջները ներկայացնեին զանգվածները, կստեղծվեին ճգնաժամային իրավիճակներ և ոչ թե քաղաքական կոմպրոմիս, ինչը հնարավոր է կոնսոցիատիվ ժողովրդավարության պայմաններում էլիտաների մակարդակով[57]:

Պետության սահմանադրությունը դոմինանտ ազգից բացի պետք է ճանաչի նաև մյուս համայնքների, սեգմենտների իրավունքները՝ հատկապես բազմական հասարակություններում:

Այսպիսով, սահմանադրության մեջ պետք է սահմանվի, ընդգրկվի համայնքի, հասարակության բոլոր հատվածների գոյությունն ու իրավունքները, որտեղ պետությունը չի պատկանում մի ազգի, այլ տվյալ հանրույթի յուրաքանչյուր ինքնուրույն քաղաքացու՝ հաշվի առնելով նրանց մշակութային պատկանելիությունը[58]:

Բազմական հասարակություններում կարևորագույն մեթոդաբանական հարցը հետևյալն է. ինչպե՞ս ապրել միասին:

Պետության հետերոգենության ճանաչումը, ընդունումը և այդ շրջանակենրում հարաբերությունների կազմակերպումը հնարավոր է դարձնում քաղաքական ընկերաբանության գաղափարը[59], քաղաքական ընկերակցությունը:

Հնարավոր քաղաքական զարգացումների վերաբերյալ երկխոսություն սկսելու համար մենք պետք է նախ ընդունենք, որ մենք մենակ չենք[60]: Մյուս խմբերի գոյության ընդունումը, ճանաչումը չափազանց կարևոր է:

---

[57] Ормонбеков Ж., Теория консоционализма Аренда Лейпхарта. / Журнал «Казанский федералист» / 2007 / Номер 1-2 (21-22), зима-весна, 2007 / II. Теоретические вопросы в исследованиях мультикультурных сообществ.
http://www.kazanfed.ru/publications/kazanfederalist/n21-22/9/ /15.05.2015/.

[58] Dernbinska M., Aménagements politiques dans les sociétés multiculturelles. Développements en Europe centrale et de l'est. Thèse de Ph.D. en science politique, Université de Montréal, 2007, p. 66.

[59] Նույն տեղում, էջ 66:

[60] Նույն տեղում, էջ 65:

Խորհրդարանական համակարգերում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրառումը ավելի դյուրին է, քան նախագահական հանրապետություններում: Քանի որ նախագահական հանրապետությունը ենթադրում է մեկ առաջնորդի գերիշխող դիրք, ապա այս համակարգը այնքան էլ հարմար չէ կոնսոցիատիվ ժողովրդավարության համար, և, ընդհակառակը, խորհրդարանական հանրապետությունը ենթադրում է կոլեգիալ կաբինետի գոյություն, որտեղ կարող են ներկայացված լինել հասարակության բոլոր հիմնական հատվածները[61]:

Փոխադարձ վետո

Կոնսոցիատիվ ժողովրդավարության գործառնության առաջին և ամենակարևոր մեթոդն այն է, երբ մեծ կոալիցիան այս կամ այն ձևով լրացվում է ևս երեք օժանդակ մեխանիզմներով՝ փոխադարձ վետո, համամասնություն և ինքնավարություն: Այս չորս մեթոդները սերտորեն փոխկապակցված են և դրանք բոլորն էլ հակադրվում են «մեծամասնության իշխանության» բոլոր ձևերին[62]:

Որոշումները պետք է կայացվեն մեծ կոալիցիայի կողմից. որոշումներն ընդունվում են քվեարկությամբ, և չնայած կոալիցիայում ներկայությունը փոքրամասնությանը հնարավորություն է տալիս առավելագույնս ակտիվորեն պաշտպանել սեփական դիրքորոշումը կոալիցիոն գործընկերների առջև, այնուամենայնիվ՝ մեծամասնությունը սեփական քվեարկությամբ կարող է տապալել ցանկացած օրինագիծ կամ գործընթաց[63]:

Եթե մեծամասնության կողմից ընդունված որոշումները վերաբերում են փոքրամասնության հատվածների կենսական շահերին,

---

[61] Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/ files/File/ Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

[62] Նույն տեղում:

[63] Նույն տեղում:

ապա կոալիցիայում պարզ մեծամասնության սկզբունքը բնականաբար չի կարող բավարարել փոքրամասնությանը. այսպիսի կոալիցիան (ինչքան էլ մեծ լինի) չի կարող ունենալ որևէ արդյունավետություն: Այս իսկ պատճառով՝ մեծ կոալիցիայի սկզբունքին պետք է ավելացնել նաև փոքրամասնությունների վետոյի իրավունքը: Միայն նման վետոյի իրավունքը յուրաքանչյուր հատվածին կտա քաղաքական անվտանգության լիարժեք երաշխիք: Փոքրամասնությունների վետոյի իրավունքը համապատասխանում է Ջոն Կալհոունի «համարժեք մեծամասնություն» սկզբունքին, որի հիմնական նպատակը բազմական հասարակություններում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն է[64]:

Առաջին հերթին պետք է նշել, որ վետոն ունի փոխադարձ նշանակություն. բազմական հասարակության բոլոր հատվածները օժտված են վետոյի իրավունքով և միշտ էլ կարող են օգտվել այդ իրավունքից: Կալհոունը օգտագործում է «փոխադարձ ժխտում» եզրույթը որպես «համարժեք մեծամասնության» հոմանիշ[65]: Փոխադարձ վետոյի առկայությունը կանխում է մեծ կոալիցիայում որևէ խմբի գերիշխանության ձգտելու հնարավորություններն ու հավակնությունները՝ որոշակիորեն պահպանելով հավասարակշռությունը:

Փոխադարձ վետոն կարող է լինել ոչ ֆորմալ, չգրված փոխհամաձայնության սկզբունքով (Հոլանդիան և Շվեյցարիան ոչ ֆորմալ, ոչ պաշտոնական վետոյի կիրառման օրինակներ են), կարող է լինել իրավաբանորեն ձևակերպված նորմ, կարող է ամրագրված լինել նաև սահմանադրությամբ: Բելգիայում փոխադարձ վետոն ոչ այլ ինչ էր, քան կաթոլիկ, սոցիալիստական և ազատական «հոգևոր ընտանիքների» (families spirituelles) միջև ոչ ֆորմալ սկզբունք, սակայն վետոյի իրավունքը ամրագրված է սահմանադրության մեջ այն հարցե-

---

[64] Calhoun J., A Disquisition on Government. N.Y., 1953, p. 28. (Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/).

[65]Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/files/ File/ Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

րի համար, որոնք վերաբերում են լեզվական խմբերի շահերին[66]: Այսօր արդեն վետոյի իրավունքը կայուն կերպով մտել է Բելգիայի կոնսոցիատիվ քաղաքականության մեջ: Բելգիայի դաշնային խորհրդարանում որոշումները չեն կարող ընդունվել առանց լեզվական խմբերի հավանության[67]:

Վերլուծելով վետոյի կիրառման պրակտիկան՝ Լեյփհարթը նշում է, որ փոքրամասնության համար վետոյի իրավունքը առավել արդյունավետ է այն դեպքում, երբ այն սահմանափակվում է մշակութային, կրոնական և լեզվական իրավունքների և ինքնավարության հարցերով և ունի ֆորմալ և ճկուն բնույթ, սակայն չունի համակողմանի նշանակություն (ինչպես Կիպրոսը) և ամրագրված չէ սահմանադրությամբ[68]:

Համամասնության սկզբունքը

Համամասնության սկզբունքը ևս մեծապես տարբերվում է մեծամասնության իշխանության գաղափարից, և, ինչպես փոխադարձ վետոն, այն ևս սերտորեն կապված է մեծ կոալիցիայի սկզբունքի հետ:

Համամասնությունն ունի մի շարք կարևոր գործառույթներ: Առաջին հերթին այն համարվում է պետական կառավարման համակարգում հատվածների միջև պաշտոնների բաշխման մեթոդ: Այս իմաստով՝ համամասնության սկզբունքը հակադրվում է «հաղթողը ստանում է ամենը» մեծամասնության իշխանության պարզ սկզբուն-

---

[66] Նույն տեղում:

[67] Ормонбеков Ж., Теория консоционализма Аренда Лейпхарта. / Журнал «Казанский федералист» / 2007 / Номер 1-2 (21-22), зима-весна, 2007 / II. Теоретические вопросы в исследованиях мультикультурных сообществ. http://www.kazanfed.ru/publications/kazanfederalist/n21-22/9/ /15.05.2015/.

[68] Рагозин Н., Очерки современной демократии. Украинские проблемы в контексте международного опыта. Донецк, издательство "Донбасс", 2003, с. 97.

քին[69]: Համամասնությունը կառավարման ապարատում պետական պաշտոնների, ինչպես նաև ֆինանսական միջոցների բաշխման սկզբունքն է[70]: Այսինքն՝ կոնսոցիատիվ ժողովրդավարությունն իրենից ներկայացնում է ոչ թե պարզապես խմբային ներկայացուցչության մեխանիզմ, այլ ինստիտուտների բարդ համակարգ, որն ապահովում է հասարակության բոլոր հատվածների համամասնական ներկայացուցչությունը, իշխանության հավասարակշռությունը, զբաղումների համակարգը և խմբերի միջև համագործակցությունը:

Սեգմենտների ինքնավարությունը և ֆեդերալիզմը

Բազմական հասարակություններում մեծամասնության գերիշխանությունից/ էթնոկրատիայից խուսափելու վերջին ձևը բազմական հասարակության հատվածների ինքնավարությունն է, որը հանգեցնում է հատվածների ինքնակառավարմանը:

Կան նույնիսկ կարծիքներ, որ ինքնավարությունը կարող է դիտարկվել որպես ինքնորոշման ձև[71]:

Ընդհանրապես, ինքնավարության ձգտումը բնորոշ է բոլորին, նույնիսկ անհատներին: «Յուրաքանչյուր խումբ հավատարիմ է իր կրոնին, իր մշակույթին և լեզվին, իր իդեալներին ու կենսաձևին»[72]: Դե իսկ կոլեկտիվները, էթնիկ, ազգային, մշակութային խմբերը,

---

[69] Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/files/ File/ Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

[70] Ормонбеков Ж., Теория консоционализма Аренда Лейпхарта. / Журнал «Казанский федералист» / 2007 / Номер 1-2 (21-22), зима-весна, 2007 / II. Теоретические вопросы в исследованиях мультикультурных сообществ.
http://www.kazanfed.ru/publications/kazanfederalist/n21-22/9/ /15.05.2015/.

[71] www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc /13.04.2014/.

[72] Furnivall J., Colonial Policy and Practice: A Comparative Study of Burma and Netherlands India. Cambridge, 1948. p. 304. *(*Лейпхарт А. Многосоставные общества и демократические
режимы).http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publikacii_Polisa/L/1992-1-21-Lijphart-Mnogosotavnie_obshestva_i_demokraticheskie_rezhimi.pdf /15.04.2014/*)*

հատկապես նրանք, ովքեր ապրում են հավաք (կոմպակտ), օբյեկտիվորեն ձգտելու են ինքնավարության, քանի որ ունեն սեփական շահերի ագրեգացման խնդիր:

Ինչպես նշում է Վ. Աչկասովը՝ նման խմբերի անդամները մեծ համայնքի լիարժեք ներկայացուցիչներ են, բայց միևնույն ժամանակ կարող են հավատարիմ մնալ իրենց էթնիկ խմբին, նրա մշակութային ժառանգությանը: Ինքնավարության իրավունքը թույլ է տալիս պահպանել և զարգացնել սեփական մշակույթը և քաղաքական ավանդույթները[73]:

Համայնքում միասնության և ներդաշնակության ստեղծման և պահպանման համար ինքնավարությունը կամ ֆեդերալիզմը ուղղված է ոչ թե էթնիկ, մշակութային և լեզվական տարբերությունների ասիմիլացիային, այլ համայնքում դրանց պահպանմանը: Եվ այստեղ խոսքը ոչ թե բաժանելու ցանկության, այլ ինտեգրման պահանջի մեջ է. ինտեգրում՝ տարանջատումով:

Իշխանությունը, հեղինակությունը այն մեխանիզմներից մեկն է, որի միջոցով իրականացվում է ինտեգրումը, քանի որ այն դիտարկվում է որպես լեգիտիմ իրավունք[74]:

Այս դեպքում մեծ համայնքի ինքնակառավարումը հիմնված է սերտ փոխհարաբերությունների և փոխադարձ հետաքրքրության վրա, որոնք միավորում են դրա բաղադրիչ խմբերը: Սա ոչ միայն թույլ է տալիս էթնիկ խմբերի և փոքրամասնությունների (կարդա համայնքի մաս կազմող խմբերի) ներկայացուցիչներին կառավարել իրենց մշակութային կյանքը, այլև ապահովում է իրավական պաշտպանություն, ֆինանսական աջակցություն և ինքնակառավարման որոշակի իրավունքներ: Նման քաղաքականությունը թույլ է տալիս

---

[73] Ачкасов В., Конфликтный потенциал этнофедерализма // ПОЛИТЭКС. Политическая экспертиза. Т.4. № 2. СПб., Изд.СПб, 2008.
http://www.politex.info/content/view/430/30/ (16.05.2018)

[74] Laurin-Frenette N., Classes sociales et pouvoir Les théories fonctionnalistes. Montréal, les Presses de l'Université de Montréal, 1978, p. 141.

բոլոր խմբերին ինտեգրվել ավելի մեծ համայնքներին տնտեսական և քաղաքական կարիքների համար[75]:

Աշխարհում դժվար է գտնել ամբողջապես հեգեմոն պետություններ. գրեթե բոլոր երկրներում էլ կան որոշակի առանձնացված խմբեր: Սակայն մենք կարող ենք խոսել պետության հատվածականության, նրա բազմականության մասին այն դեպքում, երբ տվյալ հասարակության մեջ առկա խմբերը, հատվածները ունեն կամ ձեռք են բերում քաղաքական բնույթ[76]:

Հատվածների ինքնավարության հատուկ ձև է նաև ֆեդերալիզմը: Թեև, իհարկե, հարկ է նշել, որ ֆեդերալիզմ կարող է գոյություն ունենալ նաև ոչ բազմական հասարակություններում (օրինակ՝ Ավստրիա): Ֆեդերալիզմի տեսության մեջ բազմաթիվ զուգահեռներ կան կոնսոցիատիվ ժողովրդավարության հետ. այս զուգահեռները ոչ միայն պետության բաղկացուցիչ մասերին ինքնավարության տրամադրումն է (ինչը ֆեդերալիզմի ամենակարևոր առանձնահատկությունն է), այլև փոքր կազմավորումների՝ խորհրդարանի «դաշնային» պալատում պատշաճ ներկայությունը: Այսպիսով՝ ֆեդերալիզմի տեսությունը կարելի է դիտարկել որպես կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսության սահմանափակ և հատուկ տեսակ: Համանմանության սկզբունքով՝ ֆեդերալիզմը կարելի է դիտարկել որպես կոնսոցիատիվ մեթոդ այն բազմական հասարակությունների համար, որոնք համարվում են «դաշնային», այսինքն՝ այն հասարակությունները, որտեղ յուրաքանչյուր հատված կենտրոնացած է որոշակի տարածքում[77]:

---

[75] Ачкасов В., Конфликтный потенциал этнофедерализма // ПОЛИТЭКС. Политическая экспертиза. Т.4. № 2. СПб., Изд.СПб, 2008.
http://www.politex.info/content/view/430/30/ (16.05.2018)

[76] Ормонбеков Ж., Теория консоционализма Аренда Лейпхарта. / Журнал «Казанский федералист» / 2007 / Номер 1-2 (21-22), зима-весна, 2007 / II. Теоретические вопросы в исследованиях мультикультурных сообществ.
http://www.kazanfed.ru/publications/kazanfederalist/n21-22/9/ /15.05.2015/.

[77] Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/ files/File /Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

Որոշ պետություններ, որոնք իրականացնում են ֆեդերալիզմի այս կամ այն մոդելը, նպատակ են հետապնդում միավորել բազմաթիվ էթնոմշակութային խմբերին ավելի մեծ քաղաքական համայնքների մեջ՝ թողնելով նրանց անդամներին իրենց առանձնահատկությունը պահպանելու իրավունքը: Նման խմբերի անդամները մեծ համայնքի լիարժեք ներկայացուցիչներ են, բայց միևնույն ժամանակ կարող են հավատարիմ մնալ իրենց էթնիկ խմբին, նրա մշակութային ժառանգությանը: Ինքնավարության իրավունքը թույլ է տալիս պահպանել և զարգացնել սեփական մշակույթը և քաղաքական ավանդույթները[78]:

Ֆեդերալիզմը ոչ միայն թույլ է տալիս էթնիկ խմբերի և փոքրամասնությունների ներկայացուցիչներին կառավարել իրենց մշակութային կյանքը, այլև ապահովում է իրավական պաշտպանություն, ֆինանսական աջակցություն և ինքնակառավարման որոշակի իրավունքներ: Նման քաղաքականությունը թույլ է տալիս փոքրամասնություններին ինտեգրվել ավելի մեծ համայնքներին, քաղաքական ներկայացուցչության միջոցով ապահովել սեփական տնտեսական և քաղաքական պահանջմունքները[79]:

Ֆեդերալիզմը մեխանիզմ է, որը հնարավորություն է տալիս հարմարվել երկրի բազմազանությանը՝ ստեղծելով ընդհանուր կապեր, որոնք միավորում են մի շարք էթնոմշակութային համայնքների: Դա բավարարում է էթնոմշակութային խմբերի կոնկրետ շահերը՝ միևնույն ժամանակ ապահովելով միասնական կառույց և կապ, որը միավորում է այդ համայնքները միասնական պետության մեջ[80]:

Ֆեդերալիզմը մարմնավորում է իր մեջ ինքնակառավարումը և համատեղ կառավարումը: Պետական համակարգը, կազմված դաշնային սկզբունքների հիման վրա, իրենից ներկայացնում է հասարակական դաշինք:

---

[78] http://www.politex.info/content/view/430/30/

[79] Kymlicka W. Multicultural Citizenship: A Liberal Theory of Minority Rights. Oxford, 1995, 260 p.

[80] http://www.politex.info/content/view/430/30/

Արդյունավետ գործող դաշնային միություններում բազմաթիվ որոշումների կայացման լիազորությունները ապակենտրոնացված են: Եթե դաշնության սուբյեկտների տարածքները համընկնում են էթնիկական, լեզվական կամ կրոնական խմբերի սահմաններին, ապա ֆեդերալիզմը կարող է դառնալ էթնոմշակութային տարբերությունների տարածաշրջանային կառավարման արդյունավետ ձև:

Որպեսզի ֆեդերալիզմը դառնա հակամարտությունների կարգավորման արդյունավետ մեխանիզմ,- գրում են Ջ. Մակքեյը և Վ. Օ'Լիրին, անհրաժեշտ է, որ համապատասխան էթնիկ համայնքները աշխարհագրորեն բավականաչափ առանձնացված լինեն: Երբ խմբերը տեղակայված են որոշակի տարածքում, ֆեդերալիզմը դառնում է բավարար ինքնավարության ապահովման մեխանիզմ[81]:

Ֆ. Ռատցելը, լինելով պետության օրգանական ծագման տեսության կողմնակից, ձևակերպել է «տարածություն» (Raum) կատեգորիայի նոր բովանդակություն: Ըստ նրա՝ տարածությունը քանակական-նյութական կատեգորիայից փախակերպվում է նոր որակի՝ վերածվելով «կենսատարածքի» (Lebensraum), ինչը իր հերթին պայմանավորում է այնպիսի հասկացությունների առաջացումը, ինչպիսիք են՝ «տարածական զգացողությունը» («Raumsinn») և «կենսաէներգիան» (Lebensenergie), որոնք բնորոշում են աշխարհագրական համակարգերը՝ նախորոշելով նրանց քաղաքական ձևակերպումները[82]: Սա ևս մեկ անգամ ապացույցն է այն բանի, որ էթնիկ, ազգային խմբերը, հատկապես նրանք, ովքեր ապրում են հավաք, նույնականանում են իրենց տարածքի հետ և, բնականաբար, հավատարիմ են իրենց մշակույթին, լեզվին, ավանդույթներին:

Պատճառներից մեկը, որոնց հիմքով Է. Նոդլինգերը բազմական հասարակություններում կոնֆլիկտների լուծման եղանակների շար-

---

[81] McGarry and O'Leary, B. (1993). Introduction: The macro-political regulation of ethnic conflict. The Politics of Ethnic Regulation, London and New York: Routlege, p. 1-40.

[82] Տե՛ս Яковюк И. Идея серединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

քում բացառում է ֆեդերալիզմը և հատվածների ամբողջական ինքնավարությունը, այն է, որ դրանք կարող են հանգեցնել պետության փլուզմանը: «Աշխարհագրորեն մեկուսացված (կոմպակտ ապրող - Հ. Սուքիասյան) հատվածների համադրությունը մասնակի ինքնավարությամբ ենթադրյալ ֆեդերալիզմով երբեմն լրացուցիչ խթան է հանդիսանում ավելի մեծ ինքնավարություն պահանջելու համար», իսկ երբ այդ պահանջները մերժվում են, դրանց «կարող են հետևել անջատումը և քաղաքացիական պատերազմը»[83]:

Ա. Լեյփհարթը մեկ լուրջ առարկություն է ներկայացնում Նորդլինգերի փաստարկի դեմ՝ նշելով, որ ոչ բոլոր դեպքերում է պետք բազմական հասարակություններում առաջացող հակասությունների լուծման համար անջատումը համարել անցանկալի[84]:

Այնտեղ, որտեղ բաժանումը հնարավոր է, այսօրվա քաղաքական գործիչները պետք է դրան մեծ հանդուրժողականությամբ վերաբերվեն[85]:

Միջազգային քաղաքականությունում պետական ինստիտուտների դերի փոփոխությունը անմիջականորեն պետք է ուղեկցվի նաև պետության ներսում այդ ինստիտուտների ներքին կառուցվածքային առաջնահերթությունների փոփոխությամբ: Այդ ինստիտուտներից շատերը, որոնք ժամանակին համարվում էին պետության զարգացման հիմքը, օրինակ՝ պետական սահմանների անխախտելիության սկզբունքը, այսօր ուղղակի հակասության մեջ են գտնվում պետության զարգացման տեսանկյունից (հատկապես՝ սահմանների անխախտելիության սկզբունքը բազմական հասարակությունների պա-

---

[83] Лейпхарт А., Со-общественная демократия. (Nordlinger E., Conflict Resolution in Divided Societies. - "Occasional Papers in International Affairs". N 29. Cambridge (Mass.), 1972. p. 32).http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

[84] Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

[85] Նույն տեղում:

ռագայում՝ Հ. Սուքիասյան) և ունեն ապակայունացնող գործառույթ[86]:

Քաղաքական ապահարզանի վերաբերյալ գիտական միջավայրում գերակայող զգուշավորությունը հիմնված է միջազգային հարաբերությունների տեսության ավանդական դիրքորոշման վրա, ըստ որի՝ ցանկացած հակամարտության արմատը, հատկապես՝ բազմական հասարակություններում, ընդհանուր կառավարության բացակայությունն է: Սա կարելի է դիտարկել բազմական հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության անհրաժեշտությունը հիմնավորող պատճառներից մեկը:

Ամեն դեպքում, անջատումը պետք է դիտարկել որպես հնարավոր տարբերակ, ինչը արժանի է առնվազն անաչառ գնահատականի՝ բաժանման դեմ քաղաքական գործիչների և գիտնականների դիմակայությանը:

Մարտահրավեր ժողովրդավարության հոռետեսներին

Իհարկե, ժողովրդավարությունը ունեցել է շատ ձախողումներ, իսկ վերջին տարիներին բազմական հասարակություններում բազմաթիվ բռնություններ են տեղի ունեցել, և հենց այս համատեքստում էլ ժողովրդավարության զարգացման հեռանկարները պահպանում են իրենց կարևորությունը: Այն, որ բազմական հասարակությունում դժվար է հասնել կայուն ժողովրդավարական կառավարման և պահպանել այն, քաղաքագիտության մեջ ամուր հաստատված կարծիք է: Դրա խորքերը կարելի է գտնել նաև Արիստոտելի այն ձևակերպման մեջ, որ պետությունն առավելապես ձգտում է ապահովել բոլորի հավասարությունը[87]: Սոցիալական միասնականությունը և քաղաքական

---

[86] Этнические и региональные конфликты в Евразии. Книга 2. *Россия, Украина, Белоруссия.* Общ. ред. Зверев А., Коппитерс Б., Тренин Д. “Весь Мир”, М., 1997, с. 141.

[87]Лейпхарт А., Многосоставные общества и демократические режимы http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publikacii_Polisa/L/1992-1-21-Lijphart-Mnogosotavnie_obshestva_i_demokraticheskie_rezhimi.pdf /15.04.2014/.

համաձայնությունը դիտարկվում են որպես անհրաժեշտ պայմաններ կամ գործոններ, որոնք մեծապես նպաստում են կայուն ժողովրդավարության ձևավորմանը: Եվ, ընդհակառակը, խորը սոցիալական տարբերությունները և քաղաքական հակասությունները բազմական հասարակություններում համարվում են անկայունության և ժողովրդավարության կործանման աղբյուր[88]: Այնուամենայնիվ՝ հասնել կայուն ժողովրդավարական կառավարման և պահպանել այն բազմական հասարակություններում թեև դժվար է, սակայն ոչ անհնարին:

Ժողովրդավարության վերաբերյալ հոռետեսական մոտեցումներ ունեցողները պետք է հաշվի առնեն մեկ բան. իրենց տրամադրվածության մեջ առկա է հետևյալ վտանգը. եթե քաղաքական գործիչները և քաղաքագետները պետք է անընդհատ ենթադրեն, որ ժողովրդավարությունը «չի աշխատում» բազմական հասարակություններում, այս պայմաններում նրանք չեն էլ փորձի ստեղծել և աշխատեցնել ժողովրդավարությունը: Նման բացասական մոտեցումը, բնականորեն, միայն կմեծացնի այն բանի հավանականությունը, որ այդ երկրներում կշարունակեն տիրել հակաժողովրդավարական վարչակարգեր[89]:

Բազմական հասարակություն

Բազմական հասարակությունը (plural society), համաձայն Հ. Էկստայնի սահմանման, բաժանված է «հատվածականացված (սեգմենտար) հակասություններով»: Ըստ Էկստայնի՝ նման հակասություններ գոյություն ունեն այնտեղ, որտեղ քաղաքական հակասությունները մեծ հաշվով համընկնում են հասարակության սոցիալական բաժանման գծի հետ[90]: Հատվածականացված հակասությունները կարող են լինել կրոնական, գաղափարական, լեզվական, տարա-

---

[88] Նույն տեղում:

[89] Նույն տեղում:

[90] Eckstein H., Division and Cohesion in Democracy: A Study of Norway. Princeton, 1966, p. 34. (Лейпхарт А., Многосоставные общества и демократические режимы). http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publikacii_Polisa/L/1992-1-21-Lijphart-Mnogosotavnie_obshestva_i_demokraticheskie_rezhimi.pdf /15.04.2014/).

ծաշրջանային, ռասայական, ազգային կամ մշակութային բնույթի: Ջ. Ֆերնիվալը մշակութային տարբերությունները դիտարկում է որպես բազմական հասարակությունների բնութագրիչ առանձնահատկություններից մեկը: «Յուրաքանչյուր խումբ հավատարիմ է իր կրոնին, իր մշակույթին և լեզվին, իր իդեալների ու կենսաձևին»: Ֆերնիվալը բազմական հասարակությունը սահմանում է որպես հասարակություն, որտեղ վերջինիս տարբեր մասերը ապրում են միասնական քաղաքական կազմավորման մեջ կողք կողքի, սակայն մեկը մյուսից առանձին»[91]:

Կոնսոցիատիվ ժողովրդավարության թերությունները

Կոնսոցիատիվ ժողովրդավարության վերաբերյալ քննադատության և մտահոգությունների հետ կապված թերևս առավել լուրջ խնդիրը կապված է այն բանի հետ, որ նրա առանձին բնորոշ հատկանիշներ տարբեր հարցերում կարող են հանգեցնել անվճռականության և անարդյունավետության: Օրինակ՝ մեծ կոալիցիայի իշխանությունը գործնականում նշանակում է, որ որոշումների կայացման գործընթացը կլինի շատ ավելի դանդաղ: Համաձայնության շատ ավելի հեշտ է հասնել նեղ կոալիցիայում քաղաքական հայացքների ոչ մեծ տարբերությամբ և քանակով, քան լայն կոալիցիայում, որը ներկայացնում է բազմական հասարակության ողջ սպեկտրը:

Կոնսոցիատիվ ժողովրդավարության վերաբերյալ ևս մեկ առարկություն կապված է փոխադարձ վետոյի հետ: Նշվում է, որ փոխադարձ վետոն կարող է որոշումների ընդունման գործընթացը ամբողջությամբ կաթվածահար անել: Սա կարող է հանգեցնել հենց այն

---

[91] Furnivall J., Colonial Policy and Practice: A Comparative Study of Burma and Netherlands India. Cambridge, 1948. p. 304. (Лейпхарт А., Многосоставные общества и демократические режимы).
http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publikacii_Polisa/L/1992-1-21-Lijphart-Mnogosotavnie_obshestva_i_demokraticheskie_rezhimi.pdf /15.04.2014/).

նույն անկայունության և լճացման, որի դեմ կոչված է պայքարելու կոնսոցիատիվ ժողովրդավարությունը:

Այնուամենայնիվ, կարծում ենք՝ քիչ հավանական է, որ փոքրամասնության հատվածները կօգտվեն վետոյի իրավունքից չափից ավելի հաճախ, քանի որ դա կարող է վնասել նաև հենց փոքրամասնությունների շահերին: Երկրորդ, այն փաստը, որ զինանոցում միշտ էլ կա վետոյի իրավունք, փոքրամասնությանը տալիս է վստահություն:

Հաջորդ քննադատությունը կապված է այն հանգամանքի հետ, որ համամասնությունը՝ որպես պետական պաշտոնների բաշխման սկզբունք, նշանակում է, որ որևէ հատվածին պատկանելիությունը կլինի ավելի առաջնային, քան թեկնածուի անհատական որակները, իսկ սա կարող է վնասել կառավարման ապարատի արդյունավետությանը: Բայց սա, իհարկե, չի նշանակում, որ կոնկրետ խմբի ներկայացուցիչը չի կարող ունենալ նաև համապատասխան որակներ: Այնպես որ, կարծում ենք՝ այս մոտեցումը այնքան էլ հիմնավոր չէ:

Հաջորդ քննադատական նկատառումը՝ կապված կոնսոցիատիվ ժողովրդավարության գործառնության հետ այն է, որ բազմական հասարակության հատվածների ինքնավարությունը բառացիորեն շատ թանկ արժե. այն պահանջում է կառավարական և վարչական ծառայությունների թվի աճ, մեծ կոալիցիայում յուրաքանչյուր հատվածի համար առանձին կառույցների ստեղծում, ինչն էլ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը դարձնում է կառավարման շատ թանկ ձև[92]:

Կոնսոցիատիվ ժողովրդավարության վերաբերյալ ևս մեկ քննադատություն կապված է այն հանգամանքի հետ, որ հատվածների ինքնավարությունը մեծացնում է առանց այդ էլ անհամասեռ հասարակության բազմականության բնույթը: Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը (համենայնդեպս՝ իր նախնական փուլում) բազմական հասարակությունը դարձնում է էլ ավելի տարասեռ: Մի կողմից՝ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը օգնում է կանխելու կոնֆլիկտները,

[92] Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

մյուս կողմից՝ ամրապնդում է էթնիկական սահմանները և քաղաքականացնում է էթնիկականությունը[93]: Քննադատները նշում են, որ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը անխուսափելիորեն հանգեցնում է մշակութային էթնոկենտրոն պատկերացումների աճին և հանգեցնում է հասարակական գիտակցության մեջ ցանկացած սոցիալական խնդիրների և գործընթացների մեկնաբանությունը էթնիկ կամ ազգային դիտանկյունից ներկայացնելուն[94]: Մշակութային և սոցիալական ինքնությունը (ինքնությունը սոցիալական կառույց է. այն ձևավորվում է աշխարհի, սոցիալական միջավայրի հետ անհատական հարաբերությունների մեջ) բազմակողմ, բազմաչափ երևույթներ են, որոնք լրացնում են միմյանց որոշ համատեքստում և հակադրվում են միմյանց էթնիկ հակամարտությունների դեպքում[95]:

Համապատասխանաբար, դա հանգեցնում է միջխմբային սահմանների ամրապնդմանը և, լավագույն դեպքում, հասարակության լճացմանը, իսկ վատագույն դեպքում՝ հասարակության ապակայունացմանը:

Սակայն պետք է նշել, որ կոնսոցիատիվ ժողովրդավարության իմաստը հատվածների միջև հակասությունները մեղմելը կամ վերացնելը չէ (ինչը, ըստ էության հնարավոր էլ չէ), այլ այդ հակասությունների բաց և անկեղծ ընդունումը և հատվածներին կայուն ժողովրդա-

---

[93] Солдатова Г., Демократизация и образы национализма в Российской Федерации 90-х годов. М., Мысль, 1996, с. 29-32; Дробижева Л. Этничность в современном обществе. Этнополитика и социальные практики в Российской Федерации // Мир России. 2001. № 2. с. 173-174. (www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc /13.04.2014/).

[94] Eide A., Review and Analysis of Constructive Approaches to Group Accommodation. p. 76–77; Miall H., Ramsbotham O., Woodhouse T. Op. cit. P. 115; Sisk T.D. Power Sharing in Multiethnic Societies. p. 8.
(www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc /13.04.2014/).

[95] Pavone T., Solidarity in Divided Societies: A Critical Review of Two Waves of Comparative Scholarship. 2014,
http://tommasopavone.yolasite.com/resources.pdf /31.05.2015/.

վարության կառուցվածքային տարրերի վերածումը[96]:

Այնուամենայնիվ՝ պետք է նշել, որ կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի թերությունները ավելի շատ կապված են դրա իրականացման[97], քան թե էության հետ, հատկապես, եթե հաշվի առնենք, որ կոնսոցիատիվ ժողովրդավարության այլընտրանքը կարող է դառնալ պետության կործանումը կամ, լավագույն դեպքում, հեղաշրջումների միջոցով էլիտայի պարբերական փոփոխությունը[98] (դրա վառ վկայությունը Ուկրաինան է - Հ. Սուքիասյան):

Ոչ ժողովրդավարական վարչակարգերը չդարձան ազգերի հմուտ ստեղծողներ և չկարողացան պահպանել պատշաճ կարգ ու կանոն հատվածների միջև հարաբերություններում և ապահովել խաղաղություն բազմական հասարակություններում[99]:

Այս առումով՝ հետաքրքրական է ԽՍՀՄ լուծարումից հետո որոշ հանրապետությունների փորձը, օրինակ՝ Վրաստան, Ադրբեջան և այլն, որտեղ տեղի չունեցավ քաղաքացիների կոնսոլիդացիա ընդհանուր արժեքների հիման վրա, ինչն էլ իր հերթին առանձին դեպքերում հանգեցրեց բռնությունների, լեգիտիմության ճգնաժամի և երկրի պառակտման: Որոշ երկրներում այս ամենին նպաստել է ոչ միայն հասարակության մշակութային-արժեքային պառակտվածությունը, այլև սոցիալական, էթնոքաղաքական, լեզվական բաժանումները[100]:

---

[96] Лейпхарт А., Со-общественная демократия. http://www.civisbook.ru/files/File /Leiphart_1992-_3.pdf /15.04.2014/.

[97] McGarry J., O'Leary B., Consociational Theory, Northern Ireland's Conflict, and its Agreement. Part 1: What Consociationalists Can Learn from Northern Ireland. Journal compilation, Government and Opposition, Published by Blackwell Publishing, UK, 2006, p. 44-63.

[98] Борисов Н., Легитимность власти в многосоставных обществах: проблема её оснований, формирования и разрушения (на примере Кыргызстана). http://cyberleninka.ru/article/n/legitimnost-vlasti-v-mnogosostavnyh-obschestvah-problema-eyo-osnovaniy-formirovaniya-i-razrusheniya-na-primere-kyrgyzstana /07.05.2014/.

[99] Лейпхарт А., Со-общественное конструирование. «Полис», 1992, №4, с. 135-143.

[100] Борисов Н., Легитимность власти в многосоставных обществах: проблема её оснований, формирования и разрушения (на примере Кыргызстана).

Քաղաքակրթությունների միջև բաժանման գծի էֆեկտը, որն առաջացնում է վեճեր, հատկապես տեսանելի է ճաքած երկրներում: Բազմաթիվ հետխորհրդային երկրներ նույնպես բաժանված են քաղաքակրթությունների միջև բաժանման գծով[101]՝ հաճախ պայմանավորված այն հանգամանքով, որ սովետական իշխանությունները սահմանները փոփոխելու ռազմավարական «բնավորություն» ունեին:

Սովետական միության լուծարումից հետո փոքրամասնությունները անկախության շրջանի փոփոխությունների ընթացքում մնացին մեն մենակ մեծամասնության առջև և պարտություն կրեցին: Նրանք նաև կարծես «վրիպեցին» միջազգային հանրության ուշադրությունից, դե իսկ Վրաստանի և Ադրբեջանի իշխանություններին ձեռնտու չեր միջազգային ներգրավվածությունը՝ էթնիկական պահանջների ամրապնդման վախից ելնելով[102]: Հիմնախնդիրն իր առանձնահատուկ դրսևորումը գտավ չքացած ԽՍՀՄ ազդեցության գոտում և նրա նախկին տարածքում, որ հիմնականում նախկին Ռուսական կայսրության տարածման վիթխարի շրջանն է: Տվյալ առանձնահատկությունը պայմանավորվեց մեծ չափով Արևմուտքի կողմնակալ և «տարօրինակ» վարքագծով. Արևմուտքը իր դավանած արժեքների համակարգից ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կիրառելի (հետեվապես՝ լեգիտիմ) համարելով նախկին միութենական հանրապետությունների (և ո՛չ ժողովուրդների), այդ թվում՝ ազգային պետությունների քողի տակ էթնոկրատիա ստեղծող գաճաճ կայսրությունների (Ադրբեջան, Վրաստան և այլն) հանդեպ՝ մերժեց գոյապայքար մղող ավտոխտոն (անդրենածին) ժողովուրդներին (հայությանը Արցախում, լեզգիներին, թալիշներին, օսերին և ուրիշների), ինչը վկայությունն էր ու արտահայտությունը «հին ու բարի ժամանակների»

---

http://cyberleninka.ru/article/n/legitimnost-vlasti-v-mnogosostavnyh-obschestvah-problema-eyo-osnovaniy-formirovaniya-i-razrusheniya-na-primere-kyrgyzstana /07.05.2014/.

[101] Huntington S., The Clash of Civilizations and the Remaking of World Order. N.Y., Simon & Schuster, 1996, p. 138:

[102] Matveeva A., The South Caucasus: Nationalism, Conflict and Minorities, MRGI Report (Minority Rights Group International), London, 2002, p. 27.

գաղութարարության և դասական իմպերիալիզմի: Բնական էր հիշյալ և այլ ժողովուրդների ահռելի հիասթափությունը, կոնկրետ, Արևմուտքից և թերևս նրա գովազդած արժեքներից: Քանզի նույն Արևմուտքը կամա-ակամա կլլեց իր կողմից արհամարհված և տասնամյակներով անարդար դիտված «չարիքի կայսրության» մտահղացումների խայծը[103]:

Իրենց եվրոպական արժեքների մոլեռանդ հետևորդներ հռչակած գաճաճ կայսրությունների «ընտրախավ» անհանդուրժողականության, մեծապետական շովինիզմի և կայսերական հավակնությունների հետևանքով այսօր տարածաշրջանը տարանջատված է և ապահամարկված (“дезинтегрированным”), դարձել է անկայունության աղբյուր, որի թունավոր սլաքներն ուղղված են բոլոր ազիմուտներով: Գաճաճ կայսրությունները կփորձեն էթնիկական զտում անցկացնել և վերացնել ազատագրվող ժողովուրդների ինքնիշխանության ամեն հետք, որը կհանգեցնի, ի վերջո, ցեղասպանության կամ «մարդասիրական աղետի» կանխման համար անհրաժեշտ կլինի կիրառել «մարդասիրական ներխուժում»[104] (օրինակ, 2008 թվականի վրացական բլից կրիգն ու ռուսական «գործողությունները»):

Տարածաշրջանում այս երկրների ներսում առաջացել են էթնիկ հակասություններ, որոնք անընդհատ մեծացնում են կոնֆլիկային պոտենցիալը: Դե իսկ այս երկրներում ճշնված էթնոսները միշտ էլ գայթակղություն են ունենալու արտաքին ուժի միջամտության կամ օգնության, իսկ դա տարածաշրջանը դարձնում է պերմանենտ անկայունության և պատերազմների աղբյուր:

Գաճաճ կայսրություններում իրենց ազգային տարածքներում հավաք ապրող հայերի, լեզգիների, թալիշների (և ուրիշների) արտամղումը կամ մշակութային ձուլումը կանխելու, տարածաշրջանի մշա-

---

[103] Տե՛ս Շիրինյան Լ., Հարավային Կովկաս. Եվրամիության պրոյեկցիան (Այսրկովկասի համալիր անվտանգության տեսանկյունը): Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ: Եր., Զանգակ, N1, 2012, էջ 144-152:

[104] Նույն տեղում:

կութային բազմազանությունը պահպանելու հրամայականով անհրաժեշտ է նրանց տրամադրել մշակութային ինքնավարություն[105] և կոնսոցիատիվ ժողովրդավարության չորս հիմնական սկզբունքների կիրառում, ինչը կնպաստի տարածաշրջանում անվտանգության և իսկական ժողովրդավարության հաստատմանը այս երկրներում:

Քաղաքականության՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ առաջացման կարևոր, թեև ոչ միակ, պատճառը մարդկային հասարակության անվտանգության ապահովման անհրաժեշտությունն է: Սոցիալական տարբեր տարրերի գործունեության, մարդկանց միջև կամային հարաբերությունների համաձայնեցման անհրաժեշտությունը առաջանում է հատկապես այն ժամանակ, երբ սոցիումի ներսում հակասությունները և տարաձայնությունները սպառնում են վերջինիս գոյությանը: Այսպիսով, ինչպես անհատների, այնպես էլ ամբողջ հասարակության գոյությանը ապառնացող իրավիճակում ինքնապահպանման և ողջ մնալու անհրաժեշտությունը ծնում է հասարակական հարաբերությունների յուրահատուկ տեսակ՝ քաղաքական հարաբերություններ: Քաղաքականության մեջ անվտանգությունը ոչ միայն կենսական պահանջ է, այլև՝ կարևոր կենսական արժեք. այն մարդկային ցանկությունների և ձգտումների օբյեկտ է, կեցության անհրաժեշտ նորմ: Քաղաքականության ոլորտում անվտանգության վերաբերյալ արժեքային պատկերացումների հիման վրա կյանքի են կոչվում և զարգանում նորմատիվային վերահսկողության համակարգը և համապատասխան քաղաքական ինստիտուտները: Դրանց միջոցով ապահովվում է անհատների, տարբեր խավերի ու խմբերի, առհասարակ՝ ամբողջ հասարակության ջլատված ուժերի միախմբումը՝ կենսական նշանակության խնդիրների լուծման, ինքնապահպանման և զարգացման համար:

Հետևապես, քաղաքականության և անվտանգության՝ որպես հասարակական երևույթների ներքին փոխկապակցվածությունը առաջ է

[105] Նույն տեղում:

բերում հաճախակի զուգադիպություններ վերջիններիս դրսևորման ոլորտում: Անվտանգության ոլորտը և քաղաքականության դաշտը որոշվում են նախ և առաջ կոնֆլիկտային միջավայրով, և այստեղ դրսևորվում է այն սոցիալական տարածության միասնությունը, որի վրա դրանք տարածվում են: Իսկապես, քաղաքականության դաշտը սոցիալական կոնֆլիկտային փոխհարաբերությունների ոլորտ է, իսկ քաղաքականությունն ինքը դրանց օպտիմալացման գործիք է. քաղաքականության խնդիրը հասարակական կոնֆլիկտի լուծումն է և սոցիալական համագործակցությունը համաձայնության հուն տեղափոխելը: Միաժամանակ անձի, հասարակության և պետության անվտանգության նկատմամբ սպառնալիք է հանդիսանում կոնֆլիկտային այն միջավայրը, որն իր մեջ կուտակում է կործանման ներուժ, ուստի և անվտանգության ոլորտը ընդգրկում է ամենից առաջ և առավելապես այդ նույն՝ կոնֆլիկտային փոխհարաբերությունների ոլորտը:

Բազմական հասարակություններում ավելի արդյունավետ են այն ռազմավարությունները, որոնք ապահովում են էթնիկ խմբերի քաղաքական իշխանության հավասարակշռությունը և կանխում են դրանցից որևէ մեկի միակողմանի տիրապետությունը[106]:

Մեկ բան ակնհայտ է. բազմական հասարակությունները, իսկ Ս. Հանթինգթոնը այդպիսի հասարակությունները անվանում է ճաքած/պառակտված հասարակություններ[107], հնարավոր չէ միավորել ազգայնական գաղափարախոսության միջոցով, առավել ևս ժողովրդավարական ընթացակարգերի նկատմամբ հավատի միջոցով, եթե փաստացի քաղաքական պրակտիկայում իշխանության ներկայացուցչական մարմիններում հասարակության տարբեր հատվածների հասանելիությունը ամբողջությամբ արգելափակված է կամ սահմանափակված: Ազգայնական ուղղվածություն ունեցող կուսակցությունները չեն

[106] Осипов А., Сообщественная демократия как фактор консолидации политической власти. Гуманитарные и социальные науки 2010. № 4, с. 249. http://hses-online.ru/2010/04/23_00_02/28.pdf /15.05.22/.

[107] Huntington S., The Clash of Civilizations and the Remaking of World Order. N.Y., Simon & Schuster, 1996, 367 p.

կարող դիմադրել այն մարտահրավերներին, որոնք ծառացած են բազմական հասարակությունների առջև: Իհարկե, բազմական հասարակություններում ազգայնական ուժերը կպնդեն վեստմինստերյան ժողովրդավարության օգտին, քանի որ դա բխում է իրենց շահերից: Ընդ որում՝ նրանք կարող են նաև լավագույնս իրականացնել վեստմինստերյան ժողովրդավարության, այսինքն՝ մեծամասնության իշխանության բոլոր սկզբունքները ժողովրդավար երևալու համար: Սակայն արդյո՞ք դա բավարար է իսկական ժողովրդավարություն կոչվելու և կոնֆլիկտները լուծելու համար: Բնականաբար՝ ոչ:

Ի սկզբանե ստեղծված լինելով որպես ժողովրդավարության մոդել, որպես ժողովրդավարական վարչակարգի տեսակ՝ կոնսոցիատիվությունը ձևափոխման արդյունքում վերածվել է ներքին քաղաքական կոնֆլիկտների և տարաձայնությունների լուծման պրակտիկ կիրառության մեթոդի: Այսօր կոնսոցիատիվությունը ավելի շուտ ոչ թե պետական կառուցվածքի կամ նույնիսկ կառավարման ձև է, այլ որոշումների ընդունման գործընթացում կոնֆլիկտներից խուսափելու կամ դրնաց լուծման մեթոդների, գործիքների շարք, հավաքականություն: Կոնսոցիատիվ ժողովրդավարության անփոփոխ նպատակը ներքին քաղաքական կայունության հաստատումն ու պահպանումն է[108]:

ԽՍՀՄ լուծարման արդյունքում ստեղծված բազմական հասարակություններում միակենտրոն իշխանությունն ամենևին էլ կայուն չէ և, հետևաբար, նաև գործառնապես անպիտան: Նմանատիպ երկրներում ազգային միասնության կարելի է հասնել ոչ թե էթնիկ, մշակութային կամ այլ տարբերությունների վերացման միջոցով (ինչը ճաքած հասարակություններում անհնար է), այլ քաղաքական համակարգում այդ տարբերությունների ֆորմալ և ոչ ֆորմալ մակարդակ-

[108] Ормонбеков Ж., Теория консоционализма Аренда Лейпхарта. / Журнал «Казанский федералист» / 2007 / Номер 1-2 (21-22), зима-весна, 2007 / II. Теоретические вопросы в исследованиях мультикультурных сообществ.
http://www.kazanfed.ru/publications/kazanfederalist/n21-22/9/ /15.05.2015/.

ներում ինստիտուցիոնալացման միջոցով[109]:

Ըստ էության՝ այս երկրների մեծ մասում ձևավորվել է անջրպետ ժողովրդավարական հռետորաբանության և ավտորիտար պրակտիկայի միջև:

Ամեն կերպ հետաձգվող էթնոքաղաքական հակամարտությունները խոչընդոտում են փոխակերպվող հասարակության իշխանական կոնսոլիդացիան: Քաղաքական իշխանության ապակոնսոլիդացիայի մասին վկայում են հասարակության էթնիկ խմբերի միջև հակամարտությունները, պայքարը, որոնց մեջ ներգրավվում է նաև պետությունը: Էթնիկ լարվածությունը, որը վերածվում է առճակատման, հիմնավորում է կոնֆլիկտների կարգավորման ինստիտուտների համակարգի և քաղաքական իշխանության կոնսոլիդացիայի վերականգնման անհրաժեշտությունը[110]:

Ինչպես նշում է Ս.Հանթինգթոնը՝ երկրներին բնորոշ է «ձգտումը» դեպի համանման մշակույթով երկրներ և դիմակայությունն այն պետություններին, որոնց հետ չունեն մշակութային ընդհանրություններ: Սա հատկապես ճիշտ է առանցք-պետությունների պարագայում, որունց օգնությունը գայթակղում է մշակութապես հարազատ երկրներին և մերժում է այլ մշակույթները[111]:

Մշակութային ընդհանրությունը առանցք-պետության լիդերությունը դարձնում է օրինական[112], այսինքն՝ լեգիտիմ: Առանցք պետությունը կարող է իրականացնել կարգուկանոնի պահպանման գործառույթ միայն այն դեպքում, երբ մյուս երկրները վերջինիս ըն-

---

[109] Борисов Н., Легитимность власти в многосоставных обществах: проблема её оснований, формирования и разрушения (на примере Кыргызстана). http://cyberleninka.ru/article/n/legitimnost-vlasti-v-mnogosostavnyh-obschestvah-problema-eyo-osnovaniy-formirovaniya-i-razrusheniya-na-primere-kyrgyzstana /07.05.2014/.

[110] Осипов А., Сообщественная демократия как фактор консолидации политической власти. Гуманитарные и социальные науки 2010. № 4, с. 249. http://hses-online.ru/2010/04/23_00_02/28.pdf /15.05.22/.

[111] Huntington S., The Clash of Civilizations and the Remaking of World Order. N.Y., Simon & Schuster, 1996, p. 155.

[112] Նույն տեղում, էջ 156:

դունում են որպես մշակութապես հարազատ երկիր: Քաղաքակըրթությունը մեծ ընտանիք է, և առանցք-պետությունները, որպես ընտանիքի մեծ անդամներ, պաշտպանում են իրենց հարազատներին և ապահովում կարգուկանոն[113]:

Առաջանում է աշխարհակարգ՝ հիմնված քաղաքակրթությունների վրա. հասարակությունները, որոնք ունեն մշակութային ընդհանրություններ, համագործակցում են միմյանց հետ, երկրները խմբավորվում են իրենց քաղաքակրթությունների առաջատար կամ առանցք-պետությունների շուրջ[114]:

Այս համատեքստում հետաքրքրական է Ուկրաինայի դեպքը:

Ուկրաինան բաժանված է ունիատական նացիոնալիստների, ուկրիաինալեզու արևմուտքի և ուղղափառ ռուսալեզու արևելքի[115]: Ուկրաինայի հարավարևելյան հատվածը ռուսախոս բնակչությունն է՝ Ղրիմ, 82%, Զապորոժյե, Դոնեցկ, Լուգանսկ, Խարկով բնակչության 86%-ը ռուսալեզու բնակչությունն է, Դնեպրոպետրովսկ, Պոլտավա, Սումի, Չեռնիգով՝ բնակչության 46%-ը ռուսալեզու, 31%-ը ուկրաինալեզու բնակչությունն է:

Այսօր Ուկրաինան երկու տարբեր մշակույթների միջև բաժանված կամ ճաքած երկիր է: Պատմականորեն արևմտյան ուկրիանացիները խոսել են ուկրիաներեն և իրենց հայացքներում եղել են բավականին ազգայնական: Արևելյան Ուկրիանայի բնակչությունը եղել է առավելապես ուղղափառ և ռուսալեզու: Ղրիմի բնակչության ճնշող մեծամասնությունը ռուսալեզու բնակչությունն է, որը մինչև 1954թ. Ռուսաստնի Դաշնության մաս է կազմել, այնուհետև Խրյուշովի կողմից հանձնվել Ուկրաինային[116]:

Ղրիմի անջատման հարցն առաջին անգամ բարձրացվեց 1991թ. հանրաքվեի ժամանակ, երբ Ղրիմի բնակչության 70 տոկոսը հստա-

---

[113] Նույն տեղում, էջ 156:
[114] Նույն տեղում, էջ 20:
[115] Huntington S., The Clash of Civilizations and the Remaking of World Order. N.Y., Simon & Schuster, 1996, p.138:
[116] Նույն տեղում, էջ 165-166:

կորեն պաշտպանեց Սովետական Միությունից անկախության հանրաքվեն: 1992թ. Ղրիմի խորհրդարանը հայտարարեց անկախության մասին, սակայն հետագայում Ուկրաինայի ճնշման ադզեցության տակ, փոխեց որոշումը: 1994թ. Ղրիմի բնակիչները ընտրեցին նախագահ, ով իր նախընտրական քարոզարշավը անցկացնում էր «միասնություն Ռուսաստանի հետ» կարգախոսով: Այս հանգամանքը ոմանց ստիպեց բարձրացնել հետևյալ հարցը. «Կդառնա՞ արդյոք Ղրիմը հաջորդ Լեռնային Ղարաբաղ կամ Աբխազիա»: Պատասխանն էր՝ «Ոչ»: Հետագայում Ղրիմի հաջորդ նախագահը հրաժարվեց անկախության հարցով հանրաքվեի անցկացման մտադրությունից և բանակցություններ սկսեց կիևյան կառավարության հետ: 1994թ. մայիս ամսին իրավիճակը նորից սրվեց, երբ Ղրիմի խորհրդարանը քվեարկեց 1992թ. սահմանադրության վերականգնման օգտին՝ փաստացիորեն Ղրիմը ճանաչելով Ուկրաինայից անկախ: Սակայն Ռուսաստանի և Ուկրաինայի առաջնորդները նորից կանխեցին բռնությունների առաջացումը[117]:

Ուկրաինայում իրադրությունների զարգացման համար առավել հավանական սցենարը, ըստ Հանթինգթոնի, բաժանման գծով Ուկրաինայի պառակտումն է երկու մասի, որի արևելյան մասը կմտնի Ռուսաստանի կազմի մեջ[118]:

Ճաքած երկրներում երկու կամ ավելի քաղաքակրթություններից կազմված խմբերը նորից հայտարարում են. «Մենք տարբեր ազգեր ենք և պատկանում ենք տարբեր տարածքների»[119]:

Հանթինգթոնը Ուկրաինան դիտում է որպես ճաքած (կարդա նաև բազմական) պետություն և առաջ է քաշում Ուկրաինայի ապագայի վերաբերյալ մի քանի, ընդ որում՝ բոլորն էլ հիմնավորված, տարբերակներ:

Ուկրաինայում իրադրությունների զարգացման համար առավել

---

[117] Նույն տեղում, էջ 167-168:
[118] Նույն տեղում, էջ 167:
[119] Նույն տեղում, էջ 138-139:

հավանական սցենարը, ըստ Հանթինգթոնի, բաժանման գծով Ուկրաինայի պառակտումն է երկու մասի, որի արևելյան մասը կմտնի Ռուսաստանի կազմի մեջ[120]:

Այսօր արդեն այս թեզը մասնակիորեն իրականացել է: 2014թ. Ղրիմը հանրաքվեով առանձնացավ Ուկրաինայից և միացավ Ռուսաստանին: Կարո՞ղ էր Ղրիմը միայնակ իրացնել իր այդ իրավունքը: Ո՛չ իհարկե: Ռուսաստանի, որպես առանցք-պետության, օժանդակությունը ակնհայտ է, որը պաշտպանեց իր հարազատ ազգակիցներին և ապահովեց կարգ ու կանոն: Մշակութային ընդհանրությունը առանցք-պետության լիդերությունը (այս դեպքում Ռուսաստանի) դարձրեց օրինական:

Ինչ վերաբերում է Ուկրաինայի հարավ-արևելյան շրջաններին, ապա այս հարցը կքննարկենք Հանթինգթոնի՝ Ուկրաինայի ճակատագրի վերաբերյալ առաջ քաշած մյուս տարբերակի համատեքստում:

Ուկրաինայի ճակատագրի վերաբերյալ Հանթինգթոնի առաջ քաշած հաջորդ տարբերակը հետևյալն է. Ուկրաինան կմնա միասնական, բաժանված, ճաքած, կմնա անկախ[121]: Կարծում ենք՝ այս տարբերակը Ուկրաինայում այսօր տիրող իրադարձությունների և Ուկրաինայի ներկայիս ամբողջականության պահպանման համատեքստում հնարավոր է միայն վերջինիս ֆեդերալիզացիայի կամ կոնսոցիատիվ ժողովրդավարության տարրերի որդեգրման պարագայում[122]:

Հետազոտողները միակարծիք են այն տեսակետում, որ էթնիկ և այլ խորը բաժանումների խնդիրը ավելի խորն է այն երկրներում, որոնք դեռևս ժողովրդավարական կամ լիովին ժողովրդավարական չեն, քան կայացած ժողովրդավարական երկրներում, և որ նման բաժանումները

---

[120] Նույն տեղում, էջ 167:

[121] Նույն տեղում, էջ 168:

[122] Սուքիասյան Հ., Ուկրաինական ճգնաժամի քաղաքակրթական հարացույցը (Հանթինգթոնի մոտիվներով): Քաղաքագիտության հարցեր, Հանթինգթոնը և արդի քաղաքագիտական խոսույթը: Եր., Լիմուշ, 2015 էջ 35:

խոչընդոտում են ժողովրդավարացմանը 21-րդ դարում դարում[123]:

Փոխակերպվող հասարակությունների կառավարությունների համար, որոնք գործում են ձգձգված (հետաձգված) հակամարտությունների առկայության կամ դրա վտանգի պայմաններում, խնդրի լուծման համար առավել արդյունավետ միջոցը կոնսոցիատիվ ժողովրդավարության ինստիտուցիոնալացումն է: Կոնսոցիատիվ ժողովրդավարության ինստիտուտները՝ վարչական ներկայացուցչականության համամասնականությունը, տարածքային ինքնավարությունը, փոխադարձ վետոն խոչընդոտում են քաղաքական իշխանության ապակոնսոլիդացիան՝ քաղաքական ծայրահեղականության նկատմամբ արդյունավետ պետական կառավարման պայմաններում[124]:

Ամեն դեպքում՝ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը, որպես համաձայնության ժողովրդավարություն, ավելի շուտ պետք է դիտարկվի որպես պարտադրված որոշում՝ այլ ընդունելի տարբերակների բացակայության պատճառով:

Եվ հենց այստեղ է, որ Բրենդան Օ'Լիրի առաջարկած «պարտադրված կոնսոցիատիվություն[125]»-ը ամենահիսկական անփոխարինելի արժեքի է վերածվում այսպիսի հասարակություններում քաղաքական կայունության և իսկական ժողովրդավարություն հաստատելու համար:

Կոնսոցիատիվությունը (այստեղ խոսքը ոչ թե մոդելի, այլ մեթոդի մասին է), ունիվերսալ է (այս պարագայում Գուգգենբերգերի տեսակետը այնքան էլ հիմնավոր չէ) և կարող է կիրառվել ինչպես՝ բազմական, այնպես էլ միատարր հասարակությունների համար: Կոնսոցիատիվ ժողովրդավարության ակնհայտ առավելությունը դեմոկրատիայի մյուս մոդելներից սոցիալական ստրատիֆիկացիայի և առկա

---

[123] Lijphart A., Constitutional Design for Divided Societies. Journal of Democracy, Vol 15, issue 2, 2014, p. 96-109.

[124] Huntington S. The Clash of Civilizations and the Remaking of World Order. N.Y., Simon & Schuster, 1996, p. 137.

[125] O'Leary B., The Limits to Coercive Consociationalism in Northern Ireland. Political Studies 37(4), (1989) p. 452-468.

համատեքստի հաշվառումն է: Ժողովրդավարության մյուս հայեցակարգերը մշակված են թեզիսների մակարդակով և աշխատում են հռչակված սկզբունքների մեխանիկական կիրառումով: Իսկ կոնսոցիատիվ դեմոկրատիան մշակված է էմպիրիզմի՝ առկա իրավիճակի հաշվառումով:

Կոնսոցիատիվ մեթոդը և ունիտար հասարակությունները

Ինչպես նշվեց նախընթաց տեքստում՝ բազմական հասարակություններում տարբերությունները կարող են ունենալ կրոնական, գաղափարական, լեզվական, տարածաշրջանային, ռասայական կամ էթնիկական ծագում, իսկ միատարր հասարակություններում «հատվածական տարբերություններ»-ը կարող են ունենալ շերտային (ստրատա), այսինքն՝ սոցիալական ծագում: Բնակչության խմբերը, որոնք առանձնացվում են այդ տարբերությունների հիման վրա, համարվում են հասարակության հատվածներ: Նման հասարակությունների համար հատկանշական խնդիր է քաղաքական կայունության և հասարակության տարբեր հատվածների միջև հավասարակշռության ապահովումը: Հավասարակշռության խախտումը որևէ խմբի օգտին անխուսափելիորեն հանգեցնում է մեծամասնության դիկտատուրայի: Եթե դա բազմական հասարակություն է, ապա այդ մեծամասնության դիկտատուրան դրսևորվում է էթնոկրատիայի ձևով (մի էթնիկ խմբի գերիշխանություն այլ էթնիկ խմբերի նկատմամբ), իսկ եթե դա միատարր հասարակություն է, ապա այդ մեծամասնությունը դրսևորվում է արդեն սոցիալական որևէ խմբի կամ ստրատայի (շերտի) գերիշխանությամբ մյուս խմբերի նկատմամբ[126]: Հետևաբար, հասարակության ներդաշնակ զարգացման և տարբեր հատվածների միջև հավասարակշռված հարաբերությունների հաստատումը միայն կարող է ապա-

[126] Սուքիասյան Հ., Արենդ Լեյփհարթի «կոնսոցիատիվ ժողովրդավորությունը»: Պատմություն և Հասարակագիտություն, Տարեգիրք N1, Հայկարլիկ տպարան, Երևան, 2015, էջ 268-285:

հովել պետության և հասարակության անընդհատական ընթացքը:

Որպես գործառնական համակարգ՝ հասարակությունը այս կամ այն կերպով սոցիալական տարբեր դերերը պետք է բաժանի հասարակության անդամների միջև և նրանց պարտադրի կատարել այդ գործառույթները[127]:

Դիտարկենք ունիտար պետությունների դեպքը նշված սկզբունքի համատեքստում և կոնսոցիատիվության տրամաբանության մեջ:

Ինչպես նշում է Ն. Լորեն-Ֆրընետը՝ ցանկացած համակարգ, եթե ցանկանում է ապրել, գոյություն ունենալ, պետք է հիմնվի չորս հիմնական արժեքների վրա, որոնք հիմնված են անհատների և խմբերի պանահջների բավարարման վրա. ադապտացում, նպատակների իրականացում, ինտեգրում և շահերի արտահայտում[128]:

Նկատենք, որ շահերի արտահայտման խնդիր ունեն միատարր հասարակություններում սոցիալական տարբեր շերտերը:

Ժողովրդավարությունը ոչ միայն սոցիալական և քաղաքական կառույց է, որը հակադրվում է ավտորիտարիզմին և ավտոկրատիայի այլ ձևերին, այլև միաժամանակ իշխանության սոցիոլագիայում փիլիսոփայական-պատմական ընկալում է, ինչպես նաև ինքնավարության և որոշումների ընդունման գործընթացում մասնակցության պահանջների ձև: Այսօր ժողովրդավարության հայեցակարգը սոցիալական կառուցվածքի առաջնային շարժիչ ուժն է:

Դեմոկրատիայի հիմնական առանձնահատկությունը այլ վարչակարգերից ինքնորոշման, ինքնիրավչության կամ ինքնավարության մեջ է՝ անհատի, հասարակության, հետևապես հասարակության մաս կազմող սեգմենտների և ստրատաների մակարդակում: Այլապես դեմոկրատիան ինչո՞վ է տարբերվում ավտոկրատիաներից, բռնապետական ռեժիմներից:

Ընդհանրապես, ինքնավարության ձգտումը բնորոշ է բոլորին, նույնիսկ անհատներին: Դե իսկ կոլեկտիվները, էթնիկ, ազգային,

---

[127] Laurin-Frenette N., Classes sociales et pouvoir Les théories fonctionnalistes. Montréal, les Presses de l'Université de Montréal, 1978, p. 169.

[128] Նույն տեղում, էջ 144:

մշակութային խմբերը, հատկապես նրանք, որոնք ապրում են կոմպակտ, ինչպես նաև դասերը, շերտերը օբյեկտիվորեն ձգտելու են ինքնավարության, քանի որ դրանք իրենց շահերի ագրեգացման խնդիր ունեն:

Ինչպես նշում է Յու. Հաբերմասը՝ ժողովրդավարությունը պետք է ազատ լինի որևէ հեգեմոնիայից և որևէ խմբի դիսկուրսի պարտադրանքից, որտեղ բաց կերպով պետք է արտահայտվի բոլոր կողմերի շահերը: Հաբերմասի այս մոտեցումը հիմնվում է ոչ թե մեկի գերիշխանության գաղափարի, այլ բոլորի շահերի կոնսենսուսային ձևակերպման վրա, որտեղ որոշումների ընդունման գործընթացում կողմերից ոչ մեկը չի մնում փոքրամասնություն, ոչ մեկ իրեն չի զգում ենթակայի դերում և չի կարծում, որ իր ճակատագիրը որոշում են ուրիշները:

Իշխանությունը որպես հասարակական ծառայություն և իշխանությունը առանց գերիշխանության. ի՞նչը կարող է ավելի լավ լինել ժողովրդավարական իդեալի իրագործման համար:

Կոնֆլիկտը դասակարգերի կամ հասարակության տարբեր շերտերի միջև անհրաժեշտ պայման չէ, սակայն, այնուամենայնիվ, գերիշխանության և պայքարի գործընթացը նրանց միջև կա: Դոմինանտ դասերը կամ սեգմենտները ամեն կերպ փորձում են թելադրել իրենց կենսաձևը մյուսներին:

Հասարակության մեջ նման կոնֆլիկտներից խուսափելու կամ դրանք լուծելու համար անհրաժեշտ է, որ հասարակության մեջ դասերը, շերտերը ունենան շահերի արտահայտման հնարավորություն: Սա բերում է հարմոնիկ հասարակության և հասարակական համակարգի անընդհատական կյանքին:

Ըստ Բեռնար Բարբերի՝ հասարակության ներդաշնակ գոյության համար անհրաժեշտ է երկու պայման. նախ, մարդիկ, ապրելով միասին հասարակության մեջ, մեկը մյուսի համար և՛ խոչընդոտ է, և՛ միջոց/հնարավորություն, քանի որ նրանք, բոլոր դեպքերում, հետապնդում են նպատակներ, որոնց իրականացման համար ունեն մյուսների կարիքը, սակայն այդ մյուսները կարող են նաև հավասարապես լինել խոչընդոտ այդ նպատակների իրականացման ճանա-

պարհին[129]:

Եվ, երկրորդը, հասարակության մեջ մարդիկ կիսում են ընդհանուր արժեքներ, որոնց դերը հասարակական ներդաշնակության և ինտեգրման ապահովումն է՝ սահմանելով պայմանները, համաձայն որոնց՝ մարդիկ միմյանց օգտագործում են կամ օգտվում են միմյանցից որպես միջոցներ: Այս պայմանի կամ սահմանման բացակայության դեպքում պայքարը բոլորը բոլորի դեմ կդառնա անխուսափելի[130]:

Ամեն դեպքում, կոնսենսուսը, որը դիտվում է որպես սոցիալական պայմանագիր, չի իրագործվում մեխանիկորեն, այլ իրացվում է ընդհանուր արժեքների բաժանման միջոցով, որը ինտերակցիայի շնորհիվ հնարավորություն է ստեղծում փոխադարձ շփման համար[131]:

Դեմոկրատիայի հիմքը հենց շահերի հավասար ձևակերպումն է և անհատի իրավունքների պաշտպանությունը:

Այս համատեքստում դիտարկենք հասարակության տարբեր սոցիալական խմբերի՝ դասերի և ստրատաների, հարցը:

Տարբեր հեղինակներ՝ Շումպետեր, Մոսկա, Պարետո, Մարքս, Վեբեր, Պարսոնս, Դեյվիս, Բարբեր, Արոն և այլն, առաջարկում են սոցիալական ստրատիֆիկացիայի և սոցիալական դասակարգերի վերաբերյալ տարբեր մոտեցումներ՝ խոսելով դասերի և ստրատաների մասին:

Ըստ Շումպետերի՝ դասակարգերի բնորոշումը և բացատրությունը պետք է տրվի գործառույթի և սոցիալական պահանջի, սոցիալական կարիքների փոխկապակցվածության տեսանկյունից: Սոցիալական դասակարգերը, ինչպես ցանկացած սոցիալական երևույթ, պետք է դիտարկվեն իրենց սոցիալական դերով, հասարակության համար իրենց արժեքի օգտակարության տեսանկյունից[132]:

Դասերը պետք է գործադրեն ջանքեր, որոնք միջավայրը պար-

---

[129] Laurin-Frenette N., Classes sociales et pouvoir Les théories fonctionnalistes. Montréal, les Presses de l'Université de Montréal, 1978, p. 184.

[130] Նույն տեղում, էջ 184:

[131] Նույն տեղում, էջ 129:

[132] Նույն տեղում, էջ 59:

տադրում է, այսինքն՝ կատարեն սոցիալապես անհրաժեշտ գործառույթները:

Հետևապես, դասը կարող է անհետանալ, եթե իր գործառույթը դառնում է անօգտակար կամ եթե այդ գործառույթը կլանվում է այլ դասի կողմից: Դասը կարող է վեր բարձրանալ կամ կորցնել իր դիրքը մյուսների համեմատ, եթե իր գործառույթի օբյեկտիվ կարևորությունը բարձրանում է կամ իջնում[133]: Հետևաբար որևէ դոմինանտ դասի անհետացումը նշանակում է, որ այդ դասը ձախողել է լիդերության իր դերակատարությունը[134]:

Ի տարբերություն ստրատայի, որը որպես օբյեկտ գոյություն չունի ինքն իրեն, այսինքն՝ այն անհատների համար, որոնք կազմում են այդ ստրատան, այլ այն առկա է հետազոտողի հայացքներում միայն, դասը, հակառակը, սուբյեկտ է, այսինքն՝ իրականում գոյություն ունեցող օբյեկտ, որի գոյությունը ինքը՝ դասը գիտակցում է[135]: Գիտակցությունը արտադրում է, ստեղծում է կամք, ընդհանուր հայացքներ և գործողություն, հատկանիշներ, որոնք դասը դարձնում են կելոկտիվ էակ, անձ, իրական ամբողջականություն:

Դասը ստրատայից տարբերվում է որպես գոյություն և կամք: Այսինքն՝ դասը գործողություն է, իսկ ստրատան՝ հետազոտողի կողմից առանձնացված մի բան[136]: Դասը կոլեկտիվ անձ է, սուբյեկտ՝ օժտված գիտակցությամբ և կամքով[137]: Իսկ եթե դասը ունի գիտակցություն, կամք, հետևապես ձգտելու է իրացնել իր շահերը:

Ըստ Արոնի՝ ստրատիֆիկացիայի ուսումնասիրությունը չպետք է շփոթել դասերի հետ. ստրատան և դասը սոցիալական իրականության տարբեր ասպեկտներ են[138]:

Ստրատիֆիկացիայի ամերիկյան կոնցեպցիան էմպիրիկ մեթոդի

---

[133] Նույն տեղում, էջ 61:
[134] Նույն տեղում, էջ 61:
[135] Նույն տեղում, էջ 251:
[136] Նույն տեղում, էջ 251:
[137] Նույն տեղում, էջ 252-253:
[138] Նույն տեղում, էջ 245:

արդյունք է: Սա իրականության ուղիղ արտացոլումն է և միջնորդավորված չէ որևէ տեսությամբ՝ իբրև իրական երևույթների ապրիորի մոդել, ինչպես, օրինակ, մարքիսիզմի դեպքում է[139]:

Ըստ Նովիկովայի՝ սոցիալական ստրատիֆիկացիայի տեսությունը չունի խիստ գիտական չափում շերտերի առանձնացման, սահմանման հարցում: Եվ այս տեսակետը մեծ հնարավորություններ է բացում սոցիալական կառուցվածքի և դրա էլեմենտների բնորոշման հարցում սուբյեկտիվ վերաբերմունքի և գործոնի համար[140]:

Այսինքն՝ պետք է ոչ թե ըստ ստանդարտների առանձնացնել դասեր, ստրատաներ, այլ դրանք առանձնացնել ըստ ստեղծված պատկերի՝ ըստ դրանց լեգիտիմ գոյության:

Հավանաբար սոցիալական ստրատիֆիկացիան պետք է անել՝ ելնելով նաև պատմաքաղաքակրթական աստիճանից, դեմոգրաֆիական պատկերից, զարգացման աստիճանից և այլն:

Սոցիալական հանրույթները կարող են առանձնացվել տարբեր չափորոշիչներով՝ մասնագիտություն, զբաղվածություն, եկամուտներ կամ կյանքի որակ, սոցիալական շահերի ընդհանրություն, քաղաքական իշխանություն ունենալու չափորոշիչով, մշակութային կամ կրթական մակարդակով, և ըստ այս չափանիշների՝ հասարակությունում կարող են գոյանալ տասնյակ ստրատաներ:

Օրինակ՝ ՎանՍյաոդին առանձնացնում է 10 ստրատա չին հասարակության կառուցվածքում. 1. պետական և հասարակական ղեկավար անձինք, 2. կառավարչական աշխատողներ, 3. մասնավոր ձեռնարկատերեր, 4. մասնագետներ և տեխնիկական անձնակազմ, 5. գրասենյակային աշխատողներ, 6. անհատ ձեռներեցներ և առևտրականներ, 7. առևտրի և ծառայության բնագավառի աշխատողներ, 8. արտադրական ոլորտի աշխատողներ, 9. գյուղատնտեսական ոլորտի աշխատողներ, 10. աշխատանք չունեցողներ կամ ոչ մշտա-

---

[139] Նույն տեղում, էջ 246:

[140] Иконникова Н., Современные концепции социальной структуры и социальной стратификации // Личность. Культура. Общество. Избранные статьи. - 2000. - Т. 2, Вып. 3 (4), с. 276-284.

կան աշխատանքներում ներգրավված մարդիկ[141]: Այս բաժանումը արված է ըստ չին հասարակությունում առկա պատկերի:

Տարբեր հեղինակների կարծիքով՝ ստրատիֆիկացիան յուրաքանչյուր սոցիալական համակարգին բնորոշ է և այն ծնունդ է սոցիալական միջավայրի և բնույթի:

Ըստ Դեվիսի և Մուրի՝ ստրատիֆիկացիան դիտվում է որպես սոցիալական համակարգում անհատների, խմբերի վարկի ու հարգանքի անհավասարության և տարբերությունների մի համակարգ[142]:

Պարսոնսի համար ստրատիֆիկացիան արժևորման գործընթաց է, որի միջոցով տեղի է ունենում ստրատիֆիկացվող տարրի սոցիալական ճանաչողությունը, ինտեգրումը հասարակական համակարգում[143]:

Սոցիալական դասերը ձևավորվում են խմբային շահերի անտագոնիզմի ադրյունքում[144]: Իսկ սոցիալական շերտերը շահային հակադրությունների վրա չէ որ ձևավորվում են, դրանք ձևավորվում են օբյեկտիվ հանգամանքների և բնական տարբերությունների հիման վրա:

Շումպետերը հիմնվում է սոցիալական անհավասարության և բնական անհավասարության գաղափարների վրա[145]:

Սոցիալական անհավասարությունը մի իրավիճակ է, որը հասարակությունները հաստատում են անգիտակցական ձևով՝ մտայնությամբ, որ ամենակարևոր գործառույթները գիտակցաբար կիրականացվեն այն անձանց կողմից, ովքեր ավելի կոմպետենտ են: Այսպիսով՝ ցանկացած հասարակություն պետք է տարբերակի հեղինակության և հարգանքի տարբեր աստիճաններ և, որպես հետևանք,

---

[141] ВанСяоди, Десять китайских социальных страт. «Теория и практика общественного развития» (2011, № 2), с. 104-111.

[142] Laurin-Frenette N., Classes sociales et pouvoir Les théories fonctionnalistes. Montréal, les Presses de l'Université de Montréal, 1978, p. 169.

[143] Նույն տեղում, էջ 121-122:

[144] Strasser H., Stratum and Class Formation: Principles of a Theory of Social Inequality. The Canadian Journal of Sociology. Vol. 5, No. 2 (Spring, 1980), pp. 103-120.

[145] Laurin-Frenette N., Classes sociales et pouvoir Les théories fonctionnalistes. Montréal, les Presses de l'Université de Montréal, 1978, p. 61.

պետք է սահմանի ինստիտուցիոնալացված անհավասարության որոշակի մակարդակ[146]:

Հետևաբար, ըստ այս մոտեցման, կարելի է ասել, որ բնական անհավասարության դեպքում առաջանում են դասեր, իսկ սոցիալական անհավասարության դեպքում առաջանում են ստրատաներ:

Եվ եթե սոցիալական ստրատիֆիկացիային զուգահեռ մենք կարող ենք խոսել նաև քաղաքական ստրատիֆիկացիայի մասին կամ պրոյեկտել սոցիալական ստրատիֆիկացիան քաղաքական ստրատիֆիկացիայի վրա, ապա այստեղ իշխանության բաժանման սկզբունքը պետք է լրացվի նաև այլ միջոցներով:

Իշխանության երեք ճյուղերի բաժանման սկզբունքին պետք է ավելանա իշխանության բաժանումը ըստ առկա ստրատիֆիկացիայի պատկերի:

Օրինակ՝ Լ. Գումպլովիչը, Գ. Մոսկան, Վ. Պարետոն և այլք, ստրաատիֆիկացիան դիտարկում են քաղաքական մոտեցման տեսանկյունից, որտեղ ստրատաների առաջացման գլխավոր պատճառը համարում են մարդկանց պատկանելիությունը տարբեր քաղաքական խմբերին[147]:

Այս դեպքում արդեն ուժեղանում են կոնկրետ ուղղվածության, հստակ գաղափարախոսության կուսակցությունների դերը: Դրանք պետք է սպասարկեն կոնկրետ սոցիալական շերտերի շահերը, քանի որ ինչքան էլ կուսակցությունները հետապնդեն համազգային, համապետական նպատակներ, միևնույն է նրանք առաջին հերթին ներկայացնում են հասարակության կոնկրետ շերտի շահերը: Արդյո՞ք սա չունի կոնսոցիատիվության տրամաբանություն:

Օրինակ՝ բանվոր, աշխատավոր դասակարգը կամ ցանկացած սոցիալական շերտ այն չափով, որ որևէ կուսակցության իշխանությունը դիտում է իբրև իր իշխանությունը, ցանկանում է բնականա-

---

[146] Նույն տեղում, էջ 172:

[147] Хакимов Э.,. Кузина Э., некоторые аспекты моделирования социальной стратификации. теоретические, методологические и практические вопросы. Ученые записки Казанского университета. Том 157, кн. 1, с. 170-180.

բար այդ կուսակցության իշխանությունը[148]: Իշխանությունը, հեղինակությունը, որպես լեգիտիմ իրավունք, այն մեխանիզմներից մեկն է, որի միջոցով իրականցվում է ինտեգրումը և շահերի պաշտպանությունը[149]: Ստրատաների խմբային վարքագիծը կարելի է դիտարկել նաև էլեկտորալ վարքագծի տեսանկյունից: Հարցի նման դրվածքը թույլ կտա վեր հանել հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունները սոցիալական շարժունության և ստրատաների թվի դինամիկայի համադրությամբ[150]:

Ա. Նովիկովան գտնում է, որ սոցիալական ստրատիֆիկացիան պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝ ի՞նչն է նպաստում հասարակության ստրատիֆիկացմանը, ի՞նչ է տալիս ստրատիֆիկացիան հասարակությանը[151]:

Ստրատա հասկացությունը ընդգրկում է նշանակալի չափով ավելի լայն հասարակական շերտեր, քան դաս հասկացությունը: Ստրատան կարող է ավելի ստույգ բնորոշել, բնութագրել սոցիումը, և ամենակարևորը, ավելի կոնկրետ հետևել սոցիալական կառուցվածքի դինամիկային:

Այս հարցի պատասխանը ճշգրիտ իմանալու համար պետք է այն քննել «ստրատիֆիկացիան որպես ներկայացուցչականություն» մեթոդաբանական ձևակերպման համատեքստում:

Ի՞նչու է այդքան կարևոր հասարակության ստարտիֆիկացիան. սա անհրաժեշտ է հասարակության սոցիալական պատկերը հասկանալու և այդ շերտերին հասարակության քաղաքական կյանք ներգրավելու համար:

---

[148] Laurin-Frenette N., Classes sociales et pouvoir Les théories fonctionnalistes. Montréal, les Presses de l'Université de Montréal, 1978, p. 256.

[149] Նույն տեղում, էջ 141:

[150] Хакимов Э., Валиуллин Р., Хабибуллина Ю., Методологические и теоретические проблемы социальной стратификации // Учен. зап. Казан. ун-та. Сер. Гуманит. науки. - 2009. - Т. 151, кн. 1, с. 91-96.

[151] Иконникова Н.К. Современные концепции социальной структуры и социальной стратификации // Личность. Культура. Общество. Избранные статьи. - 2000. - Т. 2, Вып. 3 (4), с. 276-284.

Արդյո՞ք ստրատաները կարող են դառնալ կոնֆլիկտների պատճառ հասարակության մեջ: Դիտարկենք ՀՀ-ի դեպքը:

2017թ. խորհրդարանական ընտրություններից հետո Ազգային Ժողովում ձևավորված քաղաքական պատկերը չէր համապատասխանում հասարակության սոցիալական պատկերին: Բնակչության աղքատ և աշխատավոր զանգվածը ներկայացուցիչ չուներ խորհրդարանում: Ազգային Ժողովում պատգամավորների մեծամասնությունը ներակայացնում և պաշտպանում էին միայն մի շերտի՝ պլուտոկրատիայի, կլեպտոկրատիայի շահերը: Ձևավորվել էր ավտորիտար հատկանիշներով պլուտոկրատական ստրատա, որը մոնոպոլիզացրել էր քաղաքական կյանքը:

Ըստ Էռնեստ Ռենանի՝ պլուտոկրատական է այն պետությունը կամ հասարակությունը, որտեղ հարստությունը ամեն բանի հիմնական նյարդն է, որտեղ հնարավոր չէ ոչինչ անել առանց հարուստ լինելու, որտեղ հիմնական ամբիցիաները սկսում և ավարտվում են հարուստ դառնալու մոլուցքով[152]:

Կլեպտոկրատիա՝ սա գողերի, կողոպտիչների կառավարություն է կամ իշխանություն: Այս տերմինը սովորաբար կիրառում են այն իշխանությունների նկատմամբ, որտեղ ակնհայտորեն գերիշխում է քաղաքական կոռուպցիան, և իշխանության միակ նպատակը համարվում է լիդերների հասրտացումը և իրենց դիկտատորական իշխանության հավերժացումը:

Եվ լութոկրատիան՝ սա էլ կրիմինալի իշխանությունն է: Այս շերտը ունի մեկ կարգախոս. քաղաքականությունը հանուն փողի:

Խորհրդարանական ընտրություններից հետո հասարակության աղքատ և աշխատավոր հատվածի շահերի ներկայցուցիչը՝ ՀՅԴ խմբակցությունը կոալիցիա կազմեց ՀՀԿ-ի հետ, որը մեծամասամբ ներկայացնում էր պլուտոկրատական շերտը, և ստեղծված արհեստական կոալիցիան զրկեց աղքատ և աշխատավոր հատվածին խորհրդարանում ներկայացուցիչ ունենալու հնարավորությունից:

[152] Renan E., L'Avenir de la science, Pensées de 1848 - 1890.

Այդպիսով՝ այս շերտը շահերի ագրեգացման ոչ մի հնարավորություն չուներ, իսկ սա նշանակում է, որ կոնֆլիկտն անխուսափելի էր:

Այս պարագայում՝ սոցիալական ստրատիֆիկացիայի և քաղաքական ստրատիֆիկացիայի հակադրության դեպքում, մենք հայտնաբերում ենք վերարտադրման խնդիրը և քաղաքական դիրքերի մենաշնորհացումը, որը ենթադրում է հնարավոր երկարաժամկետ տարբերություն իդեալական քաղաքական հիերարխիայի միջև՝ հիմնված բնական արժանիքների և իշխանության իրական բաշխման վրա[153]:

Այսինքն՝ աղքատ, աշխատավոր հատվածը ինստիտուցիոնալ մակարդակում քաղաքական սոցիալականացման ոչ մի հնարավորություն չուներ:

Պլուտոկրատիան ակտիվ էր, ագրեսիվ էր, իսկ աղքատը՝ ոչ: Եվ երբ այդ շերտը ակտիվացավ՝ քաղաքականացավ, այսինքն՝ ձեռք բերեց կոլեկտիվ ինքնություն, առաջացավ կոնֆլիկտ պլուտոկրատական և աղքատ ստրատաների միջև:

Եթե աղքատ շերտը ունենար ներկայացուցիչ խորհրդարանում, կկարողանար իր հարցերը բարձրացնել այդ ամբիոնում, բայց քանի որ զրկված էր կամ չուներ այդ հնարավորությունը, ապա այդ շերտը արագ քաղաքականացավ, իրակայացրեց «թավշյա» հեղափոխություն և տապալեց պլուտոկրատական ստրատային:

Եվ «ստրատիֆիկացիան որպես ներկայացուցչականություն» հարցի մեթոդաբանական ձևակերպումը հենց այս խնդրի լուծմանն է ուղղված:

Եվ, ինչքան էլ որոշ սոցիոլոգներ նշեն, որ, ի տարբերություն ստրատայի, դասը, սուբյեկտ է, գոյություն է և կամք, դասը կոլեկտիվ անձ է, սուբյեկտ՝ օժտված գիտակցությամբ և կամքով[154], իսկ ստրատան՝ պարզապես հետազոտողի կողմից առանձնացված մի բան[155], հայաստանյան քաղաքական պրակտիկան 2018թ. ապրիլ-մայիսյան

---

[153] Laurin-Frenette N., Classes sociales et pouvoir Les théories fonctionnalistes. Montréal, les Presses de l'Université de Montréal, 1978, p. 115.

[154] Նույն տեղում, էջ 251:

[155] Նույն տեղում, էջ 251:

հեղափոխական իրադարձությունների պոռթկումով ապացուցեց, որ ստրատան ևս կարող է քաղաքականանալ, այսինքն՝ կազմավորվել որպես կոլեկտիվ անձ, ձեռք բերել գիտակցություն, կամք, հետևապես նաև պահանջել սեփական շահերի պաշտպանություն:

Մեկ բան պարզ է՝ առանց քաղաքականանալու, առանց մաքուր քաղաքական գործողությունների գործադրման, հնարավոր չէ երբևէ ազդել ոչ կառավարողների վրա, ոչ էլ ենթարկվողների վրա[156]:

Քաղաքականության գլխավոր նպատակը սոցիալական համակարգի ամբողջականության ապահովումն է և հասարակության արդյունավետ ինտեգրումը:

Այն հասարակությունները, որոնք փնտրում են կայուն ժողովրդավարություն և կայուն քաղաքական համակարգ, պետք է դիմեն կոնսոցիատիվ ժողովրդավարությանը:

Պետք է ճանաչել հասարակության բազմականությունը, տարբերությունները և ընդունել հասարակության բոլոր շերտերի լեգիտիմ գոյությունը: Դե իսկ կոնսոցիատիվության իմաստը հասարակության և պետության բազմականության ընդունումն է, հասարակության մեջ տարբեր ստրատաների գոյությունը պարզելը և դրանց ներդաշնակ փոխգործակցությունը:

Կոնսոցիատիվ ժողովրդավարության տրամաբանությունը հավասարակշռության հարացույցն է: Այն միտված է հավասարակշռության վերականգնմանը, իսկ սա իր հերթին ստեղծում է ներդաշնակություն և հասարակության անվտանգ կենսագործունեություն:

Այս իմաստով՝ Հարավային Կովկասի տարածաշրջանի «կոնսոցիատիվացումը» կամ «ֆեդերալիզացումը», կարծես թե, այլընտրանք չունի տարածաշրջանի ավտանգության և ներդաշնակ զարգացման ու ինտեգրման հրամայականի տեսանկյունից:

---

[156] Նույն տեղում, էջ 257:

CONSOCIATIONAL DEMOCRACY IN PLURAL AND UNITARY SOCIETIES

HAYK SUKIASYAN

Abstract

The current view of democracy differs from former classical concepts. The diversity of modern societies and states, complex social stratification, unequal distribution of wealth of the society, the emergence of new classes and segments dramatically change contemporary views and ideas about democracy.

The development of democracy or the search for progress in the society in the context of confrontation is not a productive way. Confrontation between the majority and minority can the victory of one part. However, it may not necessarily be the best part. Sometimes or even often confrontation can lead to the destruction of one of the parts, thus to the upsetting of the balance. The issue is not in opposition but in establishing balance. It is a natural law. Then natural law is the balance. Therefore, restoring the balance is the foundation of democratic development.

In this context, the consociational model of democracy differs favorably due to its functionality.

Most societies, including most post-Soviet societies are plural, and they are characterized by "segment differences". These differences may be religious, ideological, lingual regional, racial or ethnic characters. Populations, which are separated on this basis, feed by segments of plural society. Such society in general has problems of political stability and of balance between the different segments. The imbalance in favor of one of the ethnic groups inevitably leads to ethnocracy, i.e. to the domination of one ethnic group over other ethnic groups. In plural societies there are two ways for political stability and for balance between different segments of society: the first is federalism, and the second is consociational democracy of Arend Lijphart.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱԶՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Հարավ-կովկասյան տարածաշրջանը բազմազան է իր քաղաքակրթական, էթնիկ-մշակութային, կրոնական և հասարակական կառուցվածքով: Միևնույն ժամանակ այս տարածաշրջանում ԽՍՀՄ լուծարումից հետո ի հայտ եկած բազմաթիվ ներքին կոնֆլիկտները զգալիորեն արգելակում են ժողովրդավարացման գործընթացը: Հետխորհրդային քառորդ դարյա փորձը ցույց է տալիս, որ հարավ-կովկասյան երկրներում որոշ տարբերություններով հիմնականում հաստատվել են թերի ժողովրդավարական կամ կայուն ավտորիտար վարչակարգեր: Բազմական հասարակական կառուցվածք ունեցող Ադրբեջանում և Վրաստանում նկատվում են նաև էթնոկրատական դրսևորումներ, որոնք ոչ ակնհայտորեն խրախուսում են գերակա էթնիկ խմբերի ազդեցությունը մյուս էթնոսների նկատմամբ՝ այս ամենը հիմնավորելով անցումային շրջանով: Սակայն բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ էթնիկ հիմքով իշխանությունը ավելի ամրապնդվելու միտումներ ունի: Հետևապես՝ այդ երկրներում ժողովրդավարական անցումը կարող է հանգեցնել ոչ թե լիարժեք ժողովրդավարական, այլ էթնոկենտրոն ավտորիտար վարչակարգերի ձևավորման, որի դեպքում ենթակա էթնոսների մշակութային, կրոնական, լեզվական ինքնությունը խիստ կվտանգվի: Այսպիսի հնարավոր զարգացումները շրջանցելու նպատակով առաջարկվում է էթնոցենտրիզմին հակադրել մշակութային ռելյատիվիզմը, որը հավասար է դիտում միևնույն բազմական հասարակության մաս կազմող բոլոր էթնիկ, կրոնական, լեզվական և այլ սեգմենտներին, իսկ այս պարագայում քաղաքացիական մշակույթի կառուցման միջոցով ժո-

ղովրդավարության առավել արդյունավետ և ներդաշնակ մոդել կարող է լինել կոնսոցիատիվ ժողովրդավարությունը (consociational democracy), որը տասնամյակներ շարունակ հաջողությամբ կիրառվում է եվրոպական մի շարք բազմական պետություններում (Նիդերլանդներ, Բելգիա և այլն): Հարավ-կովկասյան որոշ հակամարտությունների դեպքում ևս որոշ հեղինակներ (ինչպես Վրաստանի և Աբխազիայի միջև հակամարտության կարգավորման համար նշում է Տ. Խիդաշելին) առաջարկում են կոնսոցիատիվ մոդելի հիման վրա ֆեդերալիզմ: Դա հնարավոր է այն դեպքում, երբ քաղաքական էլիտաներն ունեն քաղաքական կամք երաշխավորելու համապատասխան կարգավորումներ, և երբ բնակչությունը ևս պատրաստ է աջակցել դրանց: Այդ ամենի հետ մեկտեղ շեշտադրվում է, որ չափազանց կարևոր են նաև բազմական հասարակության սեգմենտների մշակութային կողմնորոշումները, որոնք արտահայտվում են նրանց քաղաքական վարքում և ազդում ժողովրդավարացման ընթացքի վրա:

Հետազոտության մեջ հիմնավորվում է, որ հարավ-կովկասյան բազմական պետություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի արդյունավետ կիրառության հնարավորությունը պայմանավորված է մասնակցային, քաղաքացիական մշակույթի ձևավորման անհրաժեշտությամբ, որտեղ կարևոր գործիք կարող է լինել կոնսոցիատիվ խոսույթը՝ ուղղված բազմական հասարակության ներսում համընդհանուր նպատակի, բոլոր սեգմենտների մշակութային հավասարության և անվտանգության երաշխիքների ձևավորմանը: Քաղաքական մշակույթի հաշվառման և դրա ներուժի բացահայտման՝ տիրապետող մշակույթ, ենթամշակույթներ, ինչպես նաև դրանց միջև ներդաշնակ երկխոսության հնարավորության գնահատման դեպքում է, որ հարավ-կովկասյան բազմական պետություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելը կարող է լինել արդյունավետ:

Քաղաքական մշակույթի ազդեցությունը քաղաքական կայունության վրա

Քաղաքական կայունությունը ցանկացած պետության զարգացման գործում լրջագույն դերակատարություն ունի, առավել ևս այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է ժողովրդավարացմանը: Կոնսոցիատիվ մոդելի կիրառումը բազմական պետություններում ևս քաղաքական կայունության իրատեսական երաշխիքներ է ստեղծում: Տարբեր հեղինակներ քաղաքական կայունությունը բացատրում են տարբեր ձևերով: Օրինակ՝ Գ. Ալմոնդը և Ս. Վերբան քաղաքական կայունությունը բացատրում են քաղաքական մշակույթի տիպերով: Իսկ Ս. Լիպսեթը և Ս. Ռոկանը այն բացատրում են հասարակության դերային կառուցվածքով:

Բազմամշակութային մասնատված հասարակություններում ժողովրդավարական կայունության խնդրին անդրադառնալիս Գ. Ալմոնդը և Ս. Վերբան հիմք են ընդունում ժողովրդավարացման երկրորդ ալիքից հետո տեղի ունեցած քաղաքական գործընթացները: Հենվելով պարսոնսյան կառուցվածքային ֆունկցիոնալիզմի տեսության[157] վրա՝ հեղինակները նշում են, որ սոցիալական փոփոխությունները տեղի չեն ունենում մի սոցիալ-տնտեսական համակարգից դեպի մեկ այլ համակարգի անցման արդյունքում (ինչպես դասական մարքսիզմում է): Նրանք այդ փոփոխությունն ավելի շուտ ընկալում են որպես մշակութային շերտավորման գործընթաց՝ առանձնացնելով մշակույթի երեք տեսակ: Առաջինը *նահապետական (ծխական) մշակույթներն* են, որտեղ քաղաքացիներն ունեն ցածր ճանաչողական, հուզական (աֆեկտիվ) և գնահատողական կողմնորոշումներ ընդհանուր համակարգի և

[157] Parsons T. *The Structure of Social Action. A Study in Social Theory with Special Reference to a Group of Recent European Writers*, New York, McGraw Hill. 1937, 775 p.

նրա հիմնական ինստիտուտների նկատմամբ:[158] Այսպիսի մշակույթներում անհատների միակ նպատակն իրենց ընտանիքների շահերի հետապնդումն է կամ քաղաքական համակարգում իրենց դերը հանուն ընտանեկան շահերի իրացնելը:[159] Հեղինակների դասակարգման մեջ երկրորդ տեղում *հպատակային մշակույթներն* են, որոնց բնորոշ են բարձր ճանաչողական, հուզական (աֆեկտիվ) և գնահատողական կողմնորոշումները քաղաքական համակարգի նկատմամբ, սակայն այս դեպքում քաղաքական տարբեր ինստիտուտների (մասնավորապես՝ կուսակցությունների) նկատմամբ կողմնորոշումները նվազագույն են, և քաղաքացիներն օրենքն ընդունում են որպես ինչ-որ բան, որին պետք է բացառապես ենթարկվել, այլ ոչ թե աջակցել դրա կատարելագործմանը:[160] Հեղինակների դասակարգման մեջ երրորդ տեղում *մասնակցային մշակույթներն* են, որտեղ հասարակության անդամներն ունեն բարձր ճանաչողական, հուզական (աֆեկտիվ) և գնահատողական կողմնորոշումներ քաղաքական համակարգի նկատմամբ: Այս դեպքում քաղաքացիները կամովին են ենթարկվում օրենքներին, քանի որ դրանք արդար են, և միևնույն ժամանակ քաղաքացիները մասնակցում են որոշումների ընդունման գործընթացին:[161] Հիմնականում ժողովուրդների մոտ գերակայում է քաղաքական մշակույթների վերը նշված երեք կատարյալ տեսակների խառնուրդը: Սակայն ամենացանկալի համադրությունը *քաղաքացիական մշակույթն* է, որի դեպքում քաղաքական գործընթացներին քաղաքացու մասնակցային դերն ավելի բարձր է, քան հպատակային և նահապետական վարքագծային դերերի դեպքում: Քաղաքացիական մշակույթի առավելությունը ժողովրդավարական ինքնակարգավորվող համակարգ ստեղծելու կարողությունն է: Հետևապես՝ ժողովրդավարացման հիմքում ընկած է հասարակությունների մշակութային ներուժը, ինչը հիմք է հան-

---

[158] Almond G., Verba S. *The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations*. Princeton, NJ: Princeton University Press. 1963, p. 14.
[159] Նույն տեղում, էջ 17, 20, 120:
[160] Նույն տեղում, էջ 17, 20, 118:
[161] Նույն տեղում, էջ 17, 20, 118:

դիսանում տվյալ գործընթացի արդյունավետության համար:

Հարկ է նկատել, որ նահապետական մշակույթներում բավականին մեծ է քաղաքացիների օտարման և ժողովրդավարական անկայունության վտանգը: Այսպիսի միտումներ կարելի է նկատել նաև հարավ-կովկասյան երկրներում, որոնց քաղաքական մշակույթում որոշ տարբերություններով առկա են նահապետական տարրեր: Դրանք ավելի խոր ընդգծված են ադրբեջանական հասարակությունում, մինչդեռ Վրաստանում նահապետական տարրերը համեմատաբար ավելի մեղմ են արտահայտված:

Գ. Ալմոնդը և Ս. Վերբան ժողովրդավարության կայունությունը պայմանավորում են քաղաքացիական մշակույթով, որի առանձնահատկությունն իր տարասեռ բնույթն է: Առաջին հերթին քաղաքացիական մշակույթը ծխականի, հպատակի և քաղաքացու կողմնորոշումների խառնուրդն է: Ծխականի կողմնորոշումը դեպի նախնական փոխհարաբերություններ, հպատակի պասիվ քաղաքական դիրքորոշումը և քաղաքացու ակտիվությունը. այս ամենը միաձուլվում են քաղաքացիական մշակույթի մեջ: Այստեղ քաղաքական կողմնորոշումները հավասարակշռված են: Առկա է քաղաքական ակտիվություն, բայց ոչ այնքան, որ կարողանա ոչնչացնել կառավարական իշխանությունը: Առկա է մեղմ ընդգրկվածություն և նվիրվածություն: Գոյություն ունեն նաև չափավոր տարաձայնություններ: Բացի այդ, քաղաքացիական հասարակություն ձևավորող քաղաքական կողմնորոշումները սերտորեն կապված են ընդհանուր սոցիալական և միջանձնային կողմնորոշումների հետ: Քաղաքացիական մշակույթին ներհատուկ դիրքորոշումների միախառնումը լիարժեքորեն համապատասխանում է ժողովրդավարական քաղաքական համակարգին:[162] Կոնսոցիատիվ խոսույթն ուղղված է հենց քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, որի գործադրումը կարող է նպաստել հարավ-կովկասյան բազմական երկրներում ժողովրդավարացման տեմպերի արագացմանը:

---

[162]Алмонд Г., Верба С. *Гражданская культура и стабильность демократии*. Полис. Политические исследования. 1992. № 4. с. 122-135.

Ժողովրդավարություն կառուցելու համար քաղաքական գործիչները հաճախ իրենց ջանքերը կենտրոնացնում են ժողովրդավարական կառավարման ֆորմալ ինստիտուտների ստեղծման կամ սահմանադրությունների մշակման վրա: Նրանք նաև կենտրոնանում են քաղաքական կուսակցությունների ձևավորման վրա, որպեսզի խթանեն զանգվածների մասնակցությունը: Սակայն կայուն և արդյունավետ ժողովրդավարական կարգ կառուցելու համար անհրաժեշտ է ավելին: Դա պայմանավորվում է քաղաքացիների՝ քաղաքական գործընթացի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, այսինքն՝ քաղաքական մշակույթով: Եթե այն ունակ չէ ապահովել ժողովրդավարական համակարգի գործառնությունը, ապա վերջինիս՝ հաջողության հասնելու սպասումները շատ թույլ են:[163] Ժողովրդավարական քաղաքական համակարգին ամենից շատ համապատասխանում է քաղաքացիական մշակույթը: Սակայն դա ժողովրդավարական մշակույթի միակ տարատեսակը չէ: Միևնույն ժամանակ քաղաքացիական մշակույթը ժողովրդավարության այն տեսակն է, որն առավելապես ունակ է ապահովել կայունություն ժողովրդավարական համակարգում: Ուստի այս առումով նպատակահարմար է տեսնել, թե ինչպես է քաղաքացիական մշակույթը փոխանցվում սերնդեսերունդ: Շատ կարևոր է հասկանալ, որ այն չեն սովորեցնում դպրոցներում:[164]

Գ. Ալմոնդը և Ս. Վերբան իրավացիորեն նշում են, որ քաղաքացիական մշակույթի փոխանցման գործում շատ կարևոր է քաղաքական սոցիալականացումը, որը տեղի է ունենում մի քանի մակարդակներում սոցիալականացման տարբեր գործակալների կողմից: Հեղինակների համոզմամբ այն հասարակություններում, որտեղ բացակայում է քաղաքացիական մշակույթի ավանդույթը, շատ դժվար է ուսուցանման ճանապարհով կերտել համապատասխան քաղաքացիական մշակույթ, քանի որ նախորդ շրջանում հասարակության սոցիալականացումը տեղի է ունեցել այլ արժեհամակարգերի ազդեցության ներ-

[163] Նույն տեղում, էջ 122-135:
[164] Նույն տեղում:

քո: Հետևապես՝ դրանցում քաղաքացիական մշակույթի ձևավորման փորձերը կարող են ձախողվել: Պատճառն այն է, որ միայն ձևականորեն քաղաքացիական մշակույթի ինստիտուտների ներդրումը չի կարող ապահովել ակնկալվող արդյունքները: Անհրաժեշտ է նաև հասարակության ներսում լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ քաղաքացիների փոխվստահելիությունը և նախորդ սերունդների քաղաքական վարքագծի փորձի բացառումը:

Հեղինակները պնդում են, որ քաղաքացիական մշակույթը փոխանցվում է սերնդեսերունդ այն պետություններում, որոնք արդեն ունեցել են այդպիսի մշակույթ: Իսկ որպեսզի այլ պետություններում էլ հնարավոր լինի ձևավորել այդպիսի մշակույթ, ապա դրանք պետք է վերակերտվեն: Առաջին հերթին արևմտյան հասարակություններում քաղաքացիական մշակույթը ձևավորվել է համեմատաբար անճգնաժամային, հանդարտ և բնական պայմաններում: Երկրորդ՝ այն ձևավորվել է ոչ թե նախկին դիրքորոշումները դուրս մղելու, այլ դրանց հետ միաձուլվելու ճանապարհով: Հետևապես՝ քաղաքացիական մշակույթը զսպվածության մշակույթն է: Ալմոնդի և Վերբայի հետազոտությունը իրավացիորեն ցույց է տալիս, որ ուսուցանման միջոցով կարելի է ձևավորել միայն քաղաքացիական մշակույթի որոշ տարրեր, ինչը չի կարող փոխարինել ժամանակի ընթացքում ձևավորվող փորձին: Որպեսզի նոր պետությունները կարողանան կառուցել քաղաքացիական հասարակություն, նրանց անհրաժեշտ է իրենց քաղաքացիներին միավորող խորհրդանիշներ և համակարգային զգացողություն: [165]

Առհասարակ, կուսակցական նույնականացումը, այսինքն՝ քաղաքացիների և քաղաքական կուսակցության միջև հոգեբանական կապը, քաղաքական վարքագծի հասկացման կենտրոնական փոփոխականներից մեկն է: Այս իրողությունը թույլ է տալիս պնդել, որ այսպիսի կուսակցական կապերը հանրության տեսանկյունից ևս ընկալվում են

[165] Նույն տեղում, էջ 122-135:

որպես կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման չափ:[166] Այս պարագայում տվյալ հանգամանքն ուղղակիորեն պայմանավորվում է քաղաքական մշակույթի տիպաբանությամբ և քաղաքական գիտակցության մակարդակով:

Այս առումով Ռ. Դալթոնը և Ս. Ուելդոնը իրավացիորեն գտնում են, որ ընտրական փորձը և պարենտալ (ծնողական) սոցիալականացումը կուսակցականության հզոր աղբյուրներ են, սակայն նոր ժողովրդավարություններում կարելի է գտնել լատենտային սոցիալականացման մասին ապացույցներ, որոնք բխում են նախկին քաղաքական վարչակարգից:[167] Այսինքն՝ մարդկանց գիտակցության մեջ, չնայած նոր վարչակարգի անցմանը, դեռ շարունակում են պահպանվել նախորդի տարրերը, ինչն էլ, ըստ էության, խոչընդոտ է դառնում ժողովրդավարացման հաջող ընթացքի համար:

Վերը նշված պնդումները լիարժեք համապատասխանում են հարավ-կովկասյան երկրների օրինակին, քանի որ դրանցում ևս նախկին խորհրդային արժեհամակարգը լրջորեն խոչընդոտում է քաղաքացիական մշակույթի կերտման գործընթացին: Պատահական չէ, որ չնայած բազմաթիվ փորձերին՝ դեռևս չի հաջողվում ապահովել լիարժեք ժողովրդավարական համակարգ քաղաքացիական մշակույթի հիմքով: Սակայն այս տեսանկյունից ևս հարավ-կովկասյան բազմական երկրներում կան որոշ տարբերություններ: Հարկ է նկատել, որ Վրաստանում այս հարցի լուծումն ավելի իրատեսական հեռանկար ունի, քան Ադրբեջանի դեպքում է, որտեղ քաղաքացիական մշակույթի ձևավորմանն ուղղված բոլոր ջանքերը հետևողականորեն արգելակվում են իշխանությունների կողմից՝ դրանով իսկ ավելի ամրապնդելով ավտորիտար վարչակարգը և հպատակային քաղաքական մշակույթը: Սակայն չնայած այս սահմանափակումներին՝ քաղաքացիական ակտիվությունը Ադրբեջանում դեռ լրիվ չի մարել: Վրաստանում քաղա-

---

[166] Dalton Russell J.,Weldon S. Partisanship and Party System Institutionalization/ *Party Politics* 2007, pp. 179-196.

[167] Նույն տեղում:

քացիական մշակույթի ձևավորման ներուժն ավելի մեծացել է՝ մասնավորապես ի շնորհիվ եվրաինտեգրմանն ուղղված քայլերի: Այդ մասին են վկայում նաև ժողովրդավարության վերաբերյալ միջազգային գնահատականները, ինչպիսին է Ազատության տան (Freedom House) ամենամյա զեկույցը, որտեղ Վրաստանը տարեց տարի բարելավում է ժողովրդավարության ցուցանիշները:[168]

Քաղաքական կայունության առումով ուշագրավ է նաև Ս. Լիպսեթի և Ս. Ռոկանի մոտեցումը, ովքեր գտնում են, որ մշակութային տարբերությունները հասարակական պառակտումների միակ պատճառը չեն: Նրանք տարբեր կուսակցական համակարգերը բխեցնում են պատմականորեն ձևավորված սոցիալական պառակտումների չորս տեսակներից: Դրանք են՝ 1. *կենտրոն-ծայրամաս պառակտումը*, որը ծագում է պետականակերտման գործընթացում կամ կենտրոնական մշակույթի և դրա դեմ ծայրամասի էթնիկ, լեզվական, կրոնական աճող դիմադրության արդյունքում, 2. *եկեղեցի-պետություն պառակտումը*, որը ծագում է պետականակերտման գործընթացում երկու ինստիտուտների միջև առաջնայնության և գերակայության խնդրի վիճարկման արդյունքում, 3. *քաղաք-գյուղ պառակտումը*, որը ծագում է արդյունաբերականացման արդյունքում, երբ հակադրվում են հողագործների և արդյունաբերողների շահերը և 4. *աշխատողներ-գործատուներ պառակտումը*, որը հավասարապես արդյունաբերականացման հետևանքով է և ծագել է սեփականատերերի կամ գործատուների և աշխատավորների միջև ձևավորվող կոնֆլիկտի արդյունքում:[169]

Այս դասակարգման համատեքստում տեղավորվում են նաև հարավ-կովկասյան երկրները, որտեղ սոցիալական պառակտումները ևս, որոշակիորեն տարբերվելով միմյանցից, հանդիսանում են քաղաքական անկայունության պատճառ: Սոցիալական պառակտումների

---

[168] NiT2016 Georgia,
https://freedomhouse.org/report/nations-transit/2016/georgia (01.04.2017)

[169] Lipset, Seymour M., Rokkan *S. Cleavage Structures, Party Systems, and Voter Alignments*: An Introduction." In S. Lipset and S. Rokkan, eds., *Party Systems and Voting Alignments: Cross-National Perspectives*. New York, NY: The Free Press, 1967, pp. 14, 34.

չորս տիպերն էլ որոշակի հարաբերակցությամբ առկա են հարավ-կովկասյան երկրներում: Սակայն դրանցից մի քանիսն ունեն գերակա դեր: Օրինակ՝ Ադրբեջանի և, մասամբ, Վրաստանի դեպքերն ավելի շատ համընկնում են կենտրոն-ծայրամաս պառակտման մոդելի հետ, որը բնութագրվում է էթնիկ, լեզվական, կրոնական, մշակութային դի-մադրությամբ:

Հիշարժան է նաև Ա. Լեյփհարթի՝ քաղաքական կայունության խնդրի վերաբերյալ տեսությունը, որտեղ հեղինակը նշում է Ս. Լիպսե-թի և Ս. Ռոկանի տեսության սխալականության մասին: Մասնավորա-պես՝ Ա. Լեյփհարթն ընդգծում է, որ համակարգի քաղաքական կայու-նությունը չի կարող միայն կանխատեսվել՝ հիմվելով երկու փոփոխա-կանների՝ հասարակության քաղաքական մշակույթի և դերային կա-ռուցվածքի վրա: Համաձայն խաչաձև պառակտումների տեսության՝ տարանջատված ենթամշակույթներ ունեցող թույլ պետություններում պետք է, որ դրսևորվեր մեծ անշարժություն և անկայունություն: Սա-կայն դա այդպես չէ:[170] Ա. Լեյփհարթը պնդում է, որ Ս. Լիպսեթի և Ս. Ռոկանի սխալն այն է, որ քաղաքականությունն ուղղակի էպիֆենոմե-նալ չէ և այն չի բխում սոցիալական պառակտման աստիճանից: Քա-ղաքականությունը կարող է մասամբ ինքնավար դառնալ և լինել սո-ցիալական կառուցվածքից անկախ:[171] Կոնսոցիատիվ ժողովրդավա-րություններում քաղաքական էլիտաներն ունեն բավականաչափ լիա-զորություններ և վստահություն գործադրելու նպատակաուղղված ջանքեր, որպեսզի հակազդեն մշակութային պառակտման անշար-ժացնող և անկայունացնող գործընթացներին:[172]

Կոնսոցիատիվ ժողովրդավարության և ժողովրդավարական տա-րանջատման (fragmentation) բացատրության գործում մեծ է նաև Ջ.

---

[170] Lijphart A. *Consociational Democracy*. World Politics 21 (2), 1969, pp. 207-225.

[171] 1. Putnam R. *Diplomacy and Domestic Politics: The logic of two-level games.*/International Organization 42 (3): 1988, pp. 427-460; 2. Tsebelis G. *Nested Games: Rational Choice in Comparative Politics*. Los Angeles and Berkeley, CA: University of California Press, 1990.

[172] Lijphart A. ...., pp. 207-225.

Սարտորիի ներդրումը, ով այդ երկու հասկացությունները սահմանում է որպես կուսակցությունների մրցակցության արդյունք, որն իրենից ներկայացնում է երկարատև ջանքեր՝ ուղղված կառուցվածքային ֆունկցիոնալիզմից դեպի ինստիտուցիոնալացված կուսակցական համակարգի անցմանը:[173]

Ա. Լեյփհարթն առաջարկում է քաղաքական մշակույթի իր դասակարգումը՝ առանձնացնելով զանգվածի քաղաքական մշակույթը և էլիտայի քաղաքական մշակույթը: Ըստ հեղինակի՝ էլիտայի քաղաքական մշակույթի տեսակի հիման վրա կարելի է նաև դասակարգել հասարակությունների կառուցվածքը և ժողովրդավարության մոդելը: Եթե էլիտայի քաղաքական մշակույթը կոալիցիոն է, իսկ հասարակության կառուցվածքը հոմոգեն, ապա դա ենթադրում է «*դեպոլիտիզացված ժողովրդավարություն* (depoliticized democracy)», ինչպես Շվեդիայում է: Այս դեպքում էլիտաներին հատուկ է կոալիցիոն վարքագիծը, երբ որոշումների կայացմանը մասնակցում են բոլոր հիմնական շահագրգիռ խմբերը: Այսպիսի ժողովրդավարությունն իրականացնում է վերաբաշխված քաղաքականություն, ինչը միտված է հասարակության մեջ հավասարության մակարդակի բարձրացմանը:[174] Եթե էլիտայի քաղաքական մշակույթը հակասական է, իսկ հասարակության կառուցվածքը հոմոգեն, ապա դա ենթադրում է կենտրոնաձիգ ժողովրդավարություն, ինչպես Մեծ Բրիտանիայում է: Եթե էլիտայի քաղաքական մշակույթը կոալիցիոն է, իսկ հասարակության կառուցվածքը հետերոգեն, ապա դա ենթադրում է կոնսոցիատիվ ժողովրդավարություն, ինչպես Նիդերլանդներում է: Եթե էլիտայի քաղաքական մշակույթը հակասական է, իսկ հասարակության կառուցվածքը հետերոգեն, ապա դա ենթադրում է կենտրոնախույս ժողովրդավարություն[175], ինչպես Ֆրանսիայում է:

---

[173] Sartori G. *A Typology of Party Systems.* In P. Mair, ed., *The West European Party System*. New York, NY: Oxford University Press. 1990, pp. 316-349.

[174] Сморгунов Л. *Сравнительная политология. Учебник для вузов*, Питер, 2012, с. 413.

[175] Lijphart A. *Typologies of Democratic Systems.* Comparative Political Studies, 1968, pp. 3-44.

Ա. Լեյփհարթը նշում է, որ կոնսոցիատիվ ինստիտուտների և գործընթացների հաջողությունը բազմական հասարակություններում պայմանավորվում է բացառապես նրանց յուրահատկությամբ, որտեղ առաջնային նշանակություն ունեն հասարակության տարբեր սեգմենտների միջև իշխանության բաժանման չափը, ինչպես նաև այդ սեգմենտների տարածական կենտրոնացվածությունը[176], այսինքն՝ արդյո՞ք սեգմենտներն ունեն իրենց առանձնահատուկ տարածքը, թե՞ սփռված են պետության ողջ տարածքով:

Հիշարժան են նաև քաղաքական կայունության վրա մշակույթի ազդեցության վերաբերյալ Ռ. Ինգլհարթի գաղափարները: Հեղինակը նշում է, որ հստակ ընդգծված մշակութային գոտիների գոյությունն ունի մի շարք սոցիալական և քաղաքական հետևանքներ: Դրանք ազդում են հասարակական կյանքի կարևորագույն կողմերի վրա՝ ծնելիության մակարդակից մինչև տնտեսական վարքագիծ՝ առնչվելով ժողովրդավարական ինստիտուտների հետ: Այդ միջմշակութային փոփոխականության եզրերից մեկը հատկապես կարևոր է ժողովրդավարության համար: Խոսքը հետևյալի մասին է. հասարակություններն էականորեն տարբերվում են միմյանցից այն բանով, թե նշվածներից ո՞ր արժեքներն են համարում առաջնային՝ «գոյատևման արժեքները», թե «ինքնադրսևորման արժեքները»:[177] Այս հանգամանքը շատ կարևոր է հատկապես բազմական հասարակություններում, ինչպիսիք են՝ Վրաստանը և Ադրբեջանը, քանի որ, ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, առաջինի դեպքում շատ զուսպ, սակայն երկրորդի դեպքում շատ ցայտուն ձևով գերակայում են գոյատևման արժեքները: Սա նշանակում է, որ տեղաբնիկների՝ որպես ազգային փոքրամասնությունների համար այսօր առաջնահերթ է գոյատևման խնդիրը, ի համեմատ ինքնադրսևորման: Այս պարագայում կարող ենք հստակորեն պնդել,

---

[176] Lijphart A. *Democracy in Pluiral Societies. A Comparative Exploration*, New Haven and London, Yale University Press, 1988, p. 224.

[177] Инглхарт Р. Культура и демократия, в книге "Культура имеет значение. Каким образом ценности способствуют общественному прогрессу", под ред. Л. Харрисона и С. Хантингтона. М., Московская школа политических исследований, 2002, с. 106-107.

որ էթնոկենտրոն իշխանությունը ադրբեջանական հանրապետությունում ուղղակի սպառնալիք է տեղական էթնոսների գոյատևմանը: Վրաստանի պարագայում, հաշվի առնելով նաև քրիստոնեական մշակութային ժառանգությունը, կարող ենք նշել, որ էթնիկ ժողովրդավարության հաղթահարման հնարավորությունները շատ ավելի իրատեսական են, քանի որ այդ պետությունը որոշ վերապահումներով փորձում է առաջնորդվել ժողովրդավարական արժեքներով: Իսկ այս դեպքում ինքնադրսևորման արժեքները այլ էթնոսների կողմից դառնում են ավելի հավանական: Այն հասարակությունները, որոնք հենվում են «ինքնադրսևորման արժեքների վրա», ավելի մեծ հնարավորություններ ունեն դառնալու իրապես ժողովրդավարական:[178]

Ռ. Ինգլհարթը նաև նշում է, որ տնտեսական առաջընթացը հետզհետե տանում է դեպի սոցիալական և մշակութային փոփոխությունների, որոնք ինքնին ամրացնում են ժողովրդավարական ինստիտուտները: Այսպիսի մոտեցումն օգնում է հասկանալ, թե ինչու է ժողովրդավարությունը վերջին շրջանում ստացել ավելի լայն տարածում՝ հիմնականում տնտեսապես զարգացած երկրներում, այսինքն՝ այնտեղ, որտեղ «ինքնադրսևորման արժեքները» նախընտրելի են «գոյատևման արժեքներից»: Պետք է նկատի ունենալ, որ ժողովրդավարությունը չի կարող կայանալ միայն ճիշտ օրենքների փոխառության ճանապարհով: Այս հարթության վրա Ադրբեջանի մասով հերքվում է նաև Ռ. Ինգլհարթի՝ ժողովրդավարության մեջ հաջողության հասնելու մյուս կարևոր գործոնի՝ տնտեսության բացարձականացումը: Հեղինակը պնդում է, որ տնտեսության զարգացումը ստեղծում է այնպիսի սոցիալական և մշակութային պայմաններ, որոնց դեպքում ժողովրդավարությունը իրեն շատ ավելի վստահ է զգում:[179] Նկատենք, որ հեղինակի այս մոտեցումը, իհարկե, ընդունելի է, բայց այն ունիվերսալ չէ:

---

[178] Инглхарт Р. ...., с. 107.

[179] Инглхарт Р. Культура и демократия, в книге "Культура имеет значение. Каким образом ценности способствуют общественному прогрессу", под ред. Л. Харрисона и С. Хантингтона. М., Московская школа политических исследований, 2002, с 125.

Հակառակ դեպքում ինչպես է հնարավոր բացատրել Ադրբեջանում տնտեսական բարձր ցուցանիշները և ժողովրդավարության ամենացածր մակարդակը (կայուն ավտորիտար վարչակարգ[180]) Հարավային Կովկասում: Դա նշանակում է, որ տնտեսությունը ոչ թե հիմնական, այլ օժանդակ տարր է ժողովրդավարական առաջընթացի համար: Իսկ մեր համոզմամբ ժողովրդավարության հիմնական տարրը, ինչպես Գ. Ալմոնդը և Ս. Վերբան են նշում, մշակույթն է: Եվ այս առումով Ադրբեջանի դեպքը բացատրելի է նաև իր սեփական մշակույթը չունենալու հանգամանքով:

Ռ. Ինգլհարթն իրավացիորեն նշում է, որ բանակը և ոստիկանությունը վերահսկող էլիտաները կարող են խոչընդոտել ժողովրդավարացմանը: Սակայն առաջընթացը ժողովրդին դարձնում է ավելի ներունակ վստահության և զսպվածության առումով և ուղղորդում է մարդկանց դեպի այնպիսի առաջնահերթություններ, ինչպիսիք են՝ ինքնավարությունը և ինքնադրսևորումը կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում՝ նաև քաղաքականության մեջ: Այս պայմաններում քաղաքական ազատականացման զանգվածային պահանջների ճնշումը կարող է շատ թանկ արժենալ[181] իշխանությունների համար: Այս թեզը կիրառելի է ոչ միայն ժողովրդավարության ձգտող հասարակություններում ընդհանրապես, այլ բազմական հասարակություններում՝ մասնավորապես:

Մշակույթի ընկալման համար ուշագրավ է նաև Լ. Հարրիսոնի մոտեցումն առ այն, թե ինչպես է մշակույթն ազդում հասարակական առաջընթացի վրա: Հեղինակն առանձնացնում է մի քանի տարրեր, որոնց տարակերպ դրսևորումները թույլ են տալիս դասակարգել մշակույթները որպես առաջադիմական և ստատիկ մշակույթներ: Դրանք են՝ կրթությունը, խրախուսումը, հասարակական համերաշխությունը,

---

[180] NiT2016 Azerbaijan, https://freedomhouse.org/report/nations-transit/2016/azerbaijan (01.04.2017)

[181] Инглхарт Р. ...., с. 126.

արդարությունը, ազնվությունը և այլն:[182] Օրինակ՝ առաջադիմական մշակույթներում կրթությունը առաջընթացի բանալին է, իսկ ստատիկ մշակույթներում կրթությունը դիտվում է որպես երկրորդական արժեք: Առաջադիմական մշակույթներում անհատական ունակությունները հանդես են գալիս որպես անձնական կարիերային աճի կարևորագույն գործոն: Ստատիկ մշակույթներում այս դերը կատարում են սոցիալական ծագումը և կապերը: Առաջադիմական մշակույթներում հասարակական նույնականացման և վստահության շրջագիծը դուրս է գալիս ընտանիքի սահմաններից և ընդգրկում է շատ ավելի լայն սոցիալական ամբողջություն: Ավանդական՝ ստատիկ մշակույթներում վստահության շրջագիծը սահմանափակվում է ընտանեկան շրջանակներով: Նույնականացման և վստահության ցածր շառավիղով սոցիալական համակարգերն ավելի շատ են հակված կոռուպցիայի, նեպոտիզմի, հարկային խախտումների և չեն ձգտում մարդասիրության: Առաջադիմական մշակույթներում արդարությունը և ազնվությունը ամենասպասված որակներն են: Եվ հակառակը՝ ստատիկ մշակույթներում արդարությունը՝ որպես անձնական հաջողություն, իրենից ներկայացնում է մի գործառույթ, որն իրականանալի է միայն փողի կամ անձնական կապերի ուժով: Առաջադիմական մշակույթներում իշխանությունն ունի հորիզոնական բաշխում, մինչդեռ ստատիկ մշակույթներում այն կենտրոնացված է և ուղղահայաց:[183]

Հարկ է նկատել, որ այս խնդիրը գոյություն ունի նաև հարավկովկասյան բազմական պետություններում, սակայն տարակերպ դրսևորումներով: Նկատենք, որ ստատիկ մշակույթի բոլոր տարրերն առկա են Ադրբեջանում: Վրաստանի պարագայում ստատիկ մշակույթին բնորոշ որոշ երևույթներ արդեն մասամբ հաղթահարված են, սակայն դա չի նշանակում, որ մշակույթը լիարժեք առաջադիմական է,

---

[182] Харрисон Л. Способствуя прогрессивным преобразованиям в культуре, в книге "Культура имеет значение. Каким образом ценности способствуют общественному прогрессу", под ред. Л. Харрисона и С. Хантингтона. М., Московская школа политических исследований, 2002, с. 294-295.

[183] Նույն տեղում:

քանի որ հաշվի առնելով հասարակության բազմականությունը՝ ինչպես Ադրբեջանի դեպքում է, իշխանության բաշխումը շարունակում է մնալ ուղղահայաց գոտում, իսկ տարբեր էթնոսների միջև մշակութային ինքնավարության և քաղաքական նախաձեռնողականության առումներով հավասարությունը դեռ չլուծված խնդիր է: Հարավային Կովկասի երկրներում այս խնդիրները ևս կապված են մշակույթի հետ: Ինչպես Ա. դը Տոկվիլն է նշում. «Մշակույթը մայրն է, իսկ ինստիտուտները նրա երեխաները»:[184]

Ուշագրավ է նաև նոր ժողովրդավարություններում քաղաքական բավարարվածության խնդիրը ազգամիջյան տարբերությունների տեսանկյունից: Հասկանալի է, որ բազմական հասարակություններում ազգային տարբեր միավորները հաճախ չեն կարող հավասարապես լինել քաղաքականապես բավարարված: Այս խնդիրն ունի տարբեր դրսևորումներ կայացած և նոր ժողովրդավարությունների դեպքում: Տվյալ խնդրի ուսումնասիրության արդյունքում Ք. Անդերսոնը պնդում է, որ կայացած ժողովրդավարություններում քաղաքական մշակույթը և համակարգի արդյունավետությունը պայմանավորվում են քաղաքական բավարարվածության մակարդակով: Բացի այդ, քաղաքական մշակույթի ազդեցությունը լինում է ավելի նվազ, քան համակարգի արդյունավետությունը, երբ նկատի են առնվում այլընտրանքային բացատրությունները: Հակառակ դրան՝ նոր ձևավորվող ժողովրդավարություններում քաղաքական բավարարվածության մակարդակը կապված չէ քաղաքական մշակույթի կամ համակարգի արդյունավետության հետ: Ընդհանուր առմամբ, Ք. Անդերսոնի հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ժողովրդավարության բավարարվածության կառուցվածքը կայացած և նոր ժողովրդավարական համակարգերում նման չեն միմյանց:[185]

---

[184] Tocqueville Alexis de. *Democracy in America,* New York: Doubleday Anchor, 1969, pp. 308-309.

[185] Anderson Christopher J. *Political Satisfaction in Old and New Democracies.* Center on Democratic Performance, Binghamton University, New York, 1998, 22 p.

Այս ամենը վկայում է այն մասին, որ բազմական հասարակություններում, որոնք որդեգրել են ժողովրդավարության ուղին, ազգային, կրոնական, լեզվական և այլ գործոններով պայմանավորված քաղաքական ենթամշակույթները հզոր են իրենց միջավայրում, բայց միևնույն ժամանակ դրանք հավասար չեն միմյանց, եթե չի կիրառվում ժողովրդավարության համապատասխան մի մոդել, որը թույլ կտա, որ որևէ ազգային խմբի, ընդհանուր առումով, ենթամշակույթը չդառնա տիրապետող քաղաքական մշակույթ և դրանով իսկ ներգործի ողջ հասարակության՝ որպես ամբողջության քաղաքական բավարարվածության վրա՝ անտեսելով այլ քաղաքական ենթամշակույթների շահերի իրացումը: Սա նշանակում է, որ հասարակության տարբեր սեգմենտների՝ որպես ենթամշակույթների միջև հավասար մրցակցության պայմանների բացակայությունը թուլացնում է նաև քաղաքական մշակույթի ազդեցությունը և նշանակությունը քաղաքական համակարգի կայունության վրա: Սրանով է նաև պայմանավորված բազմական կառուցվածքով նոր ժողովրդավարություններում առկա ազգամիջյան, ինչպես նաև այլ բնույթի՝ կրոնական խնդիրների կոնֆլիկտածին ներուժը, ինչը ոչ միայն սպառնում է արդյունավետ ժողովրդավարացմանը, այլև խաթարում է հասարակական անվտանգությունը: Ուստի վերը նշված խնդիրների հաղթահարման համալիր մոդել կարող է լինել կոնսոցիատիվ ժողովրդավարությունը, ինչը կարող է ստեղծել կոնսոցիատիվ խոսույթի հնարավորություն տարբեր սեգմենտների միջև՝ ուղղված ոչ թե մասնավոր կամ խմբային, այլ ընդհանուր շահերի ձևավորմանը և դրանց բավարարմանը: Իսկ այս պարագայում արդեն քաղաքական մշակույթը կդառնա ավելի ծանրակշիռ գործոն ժողովրդավարացման համար, ինչպես կայացած ժողովրդավարություններում է:

Այսպիսով՝ Հարավային Կովկասի դեպքում ակնհայտ է, որ Ադըրբեջանը և Վրաստանը, լինելով բազմական հասարակական կառուցվածք ունեցող պետություններ, քաղաքացիական մշակույթի ձևավորման և ժողովրդավարացման գործում ունեն զգալի դժվարություններ, ինչը հանգեցնում է նաև քաղաքական անկայունության, որի հաղթա-

հարման պարագայում է միայն հնարավոր արդյունավետ ժողովրդավարության մոդելի ներդրումը, ինչպիսին կարող է լինել կոնսոցիատիվ ժողովրդավարությունը: Հետևապես՝ հաշվի առնելով նաև տեղական մշակութային առանձնահատկությունները՝ կոնսոցիատիվ խոսույթի գործադրումն այս պետություններում կարող է կարևոր գործոն դառնալ ժողովրդավարացման հաջող ընթացք ապահովելու համար: Այսպիսի խոսույթը կարող է նաև նպաստել հասարակության տարբեր սեգմենտների միջև առկա սոցիալական կոնֆլիկտների հաղթահարմանը, որի դեպքում քաղաքացիական մշակույթի ձևավորման հեռանկարը կդառնա ավելի իրատեսական՝ դրանով իսկ մյուս էթնիկ սեգմենտների համար ստեղծելով ինքնության անվտանգության հավելյալ երաշխիքներ:

Էթնոկրատիան որպես ժողովրդավարության խոչընդոտ

Հետխորհրդային հարավ-կովկասյան պետությունների փորձը ցույց է տալիս, որ դրանցից երկուսում՝ Ադրբեջանում և Վրաստանում, կարելի է նկատել հստակ ընդգծված էթնիկ գերակայության դրսևորումներ, ինչը մեծապես հատկանշական է էթնոկրատական քաղաքական վարչակարգերին: Սովորաբար էթնոկրատական նկրտումները բնորոշ են բազմական հասարակություններին, որտեղ բնակչության մեջ գոյություն ունեն էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլ տարբերություններ:

Էթնոկրատիաներում դե ֆակտո իրավունքները սահմանվում են ոչ թե համընդհանուր քաղաքացիությամբ, այլ էթնոազգային ծագումով: Այսպիսի երկրներում քաղաքական վարչակարգի լեգիտիմության աղբյուրը ոչ թե քաղաքացիական բնակչությունն է (դեմոսը), այլ գերակա (դոմինանտ) էթնոսը: Գերակա էթնիկ խումբը յուրացնում է պետական ապարատը և սկսում է վարել խտրական քաղաքականություն այլ էթնոսների նկատմամբ: Դիխոտոմիան բաժանում է տարբեր էթնոսներին որպես տեղաբնիկների և եկվորների՝ չնայած այն բանին, որ երկուսն էլ ներքուստ բաժանված են տարբեր էթնոդասերի: Էթնոկրատիան իր էությամբ ոչ ժողովրդավարական է՝ չնայած այն բանին, որ կարող է դրսևորել ժողովրդավարությանը բնորոշ հատկանիշներ, ինչպիսիք են՝ համընդհանուր քվեարկությունը կամ ժողովրդավարական ինստիտուտները:[186]

Էթնոկրատիան իսկական ժողովրդավարություն չէ, քանի որ դրանում բացակայում է «ժողովրդավարական կառուցվածքը»: Էթնոկրատիան ձգտում է կոտրել ժողովրդավարական սկզբունքները, ինչպես օրինակ՝ հավասար քաղաքացիությունը, տարածքային քաղաքական համայնքների գոյությունը (դեմոսը), պաշտպանությունը մեծա-

[186] Smooha S. *The Model of Ethnic Democracy*. European Center for Minority Issues, 2001, p. 22.

մասնության բռնակալությունից:[187]

Ոչ գերակա էթնիկ խմբերի բողոքը դիտվում է որպես անօգուտ գերակա էթնիկ խմբի կողմից, քանի որ վերջինս հնարավորություն ունի ճնշելու այդ բողոքը: Այս մոդելը սխալական է նաև այն պատճառով, որ գերակա խմբի ստորին շերտերը դիտվում են որպես մարգինալներ, քանի որ դրանք իրականում ոչ գերակա խմբերի ներկայացուցիչների նկատմամբ ունեն բավականաչափ արտոնություններ: Այս մոդելի գլխավոր թերությունն այն է, որ այն անհավանականորեն ձգտում է ներկայանալ որպես նորմատիվային ժողովրդավարություն (ինչպես՝ Ադրբեջանը): Վարչակարգը, որը, այնուամենայնիվ, քաղաքացիական չէ և լիարժեք ազատություն չի շնորհում բոլոր քաղաքացիներին և էթնիկ խմբերին, ոչ ժողովրդավարական է: Նշված բոլոր բացասական դրսևորումները որոշակիորեն առկա են ադրբեջանական հասարակությունում, իսկ Վրաստանի պարագայում դրանք քողարկվում են էթնիկ ժողովրդավարության շղարշով:

Այսպիսի պետություններում մոլորության են հասցվում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ հանրային և էլիտայի ձգտումը ժողովրդավարության, արդար ընտրությունները, ազատ մամուլը, ժողովրդավարական գործիքների արդյունավետ կիրառումը, ոչ գերակա խմբերի նկատմամբ ոչ բռնի պայքարը և այլն: Այսպիսի վարչակարգերի անարդյունավետությունը բնորոշվում է բազմաթիվ ներքին հակասություններով ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական միտումների տեսանկյունից՝ հանգեցնելով հեղհեղուկ և անկայուն վիճակի: Այսպիսի վարչակարգերը որակվում են որպես էթնիկ ժողովրդավարություններ:[188] Ի դեպ՝ էթնիկ ժողովրդավարություններում նկատվում է կոնֆլիկտային դրսևորումների մեծ հաճախակիություն, իսկ այդ կոնֆլիկտների լուծման համար հիմնականում կիրառվում են բռնի մեթոդներ:

---

[187] Yiftachel O. *Ethnocracy: The Politics of Judaizing Israel/Palestine*. Constellations 6, 3 (September): 1999, pp. 364-390.

[188] Smooha S. *The Model of Ethnic Democracy*/European Center for Minority Issues, 2001, p. 23.

Այս առումով Ե. Կուշտավկինան նշում է, որ քաղաքական կոնսենսուսը թույլ է տալիս կայունացնել ազգերի և ժողովուրդների միջև հարաբերությունները:[189] Սակայն հարկ է նկատել, որ առանց մշակութային առանձնահատկությունների հաշվառման այդպիսի քաղաքական կոնսենսուսը կլինի շատ փխրուն: Հետևապես՝ կոնսենսուսի որոնման պարագայում տվյալ գործընթացի հիմքում պետք է դնել մշակութային տարրերը, որոնք իրենց առանձնահատկություններով կարող են դրսևորվել սուբյեկտների քաղաքական վարքում:

Մեկ այլ հետազոտող Ն. Մեդվեդևը նշում է, որ հասարակության արմատական արդիականացման պայմաններում էթնոցենտրիզմը դառնում է գերակայող աշխարհայացք, որի միջոցով սկսում են գնահատվել հասարակության զարգացման բոլոր ոլորտները՝ տնտեսությունից մինչև մշակույթ՝ մարդկանց բաժանելով երկու կատեգորիաների՝ էթնիկ նույնականների և էթնիկ օտարների:[190]

Էթնիկ խմբերի կարծիքն առ այն, որ իրենց կենսակերպը լավագույնն է և որ նրանք մյուսներից ավելի լավն են, հեշտորեն փոխակերպվում է մյուս խմբերի նկատմամբ խտրականության՝ ընդհուպ հասնելով նրանց ոչնչացնելու պատրաստականության:[191] Հենց այսպիսի դրսևորումներ եղան 80-ականների վերջին և 90-ականների սկզբին Ադրբեջանում և Արցախում հայերի նկատմամբ Ադրբեջանի թյուրքական էթնոսի կողմից: Այսօր էլ հայերի նկատմամբ այդ թշնամանքը պահպանվում և նույնիսկ խրախուսվում է ադրբեջանական իշխանության կողմից: Իսկ Ադրբեջանի ավտոխտոն մյուս ազգերի նկատմամբ բռնաճնշումները շարունակվում են:[192]

---

[189] Куштавкина Е. *Консенсусные методы урегулирования этнополитического конфликта*. http://kea-nauka.narod.ru/text/26-KonsensMetod.html (15.02.2017)

[190] Медведев Н. *Консесуальные аспекты современного российского федерализма*. Вестник Российского университета дружбы народов. Серия: Политология, № 3, 2001, с. 66.

[191] Пашукова Т. *Этноцентризм в межкультурной коммуникации*. Вестник МГЛУ. Выпуск 563, с. 59

[192] Սարգսյան Վ. *Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրական վերաբերմունքը պետական քաղաքականության մաս է,*

Ոչ ժողովրդավարական տարրերի ներդրումը էթնիկ ժողովրդավարության մոդելում դարձել է այս մոդելի քննադատության և մերժման հիմնական պատճառը: Ս. Սմուհան իրավացիորեն նշում է, որ էթնիկ ժողովրդավարությունը քննադատվում է իր ոչ լեգիտիմ բնույթի համար (ոչ ժողովրդավարությունը ձևացնում է ժողովրդավարություն), իր անկայունության համար (թշնամական հակասությունների վրա կառուցված քաղաքական համակարգը չի կարող լինել կայուն), իր անարդյունավետության համար (կոնֆլիկտները շարունակում են եռալ):[193]

Հեղինակն ընդգծում է, որ էթնիկ ժողովրդավարությունը հատկապես գրավիչ է ժողովրդավարության ուղին որդեգրած բազմաէթնիկ տարրեր պարունակող պետությունների համար: Անցումը ոչ ժողովրդավարական վարչակարգից ազատական, բազմամշակութային կամ կոնսոցիատիվ ժողովրդավարության չափազանց դժվար թռիչք է այսպիսի պետությունների համար: Հետևապես՝ այդ պետությունները նախընտրում են էթնիկ ժողովրդավարությունը որպես փոխզիջում (կոմպրոմիս) ժողովրդավարության և էթնիկ գերակայությունն ու էթնիկ ազգայնականությունը պահպանելու միջև՝ իրենց հիմքում ունենալով նաև նախորդ վարչակարգի փորձը: Նախկին խորհրդային որոշ պետություններ՝ Վրաստանը, Էստոնիան, Լատվիան, հատկապես՝ Ադրբեջանը շարժվում են այդ ուղղությամբ:[194]

Հայ հետազոտողներ Տ. Թորոսյանը և Հ. Սուքիասյանը, վերլուծելով հետխորհրդային տարածքում հաստատված քաղաքական վարչակարգերը, Վրաստանը և որոշ հետազոտողների գնահատմամբ նաև Ադրբեջանը, իհարկե, բազմաթիվ վերապահումներով, ներառում են

---

http://www.lragir.am/index/arm/0/politics/view/147848 (14.02.2017), *Ադրբեջանում էթնիկ պատկանելության մասին խոսելը դիտարկվում է որպես հանցանք,* https://armenpress.am/arm/news/881095/adrbejanum-etnik-patkanelutyan-masin-khosely-ditarkvum.html (03.03.2017)

[193] Smooha S. *The Model of Ethnic Democracy*/European Center for Minority Issues, 2001, p. 84.

[194] Smooha S. ...., p. 85.

«սպասման խմբում»[195], այսինքն՝ սրանք այն պետություններն են, որտեղ վարչակարգային փոխակերպումները շարունակվում են: Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ միջազգային վերջին գնահատականների (Freedom House: Nations in Transit) համաձայն՝ Ադրբեջանում հաստատվել է խոր ավտորիտար վարչակարգ, իսկ Վրաստանում՝ անցումային կառավարություն կամ հիբրիդային վարչակարգ:[196] Այս հանգամանքը Ադրբեջանի դեպքում էլ ավելի նպաստավոր պայմաններ կարող է ստեղծել էթնոկրատական դրսևորումների խորացման համար, քանի որ ավտորիտար վարչակարգում տարբեր էթնիկ խմբերի իրավահավասարության հարցը էլ ավելի է վտանգվում:

Վրացի հետազոտող Ն. Սաբանաձեն, անդրադառնալով Վրաստանում քաղաքական վարչակարգի ձևին, այն բնորոշում է որպես էթնիկ ժողովրդավարություն: Հեղինակը նշում է, որ Վրաստանում անկայունության գլխավոր պատճառը թույլ պետականության և էթնիկ ժողովրդավարության համակցությունն է: Թույլ պետականության և էթնիկ ժողովրդավարության համակցությունը կարող է հանգեցնել մեծապես փխրուն և անկանխատեսելի իրավիճակի: Էթնիկ ժողովրդավարությունը ավելի շուտ ընկալվում է որպես ոչ ճիշտ, անարդար վարչակարգ, քանի որ այն գործում է բացառապես հիմնական էթնիկ խմբի շահերի օգտին:[197]

Հարկ է նկատել, որ անկայունությունը այս դեպքում բխում է պետության թուլությունից, այլ ոչ թե վարչակարգի բնույթից, քանի որ էթնիկ ժողովրդավարության մոդելի հեղինակներն այն հաճախ դիտում են որպես ոչ ժողովրդավարական վարչակարգից ժողովրդավարականի անցման փուլ, ինչը մասնավորապես ներհատուկ է թույլ և ժողովրդ-

---

[195] Torosyan T., Sukiasyan H. *Three Stages, Three Groups and Three Paradigms of Post-Soviet Transformation*. Armenian Journal of Politcal Science 1(1), Yerevan, 2014, pp. 51-61.

[196] *Nations in Transit 2016*, available from https://freedomhouse.org/report/nations-transit/nations-transit-2016 (20.04.2017)

[197] Sabanadze N. *Georgia's Ethnic Democracy: Source of Instability*/ The Fate of Ethnic Democracy in Post-Communist Europe, Open Society Institute, 2005, pp. 115-139.

դավարական փոխակերպման մեջ գտնվող պետություններին:[198]

Էթնիկ ժողովրդավարության դեպքում անկայունությունն արտահայտվում է երկու հիմնական ձևով: Առաջին՝ այն օտարում է փոքրամասնություններին և հետևապես խարխլում է նրանց հավատարմությունը պետության նկատմամբ, ինչն էլ լեգիտիմացնում է վերջիններիս՝ պետական անվտանգությունը և կայունությունը խաթարելու ձգտումները: Երկրորդ՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ հակասությունները տեղափոխվում են միջէթնիկ մակարդակ և այդպիսով՝ փոքրամասնությունները հեռանում են ընդունելի քաղաքական բանակցությունների հարթությունից՝ այդ սակարկությունների համար անհաշտ պայքարը տեղափոխելով դեպի էթնիկ ինքնության, ազգային արժանապատվության հարթություններ:[199]

Այն հասարակությունները, որոնք համակցում են թերի ժողովրդավարությունը քաղաքականացված էթնիկության հետ, կարող են բնորոշվել որպես «էթնիկ ժողովրդավարություն»: Դա մի ժողովրդավարություն է, որը բովանդակում է մեկ էթնիկ խմբի գերակայությամբ ոչ ժողովրդավարական ինստիտուցիոնալացման գործընթաց: Այս դեպքում պետությունը ստեղծվում է ոչ թե իր բոլոր քաղաքացիների, այլ մեծամասնական խմբի շահերին ծառայելու համար: Գերակա խմբին անդամակցելը որոշվում է բացառապես էթնիկ պատկանելությամբ:[200]

Այս մոդելի վերաբերյալ նմանօրինակ մոտեցում ունի նաև Պ. Յարվեն, ով նշում է, որ էթնիկ ժողովրդավարությունը պետք է տեղավորել կամիշխանական (ավտորիտար) վարչակարգից ժողովրդավարականի անցման համատեքստում: Այն չի կարելի համարել որպես անցման գործընթացի վերջին կանգառ, որտեղ հասել է պետությունը: Էթնիկ ժողովրդավարությունը ավելի շուտ իր՝ դեպի ժողովրդավարա-

---

[198] Նույն տեղում:

[199] Նույն տեղում, էջ 116:

[200] Smooha S. *The Model of Ethnic Democracy*, ECMI Working Paper No.13 (Flensburg: European Centre for Minority Issues, 2001), p. 24.

կան հասարակություն հարատև ճանապարհորդության միայն մի շրջափուլն է:[201]

Այս պարագայում, միանշանակ կարելի է պնդել, որ վերը նշված մոդելի հեղինակների այս մոտեցումները չեն կարող լիարժեքորեն բնորոշել բազմական հասարակություններ ունեցող բոլոր պետություններին, քանի որ ոչ ժողովրդավարական վարչակարգից դեպի ժողովրդավարություն նրանց ձգտումները էթնիկ ժողովրդավարության մոդելի միջանկյալ կիրառությամբ որոշ դեպքերում ոչ թե կրում են անցումային բնույթ, այլ իրապես արմատավորվում են որպես արդեն իսկ հիմնական կոնսոլիդավցած վարչակարգ, ինչպես Ադրբեջանի օրինակում է: Այսինքն՝ ոչ ժողովրդավարական վարչակարգից էթնիկ ժողովրդավարության մոդելի միջնորդությամբ դեպի լիարժեք ժողովրդավարության ձգտումները կարող են հանգեցնել կրկին ոչ ժողովրդավարական մոդելի արմատավորման, սակայն այլ առանձնահատկություններով: Այս դեպքում էթնիկ ժողովրդավարության՝ որպես անցումային վարչակարգի վերջնական հանգրվանը էթնիկ կամիշխանական (ավտորիտար) վարչակարգն է, որտեղ կրկին իշխող է գերակա էթնոսի շահը (էթնոավտորիտարիզմ): Ստացվում է այնպես, որ էթնիկ ժողովրդավարությունը չի կարող լինել միջանկյալ ուղի դեպի ժողովրդավարություն, քանի որ Ադրբեջանի փորձը ցույց է տալիս, որ էթնիկ ժողովրդավարությունը ուղիղ ճանապարհ է դեպի էթնիկ կամիշխանություն (էթնոավտորիտարիզմ): Շատ հաճախ էլ էթնիկ ժողովրդավարությունը ծառայում է որպես պետությունների իրական վարչակարգային հավակնությունները թաքցնելու կամ առկա խնդիրները քողարկելու քաղաքական գործիք: Այս մոդելի կիրառությամբ պետությունները փորձում են ցույց տալ, թե իրենք ձգտում են ժողովրդավարության, սակայն իրականում ջանում են ամրապնդել ստեղծված ավտորիտար վարչակարգերը:

Հիշարժան է նաև Ն. Սաբանաձեի այն միտքը, որի համաձայն՝

[201] Yarve P. *Ethnic Democracy and Estonia: Application of Smooha's Model*, ECMI Working Paper No.7 (Flensburg: European Centre for Minority Issues, 2000), p. 29.

Վրաստանի դեպքում էթնիկ ժողովրդավարությունը ոչ միայն անկայունության հիմքն է, այլև այն կարող է հանգեցնել ապաինտեգրացնող գործողությունների,[202] ինչն արդեն իրական սպառնալիք կարող է դառնել պետության անվտանգության համար:

Հեղինակը նաև նշում է, որ խորհրդային ժառանգությունը շատ կարևոր, եթե ոչ վճռորոշ դեր խաղաց հետկոմունիստական Վրաստանում ազգայնականության ձևավորման համար: Սա էր պատճառը, որ Վրաստանը կոմունիստական կամիշխանությունից անցում կատարեց դեպի թույլ էթնիկ ժողովրդավարություն:[203] Նույնը վստահորեն կարելի է ասել նաև Ադրբեջանի դեպքում, սակայն մեկ վերապահումով, որ այնտեղ ազերիների ազգայնականությունը գնալով աճում է՝ սպառնալով տեղաբնիկ էթնոսների անվտանգությանը:

Վրաստանը ձախողել է կենսունակ էթնիկ ժողովրդավարություն կառուցելու փորձը: Ն. Սաբանաձեն նշում է, որ Վրաստանը ուղղակի թույլ պետություն է, որի թուլությունը մեծապես բխում է էթնիկ գործոններից: Թուլության հնարավոր պատճառներն են ռեսուրսների սակավությունը, մեծամասնության ներսում քաղաքական տարաձայնությունները, կոռուպցիան, թերի կառավարումը և ոչ ժողովրդավարական մշակույթը: Հեղինակը նաև նշում է, որ էթնիկ ժողովրդավարությունը գնալով ավելի կթուլացնի պետությունը:[204] Այս պարագայում հարկ է նկատել, որ չնայած Արևմուտքի ջանքերով ժողովրդավարական առաջընթացին, որը վերջին տարիներին կարելի է նկատել վրացական հասարակության ներսում, այնուամենայնիվ՝ էթնիկ գերակայության գործոնը շարունակում է պահպանվել, հետևապես՝ շարունակում է պահպանվել նաև անհրաժեշտության դեպքում այլ էթնոսների նկատմամբ ճնշումների հավանականությունը, քանի որ այլ էթնոսները դեռևս չունեն համապատասխան համամասնական ներկայացվածու-

---

[202] Sabanadze N. *Georgia's Ethnic Democracy: Source of Instability*/ The Fate of Ethnic Democracy in Post-Communist Europe, Open Society Institute, 2005, p.118.

[203] Նույն տեղում, էջ 119:

[204] *The Fate of Ethnic Democracy in Post-Communist Europe*/ Edited by Smooha S., Yarve P./ ECMI, 2005, p. 247.

թյուն պետական ներկայացուցչական մարմիններում:

Արևմտյան հետազոտողներ Մ. Դոյչը և Քոլինզը նշում են, որ միջխմբային թշնամանքի և դրական հարաբերությունների ձևավորմանը կարող է օժանդակել տարբեր խմբերի անդամների միջև կապերի մեծացումը: Դրա համար անհրաժեշտ է, որ տարբեր խմբերի ներկայացուցիչները միասին զբաղվեն միևնույն նպատակին ուղղված գործունեությամբ, այսինքն՝ հետապնդեն միևնույն նպատակը:[205] Այս հարցում որպես միջխմբային հարաբերությունների դրական ակտիվացման գործիք կարող է ծառայել կոնսոցիատիվ մոդելը, իսկ որպես նպատակ՝ բոլոր խմբերի հավաքական անվտանգությունը: Այսինքն՝ եթե խմբերն ուզում են ապրել անվտանգ, ապա նրանք այդ անվտանգությունը պետք է դիտեն ոչ թե միայն որպես սեփական խմբի անվտանգության ուղղված շահերի բավարարման քաղաքականություն, այլ պետք է բոլորի անվտանգությունը համարեն ընդհանուր նպատակ, քանի որ իրենց սեփական խմբերին ուղղված անվտանգության սպառնալիքները բխում են հենց մյուս խմբերից, ինչը հանգեցնում է, ինչպես Հոբսն էր նշում՝ «բոլորի պայքարը բոլորի դեմ»[206] իրավիճակի:

Այսպիսով՝ Ադրբեջանում և Վրաստանում որոշակի տարբերություններով հաստատված էթնոկրատական և էթնիկ ժողովրդավարության մոդելների պարագայում ոչ գերակա էթնիկ խմբերի շահերը դե ֆակտո ճնշվում են գերակա էթնիկ խմբերի կողմից: Այսպիսի իրավիճակը ստեղծում է ժողովրդավարացման պատրանք, ինչը բացատրվում է անցումային փուլում գտնվելու հանգամանքով: Ադրբեջանի պարագայում խնդիրը շատ ավելի բարդ է, քան Վրաստանի դեպքում, քանի որ վրաց հասարակությունը վերջին տարիներին արձանագրել է ժողովրդավարության մակարդակի որոշակի աճ: Իսկ Ադրբեջանում շարունակաբար նկատվում է հետևողական հետընթաց դեպի էթնիկ ավտորիտարիզմ:

---

[205] Deutsch M. *The Resolution of Conflict: Constructive and Destructive Processes*. New Haven: Yale University Press, 1973, 420 p.

[206] Հոբս Թ. *Քաղաքագիտություն. հանրագիտական բառարան*, Երևան, 2004, էջ 233:

Հարավային Կովկասի բազմական պետություններում քաղաքական մշակույթի արդիականացման նախապայմանով ոչ ժողովրդավարականից դեպի ժողովրդավարություն անցման արդյունավետ ուղի կարող է լինել կոնսոցիատիվ ժողովրդավարությունը, որն ի սկզբանե մերժում է որևէ էթնիկ խմբի գերակայությունը այլ էթնոսների նկատմամբ, ինչը՝ որպես իրավահավասարություն, դասական ժողովրդավարության պարտադիր սկզբունքներից է:

Մշակութային ռելյատիվիզմը որպես էթնոկրատիայի հաղթահարման միջոց

Ժամանակակից հասարակություններում, որտեղ տարբեր մշակույթների ներկայացուցիչները ստիպված են մշտապես փոխգործակցել, էթնոցենտրիզմը կարող է դառնալ վնասակար և նույնիսկ վտանգավոր երևույթ: Էթնոցենտրիզմը խոչընդոտում է նաև տարբեր մշակույթների գիտական, օբյեկտիվ ուսումնասիրությանը, այլ մշակույթների և ավանդույթների կրողների վարքագծի ադեկվատ ընկալմանը: Էթնոցենտրիզմին հակադրվող դիրքորոշումը մշակութային ռելյատիվիզմն է, որի համաձայն յուրաքանչյուր մշակույթ բացառիկ երևույթ է և պետք է դիտվի դրանում ընդունված չափանիշներին համապատասխան:[207]

Մշակութային ռելյատիվիզմի գլխավոր գաղափարը տարբեր ժողովուրդների կողմից ստեղծված և ստեղծվող մշակութային արժեքների հավասարության ճանաչումն է: Սա ենթադրում է յուրաքանչյուր մշակույթի ինքնուրույնության և ամբողջականության ճանաչում, ինչպես նաև էթնոցենտրիզմից բացարձակ հրաժարում:[208] Հետևապես՝ հարավ-կովկասյան բազմական հասարակություններում էթնոցենտրիզմի հաղթահարման կարևոր նախապայման կարող է դառնալ մշակութային ռելյատիվիզմը: Սա իր հերթին կարող է նպաստել նաև կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ կիրառման պայմանների մշակմանը:

Մ. Հերսկովիցն առանձնացնում է մշակութային ռելյատիվիզմի երեք ասպեկտ՝ մեթոդաբանական, փիլիսոփայական և գործնական: Մեթոդաբանականը վերաբերում է տվյալ ժողովրդի մոտ ընդունված նորմերի և արժեքների համաձայն մշակույթի ճանաչման ձևին: Այսինքն՝ անհատների կենսագործունեությունը անհրաժեշտ է նկարագ-

---

[207] *Этноцентризм и культурный релятивизм*, http://systinfo.ru/kult_object/etnotsentrizm_i_kulturniy_relyativizm.html (05.01.2017)

[208] *Принцип культурного релятивизма/* http://udik.com.ua/books/book-510/chapter-17697/ (24.12.2016)

ռել իրենց սեփական մշակույթի եզրույթներով: Մշակութային ռելյատիվիզմի այս ձևի կարևորագույն ասպեկտը մշակույթը ներսից ճանաչելու ձգտումն է, ինչպես նաև նրա գործառնության իմաստի գիտակցումն է:[209] Այս մոտեցումը մեր համոզմամբ շատ կարևոր է բազմական հասարակությունների դեպքում, որտեղ տարբեր մշակույթների միջև կոնսոցիատիվ խոսույթի հնարավորությունը պայմանավորվում է հենց այս մեթոդաբանությամբ:

Այս առթիվ Տ. Պաշուկովան իրավամբ նշում է, որ հնարավորության դեպքում հարկ է ձևավորել և ուսուցանել արդյունավետ հմտություններ՝ ցույց տալով երկխոսության և համագործակցության սկզբունքների նշանակությունը միջմշակութային հաղորդակցության համար:[210]

Պատմամշակութային գործընթացում մշակութային ռելյատիվիզմի փիլիսոփայական ասպեկտը կապված է մշակութային զարգացման ուղիների բազմակիության ճանաչման հետ: Այն մերժում է մշակութային զարգացման փուլերի պարտադիր էվոլյուցիոն փոփոխությունը և զարգացման մեկ միտումի գերակայությունը: Մի խոսքով՝ Մ. Հերսկովիցի հավատամքն արտահայտված է նրա հետևյալ դատողության մեջ. «Ընդունել, որ իրավունքը, արդարությունը, գեղեցկությունը կարող են ունենալ այնքան դրսևորումներ, որքան մշակույթներ կան, նշանակում է ոչ թե ցուցաբերել նիհիլիզմ, այլ զսպվածություն»:[211]

Ինչ վերաբերում է մշակութային ռելյատիվիզմի գործնական ասպեկտին, ապա այն առավել քան քննարկելի է, քանի որ տարբեր մշակույթներում ռելյատիվիզմը կարող է ունենալ տարակերպ դրսևորումներ: Այս ասպեկտը կարելի է դիտարկել պատմություն-արդիականություն հարթության վրա (օրինակ՝ արդյո՞ք ընդունելի է որոշ մշակույթներում մարդակերությունը, ռասիզմը և այլ բացասական երևույթներ): Այն կարելի է դիտարկել նաև վերացական ֆունկցիոնալիզմի տեսանկյունից (օրինակ՝ որո՞նք են մշակույթների գոյության տարրերը, ի՞նչ տրա-

---

[209] Herskovits M. *Cultural Anthropology*. N.Y.,1955, p. 351.

[210] Пашукова Т. *Этноцентризм в межкультурной коммуникации*, Вестник МГЛУ. Выпуск 563, с. 60.

[211] Herskovits M. ...., p. 547.

մաբանությամբ են զարգանում մշակույթները և այլն):[212] Այս հարցադրումները ցույց են տալիս, որ մշակութային ռելյատիվիզմի գործնական ասպեկտը պայմանավորվում է կոնկրետ մշակույթներով և դրանց առանձնահատկություններով: Հետևապես՝ այս գործնական ասպեկտն ունի հարաբերական նշանակություն:

Որոշ հետազոտողների գնահատականների համաձայն՝ մշակութային ռելյատիվիզմը, ունենալով դրական դերակատարություն եվրոպակենտրոնության, ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարում, վերջին հաշվով հանգեցնում է անվերջ զսպվածության նույնիսկ ամենաանհանդուրժելի երևույթների, նախապաշարմունքների նկատմամբ: Այն հանգեցնում է նաև ժողովուրդների կարիքների նկատմամբ անտարբերության: Մարքսիստական տեսանկյունից մշակութային ռելյատիվիզմն անընդունելի է, քանի որ այն արմատապես հակասում է հետևողականության և տարբեր հասարակական-տնտեսական ֆորմացիաների անհավասարարժեքության սկզբունքին:[213] Սակայն հարկ է նկատել, որ մշակութային ռելյատիվիզմը հատուկ է ոչ թե սոցիալիստական, այլ կապիտալիստական աշխարհին, որտեղ բազմամշակութայնությունը դիտվում է որպես ժողովրդավարական արժեք: Ուստի այս տեսությունը՝ որպես հակակշիռ էթնոցենտրիզմին, գործնականում կարող է արդյունավետ լինել նաև Վրաստանի և Ադրբեջանի դեպքում, քանի որ նրանց բազմական հասարակություններում մի էթնոսի՝ մյուսների նկատմամբ մշակութային գերակայության խնդիրը դեռ լիարժեքորեն լուծված չէ: Ավելին՝ այլ էթնիկ խմբերի մշակութային արժեքների անտեսումը, ոչնչացումը կամ դրանց սեփականումը խորացնում են բազմական հասարակություններում ներքին հակասությունները՝ սրելով հնարավոր կոնֆլիկտային դրսևորումները, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել գերակա և ենթակա էթնիկ խմբերի միջև փոխադարձ անհանդուրժողականության, նույնիսկ ատելության:

---

[212] *Принцип культурного релятивизма*, http://udik.com.ua/books/book-510/chapter-17697/ (24.12.2016)

[213] Арутюнов С. *Культурный релятивизм*, http://www.sati.archaeology.nsc.ru/encyc_p/term.html?act=list&term=474, (15.01.2017)

Մեր օրերում քչերը կկասկածեն, որ տարբեր մշակույթների կրողների միջև, առավել ևս, երբ նրանք ապրում են միևնույն պետությունում, հնարավոր է արդյունավետ երկխոսություն: Սակայն ո՞ր դեպքում է հնարավոր իրական արդյունավետ երկխոսությունը: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ երկխոսությունը ստանում է գիտական-էթիկական բնույթ: Կրթված մարդիկ և գիտնականները ոչ միայն լսում են միմյանց փաստարկները, այլև ձգտում են հաշվի առնել դրանց բովանդակությունը: Արդիական է միայն այն խոսույթը, որն ընթանում է բարոյագիտական հարթությունում: Այս պարագայում է, որ շահեկան է դառնում հանդուրժողականության մասին հարցը:[214] Իսկ այդպիսի երկխոսության կայացմանը Հարավային Կովկասի երկրներում կարող է նպաստել կոնսոցիատիվ խոսույթը, որը պետք է տարբեր էթնոսներին միավորի բոլորի համար հավասարարժեք խնդրի շուրջ, ինչը, իհարկե, կապված է համընդհանուր անվտանգության հետ:

Այս առումով Ա. Ֆետը նշում է, որ մշակութային ռելյատիվիզմը հետևում է նախօրոք սահմանված նպատակին. հիմնավորել ռասաների և ազգերի իրավահավասարությունը՝ ընդունելով անվերապահորեն բոլոր մշակույթների հավասարությունը: Բոլոր մարդկանց իրավահավասարության սկզբունքը հիմնվում է ոչ թե իրավական ակտերի ճանաչման վրա, այլ դրա հիմքում ընկած է եղբայրության անմիջական զգացումը և բոլոր մարդկանց համերաշխությունը, որն ունի կենսաբանական ծագում և ամրապնդված է մշակութային էվոլյուցիայով:[215]

Լորենցին պատկանող կենսաբանական հայեցակարգի տեսանկյունից բոլոր մարդկանց իրավահավասարության սկզբունքը պետք է դիտել որպես մեր սոցիալական բնազդի մշակութային զարգացման արդյունք: Այս սկզբունքի խախտումը նշանակում է հետընթաց դեպի արդեն իսկ հաղթահարված մշակութային փուլեր՝ դեպի միջնադար կամ հին դարեր, իսկ հատուկ դեպքերում այն նշանակում է սոցիալա-

---

[214] *Мультикультурализм и этический релятивизм*, http://studme.org/11390422/filosofiya/nenasilie_nasilie (01.03.2017)

[215] Фет А. *Культуры и культурный релятивизм*, http://modernproblems.org.ru/philosofy/261-culture.html (26.02.2017)

կան բնազդի կենսաբանական մեխանիզմի խանգարում, այսինքն՝ պաթոլոգիա բժշկական տեսանկյունից:[216]

Ա. Ֆետն իրավացիորեն նշում է, որ հավասարության սկզբունքը այն մշակութային ավանդույթի անքակտելի մասն է, որը նախկինում՝ մինչև դրա լիարժեք ճանաչումը, կոչվում էր «քրիստոնեական», իսկ հիմա այն անվանում են «եվրոպական» կամ «արևմտյան» մշակույթ:[217]

Մշակութային ռելյատիվիզմի էությունն արտահայտվում է հետևյալ պարզ բանաձևով՝ «Քանի որ բոլոր մարդիկ հավասար են, բոլոր մարդկային մշակույթները հավասարարժեք են, ապա նրանց միջև ստորակարգություն հաստատելու ցանկացած փորձ համարվում է ռասիզմ»:[218]

Մշակութային ռելյատիվիզմը, որն ամբողջությամբ հակադրվում է էթնոցենտրիզմին, հաշվի առնելով բազմական հասարակության սեգմենտների մշակութային առանձնահատկությունները, ինչպես ցույց է տալիս Նիդերլանդների, Բելգիայի և այլ բազմական պետությունների փորձը, ունակ է բազմական պետություններում ստեղծել ժողովրդավարացման իրական հնարավորություն կոնսոցիատիվ մոդելի հիման վրա: Այս մոտեցումը կարող է կիրառելի լինել հարավ-կովկասյան բազմական պետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի համար այն դեպքում, երբ քաղաքացիական մշակույթի կառուցումը, թեկուզ, դանդաղ տեմպերով, կգրանցի դրական միտումներ: Այս դեպքում մշակութային ռելյատիվիզմի միջոցով էթնոցենտրիզմի հաղթահարումը հարավ-կովկասյան բազմական պետություններում կարող է դառնալ քաղաքական կայունության, ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնուրույնության և անվտանգության, ինչպես նաև ժողովրդավարական առաջընթացի կարևորագույն նախապայմաններից մեկը:

---

[216] Фет А. ...., (26.02.2017)
[217] Նույն տեղում:
[218] Նույն տեղում:

Կոնսոցիատիվ մոդելը որպես այլընտրանքային ժողովրդավարություն բազմական հասարակություններում

Բազմական հասարակություններում կոնսոցիատիվ մոդելի գրավչությունը կայանում է այն բանում, որ պետական իշխանությունը չի կարող ունենալ լեգիտիմություն առանց լայն մասնակցության: Միևնույն ժամանակ որևէ ռասայական կամ էթնիկական խմբի քաղաքական իշխանության ամրագրումը կարող է պատմականորեն լինել հարատև և որոշ դեպքերում խոչընդոտել հասարակական բաժանման սկզբունքին:[219]

Հարկ է նշել, որ կոնսոցիատիվ տեսությունը առաջին հերթին ծառայել է ներքուստ խոր պառակտված եվրոպական ժողովրդավարություններում քաղաքական կայության խնդրի բացատրության համար: Այս տեսությունը պնդում էր, որ այդ երկրներում ենթամշակութային սեգմենտների ապակայունացնող ազդեցությունները չեզոքացվում էին էլիտաների մակարդակով՝ ներառելով կոնֆլիկտների լուծման ոչ-մեծամասնական մեխանիզմներ: Այս տեսությունը լայն տարածում գտավ այն պատճառով, որ ձևավորվեցին նոր ժողովրդավարություններ, որոնք կոնսոցիատիվ մոդելով կառավարման համար ունեին նպաստավոր պայմաններ, եթե հաշվի առնենք նրանց բազմական հասարակական կառուցվածքը: Այս տեսությունը նաև ընդգրկեց մի շատ ավելի լայն հասկացություն՝ «կոնսենսուսային ժողովրդավարությունը», որին ավելացվեց նորմատիվային մասը՝ որպես խոր սեգմենտավորված հասարակություններում կայուն ժողովրդավարության հասնելու երաշխավորված առավել հեռանկարային ուղի: Կոնսոցիատիվ մոդելը միշտ եղել է բավականին վիճահարույց, սակայն այդ վեճերը հիմնականում կապված են տեսության հավատարժանության (վալիդության) հետ, իսկ տարբեր պետություններում դրա կիրառու-

[219] Issacharoff S. *Constitutionalizing Democracy in Fractured Societies.* Journal of International Affairs, Fall 2004, vol. 58, no. I, pp. 73-93.

թյան հաջողությունների, հետևանքների և դժվարությունների մասին քննադատություններն ավելի սակավաթիվ են: Այդ քննադատությունները կարող են դառնալ ավելի արդյունավետ, եթե դրանք ավելի քիչ ուղղորդվեն ինդուկտիվ մեթոդով և մեծապես հիմնվեն վերացարկման վրա, ինչպես նաև եթե կոնսոցիատիվ մոդելի քննադատներն ավելի շատ կենտրոնանան դրա սկզբունքների, այլ ոչ թե դրա օպերացիոնալացման վրա: Սրանով է պայմանավորվում այն հարցը, թե արդյո՞ք սոցիալական պառակտումները կոնսոցիատիվ ժողովրդավարություններում կարող են հանգեցնել ավելի մրցակցային քաղաքականության:[220]

Կոնսոցիատիվ ժողովրդավարության բնութագրիչներն են՝ *սեգմենտավորված հասարակություն, մեծ կոալիցիա, համամասնականություն, սեգմենտային ինքնավարություն, փոխադարձ (փոքրամասնության) վետո:*

Կոնսենսուսային ժողովրդավարության բնութագրիչներն են՝ *սովորականից մեծ կաբինետ (գործադիր մարմին), իշխանությունների բաժանում, բազմակուսակցական համակարգ, համամասնական ներկայացվածություն, կորպորատիվ շահերի խմբերի համակարգ, երկպալատ համակարգ, (ոչ-)տարածքային դաշնություն և ապակենտրոնացում, ամրացված սահմանադրություն (որի փոփոխության համար անհրաժեշտ է լայն կոնսենսուս), դատական վերահսկողություն (դատական իշխանությունն իրավասու է վերանայել և չեղարկել օրենսդիր և գործադիր իշխանությունների որոշումները), անկախ կենտրոնական բանկ:*[221]

Վերը նշված բնութագրիչները դիտվում են որպես բազմական հասարակություններում կոնսոցիատիվ մոդելի կիրառման առավելություններ, քանի որ իրական հնարավորություն են ստեղծում տարբեր սեգմենտների համար ունենալ իշխանության որոշակի լծակներ, նաև վետոյի իրավունք՝ որպես սեփական շահերի առաջադրման և պաշտպանության իրավական մեխանիզմ:

---

[220] Andeweg Rudy B. *Consociational Democracy*, Annual Review of Political Science /3/, 2000, pp. 509-536.

[221] Նույն տեղում, էջ 513:

Կոնսոցիատիվ մոդելի հեղինակ Ա. Լեյփհարթն իր վերջին աշխատանքներում առանձնացնում է նաև տարանջատված հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրառության համար անհրաժեշտ հետևյալ նպաստավոր պայմանները՝ *ոչ մեծամասնական սեգմենտ, հավասարաչափ սեգմենտներ, սեգմենտների փոքր թիվ, արտաքին սպառնալիք, ոչ մեծ բնակչություն, սոցիալ-տնտեսական հավասարություն, սեգմենտների աշխարհագրական կենտրոնացվածություն, էլիտաների համաձայնեցման, ներդաշնակության, համակեցության ավանդույթ, համընդհանուր հավատարմություն:*[222]

Բազմաթիվ առավելությունների հետ մեկտեղ կոնսոցիատիվ մոդելն իր կիրառության տեսանկյունից կարող է ունենալ նաև որոշ դժվարություններ:

Ըստ Ա. Պապալարդոյի՝ էլիտայի գերակայությունը քաղաքականապես տարբերվող և կազմակերպչական տեսանկյունից մեկուսացված հետևորդի նկատմամբ կոնսոցիատիվիզմին միանշանակ նպաստող միայն երկու պայմաններից մեկն է:[223] Սակայն ենթադրաբար սրա հետևում կարող է թաքնվել զանգվածային քաղաքական անտարբերություն, երբ տարբեր սեգմենտների առաջնորդները կարող են որոշել համագործակցել միմյանց հետ (ինչը նպաստավոր է կոնսոցիատիվության համար), սակայն նրանց հետևորդները երբեք չէին ցանկանա, որ իրենց առաջնորդները մրցակցությունից անցնեն համագործակցության դաշտ:[224]

Այս պարագայում հասկանալի է, որ գերակա էթնիկ խմբի անդամները կամ հետևորդները կոնսոցիատիվությանը կսկսեն վերաբերվել ավելի պակաս խանդավառությամբ: Սոցիալական տարբե-

---

[222] Lijphart A. *The Puzzle of Indian Democracy: A Consociational Interpretation.* American Political Science Review, 1996, pp. 262-263.

[223] Pappalardo A. *The Conditions for Consociational Democracy: A Logical and Empirical Critique. European Journal of Political* Research, 1981, pp.365-390.

[224] Huyse L. *Passiviteit, Pacificatie en Verzuiling in de Belgische Politiek: Een Sociologische Studie.* Antwerp: Standaard Wet. Uitg., 1970, 225 p.

ությունները ինքնաբերաբեր չեն դառնում պառակտող գործոններ. դրանք տեսանելի են դարձնում հենց քաղաքական գործիչները, որոնք այդ հանգամանքն օգտագործում են իրենց հետևորդների կողմից քաղաքական աջակցություն ստանալու նպատակով: Որքան այս առումով համոզիչ լինեն քաղաքական գործիչները, այնքան նրանց համար բարդ կլինի իրենց հետևից տանել իրենց հետևորդներին, եթե իրենք սկսեն համագործակցել հակառակ կողմի հետ:[225] Սա վկայում է այն մասին, որ քաղաքական առաջնորդության պահպանության տեսանկյունից իշխող էլիտային ձեռնտու չէ հետևել կոնսոցիատիվ մոդելին, քանի որ այդ դեպքում նա կարող է կորցնել իր լիակատար ազդեցությունը: Այս հանգամանքով կարելի է բացատրել օրինակ՝ Ադրբեջանում իշխանության փոխանցման գործընթացը, երբ այն ընտրությունների միջոցով փոխանցվեց Ալիև ավագից կրտսերին, ինչպես նաև միևնույն ընտանիքի անդամի՝ Ալիև կրտսերի կողմից իր կնոջը փոխնախագահի պաշտոնում նշանակելը: Այս երևույթն էլ ավելի խորացրեց էթնոկրատական և կլանային դրսևորումները Ադրբեջանում:

Կարևոր է նշել, որ կոնսոցիատիվ մոդելը նախատեսում է նաև կայունություն: Եթե տարբեր սեգմենտների առաջնորդները համագործակցում են, և եթե նրանց հետևորդները նրանց թույլ են տալիս դա անել, ապա դա, փաստորեն, կանխորոշված բնույթ է կրում: Սակայն միևնույն ժամանակ կարող են լինել նաև չնախատեսված հետևանքներ: Ա. Լեյփհարթը զգուշացնում է, որ երբեմն կոնսոցիատիվությունը կարող է հանգեցնել անորոշության և անարդյունավետության: Էլիտայի ներսում մեծ կոալիցիայի վերաբերյալ սակարկությունները կարող են արգելակել որոշումների ընդունման գործընթացը: Համամասնականության կիրառությունը քաղաքացիական ծառայության ինստիտուտի ձևավորման գործում կարող է հատվել արժանավորների՝ տվյալ պաշտոններում նշանակման հարցի հետ, իսկ սեգմենտների ինքնավարությունը կարող է հանգեցնել պետական հաստատությունների թվի

[225] Andeweg Rudy B. *Consociational Democracy*, Annual Review of Political Science /3/, 2000, p. 528.

բազմապատկմանը: Փոխադարձ վետոյի իրավունքն էլ իր հերթին կարող է քաղաքական գործընթացը տանել դեպի փակուղի, ինչը Ա. Լեյփհարթը դիտում է որպես կոնսոցիատիվության գլխավոր խնդիր:[226]

Գնահատելով այս պոտենցիալ դժվարությունների նշանակությունը՝ Ա. Լեյփհարթը նշում է, որ պետք է տարբերություն դնել կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունավետության միջև: Կարճաժամկետ գործածության դեպքում կոնսոցիատիվ մոդելը կարող է լինել պակաս արդյունավետ՝ հաշվի առնելով վերը նշված պատճառները: Սակայն երկարաժամկետ գործածության դեպքում այն կլինի առավել արդյունավետ, քան մրցակցային քաղաքականությունը, քանի որ խոր տարանջատված հասարակություններում կոնսոցիատիվությունը կայունության և լեգիտիմության հիմնաքարն է:[227]

Մեկ այլ հետազոտող Ի. Սալամեյն առանձնացնում է կորպորատիվ և ինտեգրատիվ կոնսոցիատիվ մոդելներ: Նա կասկածի տակ է դնում կորպորատիվ կոնսոցիատիվ մոդելի արդյունավետությունը ժողովրդավարական անցման փուլում գտնվող բազմական հասարակությունների պարագայում, քանի որ ժողովրդագրական և տարածքային առումներով իշխանության տեղաշարժերը հանգեցնում են հակասությունների, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են կոնֆլիկտների և պետության մասնատման: Ուստի որպես այլընտրանք, որպես կառավարման ավելի ճկուն եղանակ՝ հեղինակն առաջարկում է ինտեգրատիվ կոնսոցիատիվ մոդելը, ինչը համատեղում է քաղաքական իշխանության տարանջատման գործում ազգային և համայնքային բնույթի շահերը: Պետական ընտրական ռազմավարությունները, ինչպես և վարչական բարեփոխումները նույնպես ներառվում են ինտեգրատիվ կոնսոցիատիվ մոդելի համատեքստում:[228]

Ուշագրավ է նաև կոնսոցիատիվ տեսության վերաբերյալ Պ. Նո-

---

[226] Lijphart A. *Democracy in Plural Societies: A Comparative Explanation*. New Haven, CT: Yale Univ. Press. 1977, pp. 50-51.
[227] Lijphart A. ...., pp. 51-52.
[228] Salamey I. *Failing consociationalism in Lebanon integrative options* /International Journal of Peace Studies, Volume 14, Number 2, Autumn/Winter 2009, pp. 84-105.

րիսի մոտեցումը, որը ենթադրում է, որ բազմական հասարակություններում իշխանության բաժանումն (power-sharing) ունի բազմաթիվ կարևոր հետևանքներ: Այս ինստիտուտը կոչված է մասնատված հասարակություններում պարզեցնել համագործակցությունը առաջնորդող էլիտաների միջև՝ այն դարձնելով ավելի համահունչ կայուն ժողովրդավարության և լավ կառավարման ձգտումների համար մղվող պայքարում: Իր ուսումնասիրության մեջ Պ. Նորիսը համեմատում է բազմաթիվ բազմաէթնիկ պետություններ, որպեսզի պարզի իշխանության բաժանման ինստիտուտի ազդեցությունը (համամասնական ներկայացվածություն և դաշնություն) ժողովրդավարական կայունության և լավ կառավարման ցուցիչների վրա: Արդյունքում՝ հեղինակը հանգում է երեք կարևոր եզրակացության, որոնք են՝ 1. աշխարհում այն պետությունների թիվը, որտեղ իշխանության բաժանումը համակցվում է համամասնական ներկայացվածությամբ և պետության դաշնային կառուցվածքով շարունակում է մնալ սակավ (191 երկրից միայն 13-ում է այդպես), 2. համեմատության մեջ բացահայտվեց, որ պետության կառուցվածքի դաշնային ձևը կապ չունի լավ կառավարման ցուցիչների հետ, 3. բազմաէթնիկ պետություններում համամասնական ներկայացվածությամբ ընտրական համակարգերը, այնուամենայնիվ, որոշակիորեն կապված են լավ կառավարման հետ: Ըստ հեղինակի՝ այս ամենը որոշակիորեն սահմանափակում է կոնսոցիատիվ տեսության արդյունավետության հավակնությունը, քանի որ դրան զուգահեռ քաղաքական գործիչները պետք է նաև ներդրումներ անեն հիմնականում մարդկային զարգացման մեջ, ինչն ավելի վստահելի ուղի կստեղծի կոնսոցիատիվ մոդելի միջոցով կայուն ժողովրդավարության և լավ կառավարման հասնելու համար:[229]

Բ. Օ'Լարին նշում է, որ հակակոնսոցիատիվիստները վախենում են, թե կոնսոցիացիան կհանգեցնի ռասիզմի, արմատականության և նահապետականության, մինչդեռ կոնսոցիատիվիստները վախենում

[229] Norris P. *Stable democracy and good governance in divided societies: Do power-sharing institutions work?/* Harvard University, 2005, p. 1.

են, որ ինտեգրացիոնիստները կիրահրեն պատերազմներ և գերակա համայնքների նկատմամբ կունենան կողմնակալ վերաբերմունք: Այն ուժգնությունը, ինչով ուղեկցվում է այս բանավեճը, ցույց է տալիս կոնսոցիատիվ մտքի ազդեցությունը:[230] Սակայն հարկ է նշել, որ չնայած որոշ դժվարություններին, որոնց գործնականում բախվել է կոնսոցիատիվ տեսությունը, այնուամենայնիվ, շատ բազմական պետություններում այն շարունակում է հաջողությամբ կիրառվել:

Առհասարակ, դժվարությունները պետք է հաղթահարել, քանի որ հակառակ դեպքում դրանցից խուսափելը որևէ կերպ չի կարող լուծել այն խորքային խնդիրները, որոնք առկա են բազմական հասարակություններում: Կոնսոցիատիվ մոդելը առաջարկում է այդ խնդիրների հաղթահարման իրատեսական հնարավորություններ: Հետևապես՝ ներհասարակական կոնֆլիկտների խորացումից խուսափելու համար պետք է ստեղծել համապատասխան մեխանիզմներ նաև հարավ-կովկասյան բազմական հասարակություններում կոնսոցիատիվ մոդելի կիրառության համար: Այս մեխանիզմներից մեկը կարող է լինել կոնսոցիատիվ խոսույթը՝ որպես քաղաքական հաղորդակցության կարևորագույն գործիք, առանց որի բավականին բարդ կլինի ձևավորել համապատասխան քաղաքական գիտակցություն: Մշակութային ռելյատիվիզմի համատեքստում կոնսոցիատիվ խոսույթը կարող է դառնալ միևնույն հասարակության ներսում միջէթնիկ, միջմշակութային տարաձայնությունների հաղթահարման հիմնաքար: Այս դեպքում անհրաժեշտ է ընդհանուր շահի հիման վրա ձևավորել համապատասխան քաղաքական կամք, որի հիմք կարող է դառնալ բազմական հասարակության բոլոր սեգմենտների հավասարության և անվտանգության նպատակը:

Բազմական հասարակություններն աչքի են ընկնում նաև ներքին տարատեսակ կոնֆլիկտներով: Այդպիսին են նաև հարավ-կովկասյան բազմական պետությունները՝ Վրաստանը և Ադրբեջանը, որտեղ առ-

---

[230] O'Leary B. *Debating Consociational Politics: Normative and Explanatory Arguments.*" In From Power-Sharing to Democracy: Post-Conflict Institutions in Ethnically Divided Societies, (Ed.) S. J. R. Noel. (Toronto: McGill-Queens University Press), 2005, p. 36.

կա են միջէթնիկ բնույթի ներքին կոնֆլիկտներ: Ընդհանուր առմամբ կոնֆլիկներն ունեն լուծման տարբեր եղանակներ: Սակայն դրանցում կարևորը կոնսենսուսի որոնումն է:

Ըստ իրենց բնույթի՝ էթնո-քաղաքական կոնֆլիկտները բաժանվում են երկու մեծ խմբի՝ ինքնորոշման և ոչ ինքնորոշման կոնֆլիկտների: Դրանց միջև հիմնական տարբերությունը վերաբերում է իրավական բաղադրիչին:[231] Միևնույն ժամանակ հարկ է կարևորել կոնսենսուսի նշանակությունը ցանկացած կոնֆլիկտի լուծման գործում: Սակայն, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ինքնորոշման կոնֆլիկտների դեպքում լուծումը շատ հաճախ լինում է միջազգայնորեն պարտադրված:

Քաղաքագիտության մեջ առանձնացվում է կոնսենսուսի երկու ընկալում՝ նեղ, այսինքն՝ որպես տարակերպ կոնֆլիկտների և վեճերի քաղաքական լուծման միջոց և լայն, այսինքն՝ ընդհանուր քաղաքական, որն անվանվում է նաև քաղաքացիական համաձայնություն: Կոնսենսուսի լայն ընկալումը սերտորեն կապված է սոցիալ-քաղաքական բաղադրիչի հետ, որի համաձայն՝ կոնսենսուսը մարդկանց զգալի մեծամասնության համաձայնությունն է իրենց գործողություններում դրսևորվող սոցիալական կարգի վերաբերյալ:[232]

Հատկանշական է, որ քաղաքական խոսույթի տեսության շրջանակներում ևս առանձնացվում են խոսույթի կոնֆլիկտային և համաձայնության տիպերը: Ըստ այդ տիպերի՝ կոնֆլիկտային խոսույթը նեղացնում է կոնֆլիկտի կողմերի, մասնակիցների գիտակցությունը՝ հեռացնելով դրա լուծման հեռանկարը, մինչդեռ համաձայնության խոսույթն ընդլայնում է կոնֆլիկտի կողմերի գիտակցությունը և ավելի իրատեսական հնարավորություն է ստեղծում դրա կարգավորման հա-

---

[231] Torosyan T. *Perspectives of Rights and Challenges of Political Interests in Conflict Resolution: The Cases of Kosovo and Nagorno-Karabakh*. Essex Human Right Review, volume 10, issue 1, 2015, available from http://projects.essex.ac.uk/ehrr/v10n1/torosyan-perspectives-of-rights-and-challenges-of-political-interests-in-conflict-resolution.pdf (30.03.2017)

[232] *Современная западная социология.* Словарь, М.,1990, с.134.

մար:[233] Հետևապես՝ կարելի է միանշանակ պնդել, որ կոնսենսուսի լայն ընկալումը լիարժեքորեն համապատասխանում է համաձայնության խոսույթի տեսությանը, ուստի բազմական հասարակություններում, ինչպես Վրաստանը և Ադրբեջանն են, կոնսոցիատիվ խոսույթի միջոցով կարելի է հաղթահարել էթնիկ, կրոնական և մշակութային տարբեր խմբերի միջև հակասությունները և կառուցել ներդաշնակ, հավասարակշռված հասարակություն, որը միևնույն ժամանակ կլինի ժողովրդավարական:

Այս առումով Ա. Ակլաևն իրավացիորեն նշում է, որ կոնսենսուսային մեթոդները հատուկ նշանակություն ունեն էթնոքաղաքական կոնֆլիկտների կառավարման ռազմավարության համար: Եվ այդ առումով նա առանձնացնում է կոնսոցիացիան և իրավարարությունը (արբիտրաժ) որպես կոնսենսուսային մեթոդներ:[234] Այս երկու մեթոդներից նախընտրելի է առաջինը՝ կոնսոցիացիան, քանի որ այն ոչ միայն միտված է բազմական հասարակություններում ներքին կոնֆլիկտների հաղթահարմանը, այլև դրան զուգահեռ նախատեսում է նաև անցում դեպի ժողովրդավարություն:

Չնայած այն բանին, որ կոնսոցիատիվ տեսությունը հիմնականում մշակվել է բազմաէթնիկ հասարակություններում առկա խնդիրների խաղաղ կարգավորման համար՝ այն ունի ընդլայնման ակնհայտ ներուժ:[235]

Ջ. ՄըքԳերին գտնում է, որ բազմականության հիմքով տարածքային հակասությունները շարունակում են մնալ կոնֆլիկտածին երևվույթներ նախկին խորհրդային երկրներում, ինչպիսիք են՝ Ուկրաինան, Մոլդովան, Ադրբեջանը և Վրաստանը:[236] Արդի ներքին զարգա-

---

[233] Օրդուխանյան Է. *Քաղաքական խոսույթ. ուսումնամեթոդական ձեռնարկ*, Լիմուշ հրատ., Երևան, 2016, էջ 25:

[234] Аклаев А. *Этнополитическая конфликтология. Анализ и менеджмент*, М., 2005, с. 346-354.

[235] Рубинштейн А. *Элементы общей теории изъянов смешанной экономики,* Вопросы государственного и муниципального управления. 2017, № 1, с. 71-102.

[236] Basta K., McGarry J., Simeon R. *Territorial Pluralism. Managing Difference in Multinational States.* UBC Press; Reprint edition, 2015, p. 3.

ցումներն ադրբեջանական հասարակությունում ցույց են տալիս, որ այդ հակասությունները սրվելու բարձր հավանականություն կարող են ունենալ, եթե էթնիկ հիմքով ավտորիտար մոտեցումները շարունակեն խորանալ:

Ինչպես նշում են Ջ. ՄըքԳերին և Բ. Օ'Լարին. «Տարածքայնորեն կենտրոնացված համայնքներում կոնֆլիկտների լուծման երկու տարբերակ գոյություն ունի: Առաջին ռազմավարությունը *ինտեգրացիոն* (integrationsit) է, որը շեշտադրում է տարբերությունների հանդեպ միասնությունը բազմական պետություններում: Սակայն այս տարբերակը թշնամածին է իր տարածքային ընդգրկման առումով: Երկրորդ ռազմավարությունը *հարմարեցնող* է (accomodationist), որը պաշտպանում է ենթադաս քաղաքական համայնքների ինքնավարությունը և ամբողջականությունը ընդարձակ ինստիտուցիոնալ մոտեցումների միջոցով: Այս պարագայում ամենակարևոր մոտեցումը համարվում է ֆեդերալիզմը»:[237] Հեղինակները միևնույն ժամանակ ընդգծում են, որ տարածքային ինքնակառավարումը կարող է կենսունակ լինել կոնսոցիատիվ տարրերի ներդրմամբ՝ ճանաչելով սեգմենտների միջև մշակութային և այլ տարբերությունները և ինստիտուցիոնալացնելով դրանք համամասնականության և փոխադարձ վետոյի գործադրմամբ:[238]

Այս առումով ուշագրավ է Տ. Խիդաշելիի մոտեցումը, ով Վրաստանի և Աբխազիայի միջև հակամարտության լուծման համար առաջարկում է կոնսոցիատիվ մոդելի հիման վրա ֆեդերալիզմ: Հեղինակը նշում է, որ դա հնարավոր է այն դեպքում, երբ քաղաքական էլիտաները կունենան համապատասխան կամք երաշխավորելու կարգավորումները և երբ բնակչությունը ևս պատրաստ կլինի աջակցել դրանց: Գործնականում անհրաժեշտ են տնտեսական բարեփոխումներ՝ ուղղված պետության մեջ տնտեսական ռեսուրսների հավասարաչափ բաշխմանը, ինչպես նաև ռեգիոնալ կամ ֆեդերալ կարգավորումները

[237] Basta K., McGarry J., Simeon R. …., p. 4.
[238] Նույն տեղում, էջ 7:

պետք է հիմնվեն ինքնակառավարման (self-government) մշակույթի վրա:[239] Այս ամենի հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև քաղաքացիական մշակույթի առկայություն, ինչը դրականորեն կազդի հարավ-կովկասյան բազմական պետություններում կոնսոցիատիվ մոդելի ներդրման վրա:

Բազմական ներքուստ տարանջատված հասարակություններում կոնֆլիկտի կառավարման տեսանկյունից Ս. Վուլֆը ևս առանձնացնում է կոնսոցիատիվ մոտեցումը, որին վերագրում է երկու կարևոր տարր՝ իշխանության բաժանում և տարածքային ինքնավարություն: Իսկ Ռեյլին այս համատեքստում կարևորում է իշխանության կենտրոնաձգության տեսությունը, ինչը նպաստավոր է ընտրական համակարգի համար, որի դեպքում միջէթնիկ պահանջների բավարարման առումով կուսակցությունները շատ ավելի մեծ հնարավորություններ են ստանում: Ռյոդերը նույն խնդիրը դիտարկում է իշխանության բաժանման կամ բազմաթիվ մեծամասնությունների մոտեցման տեսանկյունից: Այս տեսությունը հիմնվում է այն գաղափարի վրա, որի համաձայն՝ երբ իշխանությունը կենտրոնացած է փոքրաթիվ անձանց ձեռքերում, ապա այդ դեպքում տարանջատված հասարակություններում կոնֆլիկտի կառավարումը դառնում է շատ ավելի բարդ խնդիր:[240] Այս իրողությունը կարելի է տեսնել ադրբեջանական հասարակության դեպքում, երբ իրական քաղաքական իշխանությունը ամբողջությամբ կենտրոնացած է մեկ իշխող ընտանիքի ձեռքերում: Հետևապես՝ Ադրբեջանում ներքին կոնֆլիկտների հաղթահարումը շարունակում է մնալ լրջագույն խնդիր:

Մեկ այլ հետազոտող Պապաջիանին պնդում է, որ կոնֆլիկտների կառավարման գործում մեծ ներդրում կարող են ունենալ հասարակական կազմակերպությունները, որոնք ստեղծում են հաղորդակցության

---

[239]Khidasheli T. *Federalism and Consociationalism. Perspectives for Georgian State Reform/ in Book* "Federal Practice. Exploring alternatives for Georgia and Abkhazia" *Bruno Coppieters, David Darchiashvili and Natella Akaba (eds),* 1999, pp. 195-205.

[240] Wolff S., Yakinthou Ch. (eds.) *Conflict Management in Divided Societies: Theories and Practice,* Routledge, London, 2012, 284 p.

ուղիներ՝ դրանով իսկ նպաստելով կոնֆլիկտի կողմների միջև վստահության ամրապնդմանը:[241] Այս առումով ևս Ադրբեջանում քաղաքացիական կազմակերպությունները ենթարկվում են բազմապիսի ճնշումների, ինչը կրկին փաստում է էթնոկենտրոն ավտորիտար վարչակարգի կոնսոլիդացումը: Վրաստանի պարագայում խնդիրն ավելի մեղմ է, քանի որ հասարակական կազմակերպությունները գործառնում են բավարար արդյունավետությամբ:

Եթե կոնֆլիկտի կառավարման նպատակը ինստիտուցիոնալ մեխանիզմների որոնումը կամ դրանց աջակցություն ցուցաբերելն է, ապա այս դեպքում առկա են ավելի շատ ազդակներ, որպեսզի կոնֆլիկտող կողմերը հետևեն քաղաքական կանոններին, այլ ոչ թե կրկին վերադառնան բռնությանը իրենց անհամատեղելի նպատակների պատճառով:[242] Սակայն հարկ է նկատել, որ այս իրողությունները կարող են տարբերվել առանձին դեպքերում, քանի որ յուրաքանչյուր կոնֆլիկտ ունի որոշակի յուրահատկություն:

Տարանջատված հասարակություններում բացի կոնֆլիկտի կառավարման ինստիտուցիոնալ մոտեցումներից շատ կարևոր է նաև հաշվի առնել մարդկային պահանջունքների անտեսման խնդիրը, քանի որ այդ պահանջների իրացումը, ինչպես նշում են Է. Ազարը[243] և Ջ. Բարթոնը[244], վճռորոշ նշանակություն կարող են ունենալ տարանջատված հասարակություններում կոնֆլիկտի կառավարման համար:

Չնայած կոնֆլիկտների հաղթահարման ինստիտուցիոնալ մոտեցումներին՝ շատ կարևոր է կոնֆլիկտի կառավարման գործընթացում հաշվի առնել մշակութային առանձնահատկությունները, որոնք հիմնականում ներառում են համապատասխան խմբերի ոչ քաղաքական

---

[241] Kewir Kiven J. *Conflict Management in Divided Societies: Theories and Practice* / book review, Journal of Conflict Transformation & Security, London, 2012, pp. 136-138.

[242] Wolff S., Yakinthou Ch. (eds.) ...., 284 p.

[243] Azar E., *Management of Protracted Social Conflict: Theory and Cases*. Aldershot, Dartmouth, 1990.

[244] Burton J., ed., *Conflict: Human Needs Theory*. Conflict Series Vol. 2, Macmillan, London, 1990.

պահանջմունքները:

Շատ հետազոտողներ շեշտադրում են տարանջատված հասարակություններում բացառապես կոնֆլիկտի կարգավորման կամ դրա կերպափոխման հարցերը: Սա հիմնականում պայմանավորված է այն բանով, որ կոնֆլիկտի կառավարումը ավանդաբար նույնացվում է կոնֆլիկտի զսպման հետ:[245]

Եվ այսպես՝ հարավ-կովկասյան բազմական հասարակություն ունեցող երկրներում՝ Ադրբեջանում և Վրաստանում, տեսականորեն առկա են ժողովրդավարության կոնսոցիատիվ մոդելի գործադրման համար անհրաժեշտ ձևական բոլոր տարրերը: Ե՛վ վրացական, և՛ ադրբեջանական հասարակություններում առկա են էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլ սեգմենտային տարբերություններ, ինչպես նաև նկատվում են էթնոկենտրոնության տարրեր, որոնք արտոնյալ պայմաններ են ստեղծում գերակա էթնիկ խմբերի կողմից մյուսների նկատմամբ ազդեցություն ապահովելու հարցում: Այդ երկրներում կարելի է նկատել Լեյփհարթի կողմից առանձնացված կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ կիրառության որոշ նպաստավոր գործոններ ևս, ինչպիսիք են՝ բնակչության ոչ մեծ թիվը և սեգմենտների աշխարհագրական կենտրոնացվածությունը: Այս գործոնները կոնսոցիատիվ խոսույթի հետզհետե գործածման և ամրապնդման պայմաններում կարող են նպաստել քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, քանի որ դրանք հավելյալ ներուժ են ստեղծում, որպեսզի սեգմենտները ձգտեն համընդհանուր նպատակի: Այս պարագայում որպես համընդհանուր նպատակ կարող է ծառայել անվտանգությունը, հակառակ դեպքում գերակա էթնոսները մշտապես ձգտելու են գերիշխանության՝ պարտադրելով իրենց տիրապետող քաղաքական մշակույթը: Իսկ ենթակա էթնոսները՝ որպես ենթամշակույթներ, իրենց հերթին փորձելու են

[245] Hamad, A. *The Reconceptualisation of Conflict Management*. Peace, Conflict and Development: An Interdisciplinary Journal, Vol. 7, 2005 available from http://www.peacestudiesjournal.org.uk. (30.03.2017).

ամեն կերպ հակազդել, դիմակայել, զսպել գերակա էթնոսի կողմից իրենց ուղղված տարատեսակ սպառնալիքները, ինչը մշտապես ստեղծելու է կոնֆլիկտածին իրավիճակներ: Այսկերպ գործընթացները կարող են խորացնել ներքին ճգնաժամը, գերակա էթնոսի առավելությունը պահպանելու նպատակով հանգեցնել խոր ավտորիտար, էթնոկրատական վարչակարգերի արմատավորմանը: Սակայն ուժի միջոցով հնարավոր չէ տևականորեն զսպել այլ սեգմենտների ինքնիրացման բնական պահանջմունքը: Իսկ բռնությունը անկայունության և անվտանգության մշտական սպառնալիքներ կարող է ստեղծել, այսինքն՝ այնպիսի իրավիճակ, ինչպիսին այսօր որոշ տարբերություններով դրսևորվում է հարավ-կովկասյան բազմական պետություններում: Ուստի՝ հարավ-կովկասյան բազմական պետություններում քաղաքացիական մշակույթի ձևավորման միջոցով կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ գործադրման հավանականությունը կարող է բարձրանալ և հիմք դառնալ կայուն ժողովրդավարական քաղաքական մշակույթի ձևավորման համար, որի դեպքում ներհասարակական կոնֆլիկտների հաղթահարումը և անվտանգության ապահովումը կլինեն ավելի արդյունավետ:

Եզրակացություն

Հետազոտելով հարավ-կովկասյան բազմական պետություններում քաղաքացիական մշակույթի ձևավորման միջոցով կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի գործադրման հարցը՝ հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացություններին՝

- Ուսումնասիրելով քաղաքական կայունության և քաղաքական մշակույթի փոխհարաբերակցության խնդիրը հարավ-կովկասյան բազմական պետություններում՝ հիմնավորվել է, որ քաղաքացիական մշակույթի առավելությունը ժողովրդավարական ինքնակարգավորվող համակարգ ստեղծելու կարողությունն է: Ժողովրդավարացման հիմքում ընկած է հասարակությունների մշակութային ներուժը, ինչը հիմք է հանդիսանում տվյալ գործընթացի արդյունավետության համար: Այս առումով Ադրբեջանը և Վրաստանը, լինելով բազմական հասարակական կառուցվածք ունեցող պետություններ, քաղաքացիական մշակույթի ձևավորման և ժողովրդավարացման գործում ունեն զգալի դժվարություններ, ինչը հանգեցնում է նաև քաղաքական անկայունության, որի հաղթահարման պարագայում է միայն հնարավոր արդյունավետ ժողովրդավարության մոդելի ներդրումը, ինչպիսին կարող է լինել կոնսոցիատիվ ժողովրդավարությունը: Հետևապես՝ հաշվի առնելով նաև տեղական մշակութային առանձնահատկությունները՝ կոնսոցիատիվ խոսույթի գործադրումն այս պետություններում կարող է կարևոր գործոն դառնալ ժողովրդավարացման հաջող ընթացք ապահովելու համար: Այսպիսի խոսույթը կարող է նաև նպաստել հասարակության տարբեր սեգմենտների միջև առկա սոցիալական կոնֆլիկտների հաղթահարմանը, որի դեպքում քաղաքացիական մշակույթի ձևավորման հեռանկարը կդառնա ավելի իրատեսական՝ դրանով իսկ մյուս էթնիկ սեգմենտների համար ստեղծելով ինքնության անվտանգության հավելյալ երաշխիքներ:
- Հետազոտելով հարավ-կովկասյան բազմական հասարակություններում էթնոկրատական դրսևորումները՝ հիմնավորվել է, որ Ադրբեջանում և Վրաստանում որոշակի տարբերություններով հաս-

տատված էթնոկրատական և էթնիկ ժողովրդավարության մոդելների պարագայում ոչ գերակա էթնիկ խմբերի շահերը դե ֆակտո ճնշվում են գերակա էթնիկ խմբերի կողմից: Այսպիսի իրավիճակը ստեղծում է ժողովրդավարացման պատրանք, ինչը բացատրվում է անցումային փուլում գտնվելու հանգամանքով: Ադրբեջանի պարագայում խնդիրը շատ ավելի բարդ է, քան Վրաստանի դեպքում, քանի որ վրաց հասարակությունը վերջին տարիներին արձանագրել է ժողովրդավարության որոշակի աճ: Իսկ Ադրբեջանում շարունակաբար նկատվում է հետևողական հետընթաց դեպի էթնիկ ավտորիտարիզմ: Հետևապես՝ Հարավային Կովկասի բազմական պետություններում քաղաքական մշակույթի արդիականացման նախապայմանով ոչ ժողովրդավարականից դեպի ժողովրդավարություն անցման արդյունավետ ուղի կարող է լինել կոնսոցիատիվ ժողովրդավարությունը, որն ի սկզբանե մերժում է որևէ էթնիկ խմբի գերակայությունը այլ էթնոսների նկատմամբ, ինչը՝ որպես իրավահավասարություն, դասական ժողովրդավարության պարտադիր սկզբունքներից է:

- Դիտարկելով մշակութային ռելյատիվիզմը որպես էթնոցենտրիզմի հաղթահարման միջոց՝ հիմնավորվել է, որ առաջինը, հաշվի առնելով բազմական հասարակության սեգմենտների մշակութային առանձնահատկությունները, ինչպես ցույց է տալիս Նիդերլանդների, Բելգիայի և այլ բազմական պետությունների փորձը, ունակ է բազմական պետություններում ստեղծել ժողովրդավարացման իրական հնարավորություն կոնսոցիատիվ մոդելի հիման վրա: Այս մոտեցումը կարող է կիրառելի լինել հարավ-կովկասյան բազմական պետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի համար այն դեպքում, երբ քաղաքացիական մշակույթի կառուցումը, թեկուզ, դանդաղ տեմպերով, կգրանցի դրական արդյունքներ: Այս դեպքում մշակութային ռելյատիվիզմի միջոցով էթնոցենտրիզմի հաղթահարումը հարավ-կովկասյան բազմական պետություններում կարող է դառնալ քաղաքական կայունության, ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնուրույնության և անվտանգության, ինչպես նաև ժողովրդավարական առաջընթացի կարևորագույն նախապայմաններից մեկը:

- Դիտարկելով կոնսոցիատիվ մոդելը որպես այլընտրանքային ժողովրդավարություն՝ հիմնավորվել է, որ հարավ-կովկասյան բազմական հասարակական կառուցվածք ունեցող երկրներում՝ Ադրբեջանում և Վրաստանում, տեսականորեն առկա են ժողովրդավարության կոնսոցիատիվ մոդելի գործադրման համար անհրաժեշտ ձևական բոլոր տարրերը: Ե՛վ վրացական, և՛ ադրբեջանական հասարակություններում առկա են էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլ սեգմենտային տարբերություններ, ինչպես նաև նկատվում են էթնոկենտրոնության տարրեր, որոնք արտոնյալ պայմաններ են ստեղծում գերակա էթնիկ խմբերի կողմից մյուսների նկատմամբ ազդեցություն ապահովելու հարցում: Այդ երկրներում կարելի է նկատել Լեյփհարթի կողմից առանձնացված կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ կիրառության որոշ նպաստավոր գործոններ ևս, ինչպիսիք են՝ բնակչության ոչ մեծ թիվը և սեգմենտների աշխարհագրական կենտրոնացվածությունը: Այս գործոնները, սակայն, կոնսոցիատիվ խոսույթի հետզհետե գործածման և ամրապնդման պայմաններում է, որ կարող են նպաստել քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, քանի որ դրանք հավելյալ ներուժ են ստեղծում, որպեսզի սեգմենտները ձգտեն համընդհանուր նպատակի: Այս պարագայում որպես համընդհանուր նպատակ կարող է ծառայել անվտանգությունը, հակառակ դեպքում գերակա էթնոսները մշտապես ձգտելու են գերիշխանության՝ պարտադրելով իրենց տիրապետող քաղաքական մշակույթը: Իսկ ենթակա էթնոսները՝ որպես ենթամշակույթներ, իրենց հերթին փորձելու են ամեն կերպ հակազդել, դիմակայել, զսպել գերակա էթնոսի կողմից իրենց ուղղված տարատեսակ սպառնալիքները, ինչը մշտապես ստեղծելու է կոնֆլիկտածին իրավիճակներ: Այսկերպ գործընթացները կարող են խորացնել ներքին ճգնաժամը, գերակա էթնոսի առավելությունը պահպանելու նպատակով հանգեցնել ավտորիտար, էթնոկրատական վարչակարգերի արմատավորմանը: Սակայն ուժի միջոցով հնարավոր չէ տևականորեն զսպել այլ սեգմենտների ինքնիրացման բնական պահանջմունքը: Իսկ բռնությունը անկայունության և անվտանգության մշտական

սպառնալիքներ կարող է ստեղծել, այսինքն՝ այնպիսի իրավիճակ, ինչպիսին այսօր որոշ տարբերություններով դրսևորվում է հարավ-կովկասյան բազմական պետություններում: Ուստի՝ հարավ-կովկասյան բազմական պետություններում քաղաքացիական մշակույթի ձևավորման միջոցով կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ գործադրման հավանականությունը կարող է բարձրանալ և հիմք դառնալ կայուն ժողովրդավարության ձևավորման համար, որի դեպքում ներհասարակական կոնֆլիկտների հաղթահարումը և անվտանգության ապահովումը կլինեն ավելի արդյունավետ: Հարավ-կովկասյան բազմական պետություններում քաղաքացիական մշակույթի կառուցմանն ուղղված հստակ և նպատակային քայլերը կարող են կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ կիրառության հնարավորությունը դարձնել իրատեսական:

THE NEED FOR CIVIC CULTURE TO IMPLEMENT CONSOCIATIONAL DEMOCRACY MODEL IN SOUTH CAUCASUS PLURAL STATES

EMIL ORDUKHANYAN

Abstract

The South Caucasus region is quite diverse in its cultural, ethnic, civilization, religious and social structure. At the same time after the collapse of the Soviet Union, emerged numerous internal conflicts significantly hindered the democratization process in the region. The quarter-century post-Soviet experience shows that with some differences mainly pseudo-democratic or even autocratic regimes are established in South Caucasus countries. Many researches affirm that in plural societies of Azerbaijan and Georgia ethnocratic elements are also observed. In these countries the influence of dominant ethnic groups over other ethnicities not explicitly are encouraged by authorities. Local researchers often explain this situation by the transitional period. However, other numerous studies show that in these countries ethnic-based governments aspire to be strengthened. Therefore, these countries could not lead to a fully democratic transition, and in result, they will be able to build ethnic democracies or authoritarian regimes. In this case, the cultural, religious and linguistic identity of subordinate ethnicities will be in danger. To prevent such possible developments, we explore the cultural relativism as opposition to the ethnocentrism. The cultural relativism treats all ethnic segments of the same plural society as equal. And in this case, the most relevant model of democracy can be the consociational model which continues to be successfully used for decades in many plural European states such as Netherlands, Belgium, Northern Ireland etc.

We argue that in South Caucasus plural states the consociational discourse can be a real tool to build a democratic political culture. As a

universal objective, the consociational discourse tends to create guarantees of equality and security for all segments in South Caucasus plural states. Only on the base of civic culture development, the consociational democracy model implementation can be efficient.

ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Շիրինյան Լևոն, Սուքիասյան Հայկ, Օրդուխանյան Էմիլ

INSTITUTE OF PHILOSOPHY, SOCIOLOGY AND LAW OF NAS RA

SOUTH CAUCASUS IN THE CONTEXT OF CONSOCIATIONAL DEMOCRACY

Shirinyan Levon, Sukiasyan Hayk, Ordukhanyan Emil

ИНСТИТУТ ФИЛОСОФИИ, СОЦИОЛОГИИ Н ПРАВА НАН РА

ЮЖНЫЙ КАВКАЗ В КОНТЕКСТЕ КОНСОЦИАТИВНОЙ ДЕМОКРАТИИ

Ширинян Левон, Сукиасян Айк, Ордуханян Эмиль

LIMUSH PRINTHOUSE

Չափսը՝ 60x84 1/16, թուղթ օֆսեթ N 1:
Ծավալ՝ 8.5 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 120:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ ՍՊԸ»-ի տպարանում:
ք.Երևան, Դ.Մալյան 45:
հեռ.՝ 010 62-22-20, E-mail: info@limush.am